


ՀՀ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՇԻՐԱԿԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ



ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ

ՎԵՑԵՐՈՐԴ

ԳԻՏԱԿԱՆ ՆԱՏԱԾՐՁԱՆԻ

ՆՅՈՒԹԵՐ

Գյումրի
2004

Հրատարակության հովանակորն է՝
Գերաշնորհ Հ. ՆԵՐՍԵՍ արքեպիսկոպոս ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆ,
Առաջնորդ Կաթողիկե Հայոց
Հայաստանի, Վրաստամի և Արևելյան Եկեղեցայի,
անդամ Մք. Դազարի Հայկական Ակադեմիայի

Խմբագրական հանձնախումբ՝
Սերգո Հայրապետյան (Խմբագիր)
Արամ Քալանթարյան
Համագստպ Խաչատրյան

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ծիրակի հոգևոր և նյութական հարուստ մշակույթը վաղուց ի վեր հայագիտության ուսումնասիրության առարկան է: Երախտապարտ խոնարհումով ու ակնածանքով միայն կարելի է հճչեցնել մեր գիտության ու մշակույթի այն բազմաթիվ մշակների անունները, ովքեր իրենց ներդրումն են ունեցել պատմական Ծիրակ գավառի ճարտարապետական, քաղաքաշինական, հնագիտական, երաժշտական ու մշակութային այլ կրողների, ազգագրական նաև անունների՝ աշխարհին ներկայացնան գործում:

Այսօր էլ հայագիտության այս արահետով՝ շիրակագիտության բնագավառը նույնանութեան է ու մարդաշատ: Միայն վերջին կես դարի ընթացքում ավելի քան երեք տասնյակ դրկտորական և թեկնածուական աւտենախոսություններ, տասնյակ մենագրություններ ու ժողովածուներ են իրատարակվել՝ նվիրված Ծիրակին: Խակ վերջին տասը տարիներին Ծիրակն ուսումնասիրութեան ունեցան երկու տարին մեկ Ծիրակի սրտում՝ Գյումրիում, պարբերաբար հանդիպելու իրենց արածի շուրջ կիսվելու, հադորվելու, բանավիճելու և իրարու հարստանալու մի այնպիսի հոյակապ հնարավորություն, ինչպիսին, ցավոք, այսօր չկա Հայաստանի որևէ այլ մարզում և ինչպիսին են, մեր խորին հանողմանք, Ծիրակի պատմամշակութային ժառանգությանը նվիրված և իրենց նախադեպը չունեցող հանրապետական գլուխական նատաշրջանները, որ օրինավելի ավանդապահությամբ գումարվում են Գյումրիում արդեն տասը տարի:

1994 թվական, արենաբոր վերքի նման կիսաքանդ ու լրված աշնանային քաղաք, ցուրտ ու մուր իրականություն, ծանր ու անլուծելի հիմնախնդիրներ, և համեսկարծ այս ամենին մեջ մի փոքր խումբ երիտասարդ գիտնականների՝ Ծիրակին նվիրված հանրապետական գիտաժողով կազմակերպելու մտադրություն, որը ոչ քեզ մի քանի տարգուխ ջահելների այսրպանական և ոչնչով չիմնավորված խանդավառություն էր, որ առաջին խակ դժվարության արգելիքն հանդիպելով պիտի հօդս ցնելեր, այլ միանգամայն կշռադատված և, ինչպես հետուն ցույց տվեց, նաև միանգամայն արդարացված ու անհրաժեշտ երևույթ: Օդի ու ջրի նման անհրաժեշտ ոչ միայն ինքնայրուրնամ ու ինքնահսստատնամ համար, այլև որ առավել կարևոր էր՝ մի կողմից փաստելու համար, որ կա կենցաղայինից, առօրյականից շատ ավելի վեր մի քան մորք ու հոգու փոքրություն աշխարհը, որի մշակները մենք ենք՝ գիտության մարդիկս: Մյուս կողմից՝ Ծիրակն իր անսպառ պատմամշակութային զանձներով անընդմեջ պահել հայագիտության աշքի առջև՝ նպաստելով դրանց մերօրյա ուսումնասիրության խրանմանը:

Սպասելիքներն ավելի քան արդարացան, առաջին խակ գիտաժողովին մասնակից եղան 100-ից ավելի հայագետներ, ոմանք անթաքույց զգուշավորությամբ, նույնիսկ թերահավաստությամբ: Սակայն արդյունքը գե-

րազանցեց կազմակերպաշխների բոլոր սպասելիքները: Ե՛վ ասելիքն էր շատ, և տպավիրություններն էին հարուստ: Եվ որ պակաս կարևոր չ' նաև ամրագրվեց գիտաժողովն ավանդական դարձնելու և երկու տարին մեկ Գյումրիում կայացնելու որոշում:

1996-ին գումարվեց երկրորդը, ավելի ներկայացուցչականը, որ բացահայտելով մարզում հայագիտական հետազոտությունների մակարդակը և տեղի գիտական ներուժի իրական հնարավորությունները՝ նաև մեծապես նպաստեց 1997-ի աշնանը Գյումրիում Գիտությունների ազգային ակադեմիայի Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ստեղծմանը:

Հաջորդ երեք գիտաժողովները մի կողմից հանրագումարեցին հետադաշտյան շրջանում Շիրակի հոգևոր և նյութական մասունքների ուսումնասիրությունների արդյունքները մեր երկրում, մյուս կողմից՝ նպաստեցին հստակեցնելու այդ հետազոտությունների հիմնական ուղղությունները նոր՝ 21-րդ դարի շնմին:

Այս գիտաժողովների արդյունավետության խոսուն վկայությունն է այն, որ ընդհանուր առմամբ նախորդ հինգ նատաշրջաններում լավել են 290 գիտական հաղորդումներ, որոնցից շատերն ուղեկցվել են նյութերի ու նմուշների ցուցադրումներով, կատարումներով: Այդ հաղորդումներից մոտ 65-ը նվիրված են Շիրակի հնագիտական հուշարձանների (Շիրակավան, Դասմանակերտ, Բենիամին, Հառիճ, Հայկաձոր, Սարաստակ, Ամբերդ, Հողմիկ, Կոմայրի, Երերոյ) ուսումնասիրությանը, 90-ից ավելի գեկուցումներ են հնչել ազգագրական խնդիրների շուրջ (արհեստներ, ծխապաշտամունքային համակարգ, կենցաղ, ավանդույթներ, սովորություններ և այլն), Շիրակի տարբեր ժամանակների պատմության կնճռուու հարցեր են լուսաբանվել ավելի քան 35 հաղորդումներում, անկրկնելի ճարտարապետական կորոբների ըննությանն են նվիրված եղել շուրջ 20, արվեստի տարբեր ճյուղերին՝ 25 գեկուցումներ, բազմաթիվ հաղորդումներ են նվիրվել լեզվական, մարդաբանական, ազգահոգերանական, սոցիոլոգիական հետազոտությունների արդիական խնդիրներին:

Այս տասը տարիների ընթացքում ամեն ինչ եղել է՝ խանդավառության, հայարտության, արած լավ գործի գիտակցումից, երբեմն նաև անօգնականության, մեկ-մեկ էլ նույնիսկ կիասքափության պահեր: Անփոխարիների զգացողություններ, որ այս գիտաժողովների տասնամյա կենսագրության իրական վկաներն են: Եվ ինչպես անցած բոլոր տարիներին, այսօր էլ հայագիտական ֆորումի կազմակերպիչները մենակ չեն և ունեն իրենց մշտական բարեկամների՝ Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության, Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի հոգևոր թեմի առաջնորդարանի, Շիրակի մարզպետարանի, Հայ Կարողիկե եկեղեցու, նաև անհատ բարեգործների աջակցությունը:

Բարի երթ ու արդյունավետ աշխատանք մաղթենք Ծիրակի պատմա-մշակութային ծառանությանը նվիրված հանրապետական վեցերորդ գի-տական նստաշրջանին, որ խնդիր ունի հայտածելու պատմական զավա-ռի ազգագրության, բանահյուսության, հնագիտության, ճարտարապետու-թյան, քարրառազիտական ու էթն-սոցիոլոգիական հետազոտությունների արդի նակարդակը և դրանով իր նպաստը բերելու նախորդ գիտաժողովից հետո անցած երկու տարիների ընթացքում շիրակագիտական մտքի ձեռք-բերումների համակարգմանը:

ԳԱԱ Ծիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի տնօրեն, ՇՊՄԾ IV հանրապետական գիտական նստաշրջանի կազմ-հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐՏԱԿ ԳՆՈՒՆԻ (ՀԱԻ)

ՎԱԴ ԲՐՈՆՅԱՌ ԴԱՐՈՒՄ ՃՐԱԿԻ, ԶԱՎԱԽԵՐ, ՏԱՅԵՐ ԲՆԱԿԱՐԱՍԱՇԻՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՐԳԱՅՍՍՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՃՈՒՋ

Մ.թ. Խ-Ա հազ. Ծիրակի, Զավախրի և Տայրի տարածաշրջան-ներ ընդգրկված էին շննդավայրան մշակույթի տիրույթում: Գոյատևելով մշակույթի ընդհանուր զարգացման համատեքստում Ծիրակի, Զավախրի և Տայրի տարածաշրջանների վաղ բրոնզն ուներ իր որոշակի յարահատկույթունները, որոնք արտահայտվում էին նաև քննակարանաշինության ավանդույթներում: Սահմանական, այստեղ վաղ բրոնզի դարաշրջանում գերակշռություն էր ուղղանկյուն ճարտարապետությունը:

Ծիրակի հնավայրերում հաստատագրված են մեկ սենյականոց (Հառիծ, Կառնուտ, Գորներ, Ամասիա, Լանջիկ, Սղնախսների թիվ 1 կացարան) և բազմանմանականոց համալիրներ (Սղնախսներ, Կառնուտ, Ծիրակավան): Հատկանշական է, որ Սղնախսներ բնակավայրի թիվ 2 կացարանում արձանագրվում է տարբեր գործառական նշանակություն ունեցող սենյակների առկայությունը: Կացարանների հատկանշական գծերից էին ծփսական կամ տնտեսական անկյունները (Կառնուտ, Ծիրակավան), հատակի մեջ փորված հորիզոն (Հառիծ), նատարան-մաստարանները (Սղնախսների թիվ 2 կացարան, Ծիրակավան): Սղնախսների թիվ 2 կացարանում հաստատագրված է նաև սենյակի կենտրոնում տեղադրված նստարան: Նմանատիպ նստարաններ հայտնի են Սղնիրարդուրից և Յանիկ-թեփեից: Հարևան տարածաշրջաններում ուղղանկյուն երկսենյականոց հատակագծով կացարաններ հաստատագրված են Լոռուտում, ընդ որում, ըստ Ս. Դմեջյանի, խեցեղեն նյութը համաժամանակյա է Սղնիրարդուրի սոորին եղրիզոնների նյութերին: Վաղ բրոնզի եղրափակիչ շրջանում ուղղանկյուն հատակագծով կացարաններ հաստատագրված են նաև Հայաստանի հյուսիսարևելյան շրջաններում (Հակեման Ա և Պ):

Զավախրում ուղղանկյուն ճարտարապետությամբ կացարաններ հաստատագրված են Ամբրամիս-Գորա, Ախալքալաքի Ամիրամիս-Գորա, Դիգաշենի I, Սատիս, Ռարարի, Արասրումանի բնակավայրերում: Ծիրակի և Զավախրի հուշարձաններում արձանագրված են մի շարք զուգահեռներ, այդ թվում նաև խեցեղեն նյութում, կացարանների ներքին հարդարանքի մեջ (հատակի մեջ փորված օջախները, հետին պատի մոտ տեղադրված նստարանները): Սակայն զավախրյան բնակավայրերի ճարտարապետությունն ունի որոշակի առանձնահատկություններ: Սահմանակուրապես Ամիրամիս-Գորայի կացարաններում հաստատագրված են պատերին հպված սյուների հետքեր: Սիրայն մեկ (XIII) կացարանի կենտրոնում հաստատագրված քարե սանդղը, ըստ S. Չուրինիշվլիու, կարող էր հանդիսանալ կենտրոնական սյան խարիսխ: Բացի դրանից ըստ Ա. Զա-

վախիշվիլու, Ամիրանիս-Գորայի կացարանների և մեկ հատկանշական գիծ են կորացող անկյունները: Կորացող անկյուններով քարաշեն կացարան հաստատագրված է նաև Սատին բնակավայրի B1 պեղավայրի C կացարանում: Ամիրանիս-Գորայի I շինարարական հորիզոնի խեցեղենը որոշ զուգահեռներ ունի Ծիդա-քարթիլում: Առանձնահաստկություններ են դիտարկվում նաև օջախների հենակների կերտվածքում: Ուղղանկյուն հատակագծով կացարաններն ի հայտ են զայխ նաև հարևան Ծիդա Քարթիլում (Ֆիխիս-Գորա բնակավայրի B1 և A հորիզոններ, որոնք քվագրվում են մ.թ.ա. XXII դ., երբ տարածաշրջանում գոյակցում էին շենգավթյան և բերենյան մշակույթները, Կվացինելերիի B, հորիզոնի աղյուսաշեն կառույցը՝ մ.թ.ա. III հազ. երկրորդ կես): Տարածաշրջանում ճարտարապետական ավանդույթների այսքան կտրուկ փոփոխությունը Զ. Մախարաձեն բացատրում է հարավից միջարացիոն գործընթացներով: Ուղղանկյուն հատակագծով կառույց հաստատագրված է նաև Խեցեղեն Ծղարու բնակավայրի A (ըստ Գ. Գորեջշվիլու) հորիզոնում, որը քվագրվում է մ.թ.ա. IV հազ. երկրորդ կեսով:

Բնակարանաշինական ավանդույթների զարգացման առավել բազմացած պատկեր ներկայացված է Տայքի տարածաշրջանում: Ուղղանկյուն հատակագծով կացարաններ հաստատագրված են Կարազ, Գյուղելովա, Պուլուր I բնակավայրերում: Կարազի կացարաններն իրենց զուգահեռներն ունեն Սու Հոյուքի վերին հորիզոններում և Բույուկ թեփեն Հոյուքում: Սու Հոյուքում հայտնաբերված են ուղղանկյուն աղյուսաշեն երկսենյակ կացարաններ, նման համաժամանակյա Ֆիխիս-Գորայի B1 հորիզոնի կառույցներին: Ընդ որում զուգահեռները դիտարկվում են նաև խեցեղեն նյութում: Բնակավայրի ստորին հորիզոններում արձանագրվում են շինարարական միանգամայն այլ ավանդույթներ: Վերևից երկրորդ և երրորդ հորիզոնները ներկայացված են ուղղանկյուն կորացված անկյուններով կյուսածո հիմնակմախրով: Սակայն, որ Սու Հոյուքի կացարանները որոշակիորեն տարրերվում են Ծիդա Քարթիլի և Եփրատի վերին ավազանի նմանատիպ կառույցներից (քարե հիմք, հետին պատին կցված նստարանը, ստացիոնար քարե օջախը): Բացի դրանից՝ Սու Հոյուքում նախամուտքերը ոչ միշտ են զոնվում կացարանի առջևում: Ծեփած հիմնակմախրով կացարանի քարե հիմք արձանագրված է քվեն քարք-լյան Բլրո բնակավայրում: Սու Հոյուքի ստորին հորիզոնի ճարտարապետությունը ներկայացված է կյոր հատակագծով կացարանով, որն իր հորինվածքով հիշեցնում է «8» թիվը: Այս նկարագրված հատակագիծը նմանվում է մ.թ.ա. XXIX-XXVII դդ. քվագրվող Բույուք թեփեն Հոյուք քանակավայրի կյոր միակցված կացարանների հատակագծին: Ըստ Ա. Սագոնայի՝ խեցեղեն նյութն ունի իր զուգահեռները Սիմբարդիուրի ստորին, Պուլուրի XI-IX և Գեղյ-թեփի Կ1 հորիզոններում: Հատկանշական է, որ ըստ նրա՝ խեցեղեն նյութն ունի բազմաթիվ զուգահեռներ ուղղանկյուն ճարտա-

բապետությամբ բնորոշվող Կարազի ստորին հորիզոնների խեցեղենի հետ: Նման հատակագիծ ունեն նաև Թեքրի Ծղարոյի, Արսամանեկի և ՎԻՇ 2 հորիզոնի (մ.թ.ա. XXV դ.) կացարանները: Տայրի հուշարձաններն ունեն բազմաթիվ զուգահեռներ Ծիրակի և Զավախչի հնավայրերում: Դա մասնավորապես օջախների ֆալատիպ և մարդակերպ երաստներն են, որոնք արձանագրված են Հատիճում: Հատկանշական է, որ, բայ որոշ հետազոտողների, ինչպես Տայրը, այնպես էլ Ծիրակը պղինձ էին ստանում Մուրգով-Կովարշանյան հանքային դաշտում տեղադրված հանքերից: Այսպիսով, ուսումնասիրվող տարածաշրջանների բնակարանաշինույթան ավանդույթները կացարանների ճարտարապետությունը, ներքին հարդարանքը, ունեն բազմաթիվ բնդիանություններ, որոնք դիտարկվում են նաև խեցեղեն նյութում: Միաժամանակ արձանագրվում են ակտիվ փոխառնություններ հարևան տարածաշրջանների հետ (Վերին Եփրատ, Թունըր, Գուգարք, Ջվեմո Ջարթի, Ծիրա Ջարթի): Պետք է նշել, որ ուղղանկյուն կացարանաշինությունը հասուլ է այդ տարածաշրջանին, քանի որ ուղղանկյուն ճարտարապետությամբ բնորոշվող որոշ հուշարձանները թվագրվում են շենքավթյան մշակույթի վաղ փուլերով (Կարազի և Ամրանի-Գորայի ստորին հորիզոններ, Հառիճի վաղ համալիրներ): Միևնույն ժամանակ այլ ճարտարապետությամբ բնորոշվող հուշարձանները (*Սու Հոյուրի և Բույուկ-Քեփի Հոյուրի վաղ հորիզոններ*) գտնվում են ուսումնասիրվող տարածաշրջանի ծայրամասում:

ԼԱՐԻՍԱ ԵԳԱՆՅԱՆ (ԾՀՀԿ, ԾԵԹ)

ՍԵՊԱՍԱՐԻ ՎԱՂ ԲՐՈՆԶԻԿԱՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՊԵՂՈՒԽՆԵՐԸ

1980-ական թվականներին Դուկայանի շրջանում Սեծ Մեպասար սարի (բարձր. 2081մ) գագարին մերձակա զյուղերի դաշտերի ոռոգումն ապահովելու համար կառուցվել է ջրամքար: Ջրամքարի ավագանը կառուցելու և ջրատար խողովակները տեղադրելու համար իրականացված շինարարական աշխատանքների ժամանակ ավերվել է հնավայրի մի մասը:

1998թ. այստեղ իրականացված հնագիտական հետախուզության ժամանակ ավերված տարածքից հավաքվել են խեցեղենի բազմաթիվ բեկորներ, որոնք վերաբերում են մ.թ.ա. III հազարամյակին (նկ. 1): Ինչպես այն ժամանակ ցոյց տվեց տեղանքի և հարող տարածքների զննությունը, սարի լանջերին, մակերեսին ընթերցվում էին կառույցներ քարաշար պատերի հետքեր, իսկ վորք-ինչ հեռու գտնվող Փոքր Մեպասար սարի գագարին (բարձր. 2053 մ) պահպանվել են կիկլոպյան ամրոցի մնացորդներ:

2004թ. ԾԵԺ հնագիտական արշավախումբը Հայաստանի, Վրաստանի և Արևելյան Եվրոպայի հայ կարողիկե եկեղեցու առաջնորդ, արքեպիսկոպոս Ներսես Տեր-Ներսեսյանի հատկացրած անձնական միջոցներով սկսեց Մեծ Սեպասարի հնավայրի պեղումները:

Աշխատանքները ծավալվեցին երեք տարրեր հատվածներում.

ա. Նախ պեղվեց ավերված տարածքը, որը բացվեց ուղղանկյուն կացարանի պահպանված հատվածը՝ հյուսիս-հարավ ուղիղ մի պատ՝ հարավարևմտյան անկյունով։ Պատիճ գուգահեռ դրված մաստարայի վրա գոնզված սև արտաքինով և կարմիր աստառով զավաքի բեկորները վկայում են կատույցի մ.թ.ա. III հազարամյակին պատկանելը։ Մաստարայի տակ բացվեց տափանված հատակ՝ մ.թ.ա. III հազարամյակի առաջին փուլին վերաբերող խոյազարդ ճախչերով

M 1:3 cm

Նկ. 1

լայնարձերան ամսորի բեկորներ, բրոնզյա ականջօող և այլ իրեր։

բ. Հուշարձանի շերտագրությունը պարզեցր համար սարի հարավային լանջին դրվեց ստուգորդական մեկ փոտորակ։

գ. Սուտոգորդական փոտորակ դրվեց սարի զագարին։ Բացվեցին իրար վրա նստած տարրեր ժամանակաշրջանների պատեր՝ վաղ բրոնզից մինչև միջնադար։


դ. Պեղվեց արտաքուստ մանր քարերի շարվածքով եզերված, շրջանաձև կացարաններից մեկը. բացվեց վաղ բրոնզի ժամանակաշրջանով բվագրվող շրջանաձև կացարան՝ հատակին տափակ, լայն նստուկով, ուղիղ պատերով մեծ ամանի մեջ տարրեր ամանների բեկորներ՝ բրոնզ էլ հարք շարված։ Կացարանը միջնադարում վերակառուցվել և բնակեցվել է սալապատ հատակի տակ բողնելով պեղվի վաղ կառույցի մնացորդները։ Ներսից շարվել են նոր պատեր, որոնք փոքրացրել են տարածքը և պահպանելով նախորդ պատերը՝ ավելի հաստացրել և առավել ապահով դարձրել կառույցը։

Նախնական թվագրմամբ հուշարձանն ընդգրկում է վաղ բրոնզ և ուշ միջնադարի ժամանակահատվածները։

ԱՌՈՍ ՓԻԼԻՊՈՍՅԱՆ (ՀԱԻ)

ՃԻՐԱԿԱՎԱՆԻ ԱՐԵՂՆԵՐԻ ՈՒ ՆՐԱՆՑ Մ. ԹԱ. II - I ԸԱՐԱՄԱՍՅԱԿԱՆԵՐԻ ԶՈՒՎԱՇԵԽՆԵՐԸ

1. Հայաստանի տարածքում Բրոնզի-Երկարի պարբերաշրջաններում բնակված բազմաէթնիկ և տարակնեցաղ ցեղախմբերի սպառագինու-



- թյանն առնչվող իհմնախնդիրները քննարկելիս որոշակիորեն առանձ-նանում է արտեփաստերի մի ընդգրկուն հավաքածու, որն ուղակիորեն կապվամ է աղեղների ու ընդհանրապես նետածգության հետ և, այդ առունով, արժեքավոր փաստացի տեղեկատվություն է պարունակում դրանց կառուցվածքի, պատրաստման, արտադրին հարդարման, օգտագործման եղանակների, ինչպես նաև խնդրո առարկա զենքին վերացրվող ծիսահմայական պատկերացումների համակարգի մասին:
2. Այսոր ճեղքի տակ առկա հնագիտական գտածոները բույլ են տալիս արձանագրել, որ խնդրո առարկա զիհնատեսակը և կամ նրա առանձին բաղադրիչների մի մասը (հնատապաքներ, աղեղնալարի ամրացման ծայրակալներ, լիճերի կենտրոնացման ամրացվող՝ բոչնակերպ կամ երկջյուղուրտուն վերնամասերով և երկարուկ խորց-վերջույթներով հարմարանքներ, կապարձներ, վերջիններին կրման համար անհրաժեշտ կաշվե ուսափուկերի բրոնզե օրինակներ և այլն), Հայկական լեռնաշխարհում և հարակից տարածքներում արտեփաստերի մակարդակում վկայված են արդեն մ.թ.ա. IV հազ. II կեսից ու որպես ուստորության համար անհրաժեշտ սարք, մարտական զենք, ապա և մրցումների անցկացման միջոց պարբերաբար օգտագործվել են տեղում ընդիմուաց մինչև միջնադար: Ըստ որում, ինչպես հնագիտական գտածոները, այնպես և ժայռապատկերի, արծարել և ուկե զավարների, բրոնզե գրտինների, փորագրազարդ բիթեղների և այլ արտեփաստերի վրա պահպանված հորինվածքներն ու պատկերները բույլ են տալիս պնդել, որ Հայկական լեռնաշխարհի և հարակից տարածքների Բրոնզի-Երկարի պարբերաշրջանների տեղաբնիկներն օգտագործել են ինչպես պարզ(միալիճ, լայնալիճ), այնպես և քարդ (երկիճ, եռալիճ) կառուցվածք ունեցող աղեղներ:
3. Այս առունու առավել վաղ և երկար օգտագործված տեսակը միալիճ (լայնալիճ) աղեղներն են, որոնց փաստացի օրինակները թեև չեն պահպանվել տեղի մ.թ.ա. III-I հազ. հնագիտական համալիքներում, սակայն նրանց պատկերները վկայված են Գեղամա, Վարդեմիսի և Սյունիքի լեռների ժայռապատկերների, Քարաշամբի և Ամաշշի միջին բրոնզիդարյան արծարել զավարների, Հասանլուի մ.թ.ա. XI-XIIդդ. թվագրվող ոսկե սկալակի, Մամբավոյի մ.թ.ա. II հազ. կեսի -մ.թ.ա. I հազ. սկզբի բրոնզե գրտինների, ինչպես նաև Վանտոսափ (Ուրարտու) թագավորությանը վերաբերող կիրառական և դեկորատիվ արվեստի բազմաթիվ նմուշների (կապարձներ, սաղավարտներ, վահաններ, երեսպատման բիթեղներ, քարեզմարդաստուփեր և այլն) վրա: Ըստ որում, տեսարաններում ներկայացված մարդկանց և տարրեր առարկաների մաշտաբային համադրումներից կարելի է եզրակացնել, որ խնդրո առարկա զենքի չափերը տառանվել են =0.5-1.5մ-ի սահմաններում:
4. Ի տարրերություն վերը ներկայացված օրինակների՝ բաղադրյալ աղեղները ունեցել են ավելի կարծ կիրառություն և այսօրվա տվյալներով

հիմնականում տեղափորձում են Ուշ Բրոնզի-Վաղ Երկարի շրջափոլերի ժամանակային սահմաններում (մ.թ.ա. XV/XIV-IX-VIIIդդ.): Սրանց մեջ եղավի նմուշներ են Ծիրակավանի թիվ 44 և 48 ուշ բրոնզիդարյան դամբարաններից *in situ* հայտնաբերված, լավ պահպանվածություն ունեցող, բրոնզե զարդաօլակներով մեջբնդմեջ երեսապատված փայտե երկու աղեղները: Վերջիններս պատկանում են խնդրո առարկա զենքի երկինքաղորյալ տարրերակին և, ըստ ուղեկցող համապատասխան ճյութերի, պեղող հնագնտութեր Ռ. Թորոսյանի, Օ. Խնկիլյանի և Լ. Պետրոսյանի կողմից թվագրվել են մ.թ.ա. XIV-XIIIդդ: Դատելով թիվ 24 դամբարանի գույքակազմից՝ մեզ ավելի հավանական է թվում այդ համալիրի մ.թ.ա. XV-XIVդդ. թվագրումը: Ծիրակավանի աղեղներն ունեն ուղիղ զանգվածեղ միջնամաս և վերջինիս եզրից հավասարաչափ արտածվող զույգ լիճ-քններ, որոնցից յուրաքանչյուրն ավարտվում է աղեղնալպարի անցկացման համար հազցված բրոնզե ծայրապանակով: Թիվ 48 դամբարանից հայտնաբերված օրինակը լմերից յուրաքանչյուրի կենտրոնական օժուված է նաև երկճյուղ-ոլորտն վերնամաս և երկարուկ խրոց-վերջույթ ունեցող հարմարանքով: Երկճյուղ-ոլորտն և քոչնակերպ այդ հարմարանքներից գտնվել են Իրկանչայի (մ.թ.ա. XVII-XVIդդ), Լճաշենի (մ.թ.ա. XVդ.) և Լոռի բերդի (մ.թ.ա. XV-XIVդդ) դամբարանային համալիրներում, իսկ նոյնատիպ պատահական գոտածները վկայված են Սևանից և Հացառատից: Երկինք-բաղադրյալ աղեղների պատկերներ պահպանվել են նաև Աստղի բլուրի և Սանթրավորյի մ.թ.ա. I-II հազ. սահմանագծով թվագրվող դրվագազարդ բրոնզե գրտիների վրա: Ըստ որում Ծիրակավանի գրեթե ամիսաբար օրինակները, ինչպես նաև վերտիշյալ գրտիներին արված դրանց գուգահելուների համենատական չափերը քոյլ են տալիս ասել, որ այս զենքն ունեցել է =1.5/1.6-1.8/1.9 մ. բարձրություն:

5. Այս զենքի հաջորդ տարրերակը կազմում են եռավիճ բաղադրյալ աղեղները, պրանք, ի տարրերություն նախորդ տարրերակի, միջնամասում օժուված են կիսակլոր կամ պայտաձև հարմարանքով, ինչն առանձին, համամետաբար փոքր և ինքնուրույն դեր ունեցող ոչ մեծ լճի տպավորություն է ստեղծում: Սրա եզրերին, նախորդ տարրերակի նման, անրացվել են արտածվող զույգ լիճ-քնները, որոնցից յուրաքանչյուրը դարձայլ ավարտվել է աղեղնալպարի անցկացման համար հազցված բրոնզե ծայրապանակով: Այս տարրերակի փաստացի երկու օրինակների մնացորդները հայտնաբերվել են Լճաշենի մ.թ.ա. XVդ իշխանական դամբարանաբլուրների պեղման ժամանակ (ՀՊՊԾ՝ հավաքածու- 2007/11): Դրանց պատկերները հանդիպում են նաև Սևանի, Լճաշենի, Աստղի բլուրի, Մուսիերիի, Աղբալայի, Նոյեմբերյանի, Խաչենագետի և Սանթրավորյի մ.թ.ա. II հազ. երկրորդ կեսի- մ.թ.ա. I հազ. սկզբի բրոնզե գոտիների դրվագազարդ տեսարաններում: Ուշագրավ է, որ այս աղեղների մի մասը ևս երկճյուղ-ոլորտն և քոչնակերպ հարմարանքներ են կրում լմերի կենտրո-

նական հատվածներում, իսկ խնդրու առարկա գենքի բարձրությունը դարձյալ տատանվում է 1.6-1.9մ. սահմաններում:

6. Ժայռապատկերների, բարձրաքանակների, բրոնզե գոտիների և այլ առարկաների վրա պահպանված փորագիր տեսարանները բոյլ են տալիս եղակացնել, որ միային (յայնային) աղեղներն իրենց համեմատաքար փոքր չափերի պատճառով օգտագործվել են ինչպես հեծելազորի (Սասով բլուր, Էրեբունի), այնպես էլ հետևակի (Սամբավրո, Կարմիր բլուր) կողմից: Ինչ վերաբերում է երկյիծ և եռալիճ աղեղներին, ապա դրանք առավելապես կիրառել են հետիւնը ռազմիկները (Սևան, Լճաշեն, Արքալի, Նոյնմերյան): Բացաված չէ, որ վերջիններս գործի են դրվել նաև ուռի օգնությամբ: Այս առումով ուշադրության է արժանի նոյն զինատեսակի օգտագործման հետ կապված մի մանրամասն ևս: Բանն այն է, որ երկար ժամանակ այն կարծիքը կար, թե իր երկյիծ և եռալիճ աղեղների թևերի կենտրոններում ամրացված երկճյուղ-դրորուն և բռչնակերպ վրադիր հարմարանքները դեկորատիվ կամ հմայական դեր են ունեցել: Իրականում նետաձգության մասնագետներից ստացված տեղեկատվության արդյունքում պարզվեց, որ դրանք, ամենայն հավանականությամբ, հասուլ նպատակով ամրացվել են մոտ 2.0 մ բարձրություն ունեցող այս զենքի լճերի կենտրոնում, որպեսզի օգտագործման ժամանակ հնարավորին մեղմեն աղեղի հիմնամասի (կորպուսի) տատանումները (վիրրացիան): Այդ նպատակով այժմ էլ սպրոտային աղեղների լճերի կենտրոնում ողղակացած, երկարուկ, ծողածն հարմարանքներ են ամրացվում:

Այս ամենից զատ և՝ հնագիտական, և՝ գրավոր սկզբաղյուրները հարուստ տեղեկություններ են պարունակում նաև աղեղներին վերագրվող ծիսական հատկությունների մասին: Մասնավորապես այս զենքով են զինված Մեռնող-Հառնող հերոսները (Քարաշամբի, Ամաշի և Հասանուի գավառներ), հիմարենելյան աստվածություններն ու ազգածիմ նահապետները (Չամաշ, Սարդուկ, Խալդի, Թեյշերա, Հայկ, Ողիսև և այլք): Դատելով հնագիտական հետազոտությունների արդյունքներից՝ չի բացավում, որ հնում աղեղները նաև սոցիալական բարձր կարգավիճակ ցուցանող զենք համդիսացած լինեն:

ԵԵՎՈՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ (ՀԱԻ)

«ՏԱՊԱՐԱՅՈՒԾ» ԼԱԲԻՐԻՆԹՈՍԻ ԲՐՈՆԶԻԴԱՐՅԱՆ
ՄԻ ՇՈՒՐԻՆՎԱՃԵՐԻ ՊԱՐՉԱԲԱՆԱՍԱՆ ՑՈՒՐՉ

Խոսքը վերաբերում է մի հորինվածքի, որն արտացոլված է բրոնզի դարյան Հայաստանի տարրեր շրջաններում գտնված բրոնզե առարկաներում: Ամենաարդ հորինվածքով նման առարկա գտնվել է Սևանի ավա-


զանում (նկ. 1), սակայն հորինվածքի տարրեր հատվածներ և տարրերակ-ներ կրող նմուշներ առանձնապես հայտնի են իին Շիրակի տարածքից՝ տես նկ. 2, 6 (ըստ Ռ. Մ. Թորոսյան, Օ. Խնկիլյան, Լ. Պետրոսյան, Հին Շի-րակավան, Եր., 2002 [ՀՅ], LXX.8, LXXV.17, տես նաև LXVI.18-20, LXVII.10, LXIX. 20, 21, LXXI.2, LXXII.7, LXXIII.16, LXXV.15]: Առար-կաների ակնայիտ նշանային բնակածությունը հետազոտողներին իրա-վունք է տախի դասելու դրանք ծիսական առարկաների շարքը՝ անհայտ կամ էլ ենթադրական կամայական (օրինակ՝ որպես արեգակնային հա-մակարգության մոդել) գործառությամբ և նշանակությամբ:

Սեկ այլ ասիրով փառձել ենք համադրել հորինվածքի օդակաճև հաս-վածք պարուրատիպ բավկով ինս՝ բնակեցված իր հրեշային տիրակալով (Լ. Արքահամյան, Բավկող-լարիրինքոս. արտավագոյան առասպելը կով-կաս-առաջավորասիստական համատեքստում «Հայ ժողովրդական մշա-կույք», XII, 2004, էջ 13-18: Օգտվելով առիրից՝ շնորհակալություն են հայտնում Դ. Վարդումյանին՝ «քավիդ» զաղափարի վրա իմ ուշադրությունը բնակելու համար): Սեր հորինվածքի տիրակալը պետք է որ ցակերպ լիներ, քանի որ կենտրոնի ֆիզուրը ցի զրոխ է իինեցնում հետագա մինո-տավորույան գուգահեռներով: Մա տուկ արտաքին նմանություն չէ, քանզի արտավագոյան տիպի քարայրում արգելակաված հերոսը, պարզվում է, քա-վականին խոր աղերսներ ունի կրտսական լարիրինքոսի հրեշային բնակ-ջի ինս (անև Լ. Աբրամյան. Միֆологемա прикованного героя: к вопросу о прототипах кавказских истоках “Археология, этнология и фольклористика Кавказа”, 2003, էջ 329-332; նույնի «Парные образы «Сасна պըր»: близ- нецы, сводные братья, двойственные герои «Հայկական «Սաման ծուր» էպոսը և համաշխարհային էակիկական ժառանգությունը», 2004, էջ 61-67: Հորինվածքի կենտրոնական ֆիզուրի ցակերպ լինելը մեզ ժամանակին հուշել էր Հ. Պետրոսյանը:

Մինչ այդ մենք այն բնկալում էինք որպես տապար: Սույն հաղորդման մեջ անդրադառնում ենք այդ ֆիզուրի տապարային հատկանիշներին, որոնք ճշտությամբ կրկնում են համաժամանակյան տապարիկների կա-ռուցվածքային մանրամասները (տես նկ. 3, ըստ ՀՅ, LX.14): Տապարային համատեքստը շեշտադրում է քավիդ-լարիրինքոսային ծիսատասպեկա-րանական համակարգի լարիրինքոսային հատկությունները՝ իր տապա-րային արմատները (լարրիս նշանակում է երկասկը):

Այսուել է, որ բրոնզիդարյան նմուշների օդակաճև «արիրինքոսի» կենտրոնի ֆիզուրի երկալի՝ ցլի և տապարի («տապարացուլի») էությունը ոչ քե երևակայության կամ պատահականության արդյունք է, այլ կարող է արտացոլել Մինոտավրասպան Թեսևսի ծագումնաբանական առնչությունը տապարակիր Թեշուրի ինս (անև Ա. Պետրոսյանի Թեսևս – Թեշուր կայի համոզիչ վերականգնումը՝ տապարային և այլ համատեքստերում. տես օրինակ, Ա. Պետրոսյան, Ուրարտական զլսավոր աստվածների եռ-

յակը և պետության իշխող վերնախավի ծագման խնդիրը, «Պատմաբանական հանդես», 2002, հ. 2, էջ 250-256): Ըստ Պ.Ավետիսյանի համաժամանակյա կավե անոքների վրա հաճախ հանդիպող եռդիմվածքները (տե՛ս նկ. 4, ըստ Հ.Ը. և 5, ըստ Տ. Խաչատրյան. Դրեսնյա կոլումուրա Ռիրակա, 1975, նկ. 54) կարելի է համարել լարիրինքոսի երկանքային պատկերագրության ոճավորված արտահայտություն, ընդ որում, որանց շեղանկյունաձև հատվածները համադրելի են նկ.1 շեղանկյունի հատվածի հետո, ինչը հնարավորություն է տալիս ներգրավել այն լարիրինքոսային նշանաբանական դաշտի մեջ, սակայն, առանց ցի բաղադրիչի: «Տապարացուլի» տապարային բաղադրիչը կարելի է տեսնել շեղանկյուն-լարիրինքոսից դուրս ժայթռող «փառաբանված» տապարիկաձև երտստների մեջ (հմմտ. նաև նկ. 6): Տապարի այսպիսի «փառաբանումը» նույնպես կարելի է մեկնարանել Թեշուր-Թենևայան նվիրագործական հատթանակի համատեքստում (լարիրինքոսի նվիրագործական առումները տե՛ս Լ.Արքահամյան, Բավիղի ծիսառասպելարանական ակումբները «Հանրապետական գիտական նառաշղան»), 1995, էջ 3-4):



ՍԱՐԳԻՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ (ԾՀՀԿ, ԳՊՄԻ)

ԱՐԵՎԻ ԱՍՏՈՒ ԱՅՆԻ ՔԱՂԱՔ ԵՎ ՍԱԿՐԻՌԵՐԸ

Արևի աստծուն նշող բառերի բազմազանության պատճառով ուրարտական արձանագրություններում մաս տալուարար համեմս է զալիս ^DUTU զաղափարազի տակ՝ ի տարրերություն Խալդի աստծու, որի անունը մշտապես բերվում է վանկազիր (*Hal-di*): Միայն երկու արձանագրություններում է Արևի աստվածը ներկայացված վանյան վանկազիր ^DՏիւնի անվանք (ՅԿՀ, № 95 և № 275): Ի դեպ, սա Արևի աստծու բուն անունը չէ, այլ մակդիրը,որը նշանակում է «փայլուն, լուսե»՝ ծագած հ. ե. *Կես- «փայլել, լուս տալ» արմատից: Տիւնի դիցանունն օգտագործած արձանագրություններից առաջինը գտնվում է հյուսիս-արևելքից Վանա լիճը թափվող Բերկի (Բանդիմահի) գետի գետաբերանի շրջանում հայտնաբերված մի կորողի վրա: Ծիկինիին ծոնված այդ կորողի արձանագրությամբ Մենուա թագավորը (մ.թ.ա. 810-786թթ.) նրանից իրեն և իր ինուշպուա որդու համար խնդրում է «կյանք, ուրախություն, մեծություն»: Արևի աստծուց «կյանք» խնդրելը հասկանալի է ինքնին, որովհետև հայի համար «արև»//«կյանք» (խմնտ. արևի ապրի, արևի խավարի):

Բերկիի շրջանում պաշտված Արևի աստծուց «ուրախություն» խնդրելիս Մենուան պետք է ի նկատի առաջ լիներ այդ աստծու տեղական առանձնահատկությունը՝ հետազայում արտացոլված Բերկի տեղանկան մեջ: «Ուրախությունը» նույն «բերկրանքն» է, իսկ բերկրանք (*<բերկրանք>* բառի ինմքը առկա է նաև ինչյալ գետի, նրա ավազանը բռնած զավարի և զավարի կենտրոն քաղաքի Բերկի (*<բերկր-ի>*) անվան մեջ: Այս տեսանկյունից ուշագրավ է տեղական հետևյալ ավանդագրույցը: «Գավառի բնակչները իրար հանդիպելիս բերկի (ուրախացիր) են ասել՝ տարվա բերքի առաստությունը ավետեղով: Դրանից էլ զավարի անունը մնացել է Բերկի» (Ավանդապատում, 152): Այսուհետեւրծ, «ուրախություն» խնդրելով, Մենուան շատ ավելի խորունկ կապ է բացահայտում Բերկիի այդ աստծու ինչ-որ հասկանիցի և «ուրախություն» հասկացության միջև: Անտարակույս, այդ կապը խարսխված էր լինելու Արևի աստծու լրաւելեն էության վրա, որովհետև «Լույսը» հայերենում շատ է օգտագործվում «ուրախություն» իմաստով» (Մ. Արենյան, 7,39):

Չանի որ Մենուան հենց Բերկի գետի գետաբերանի շրջանում էր ոյել Արևի աստծուն ծոնված իր կորողը, ուրեմն, այսուել էլ պետք է գտնվեր «Սիերի դրան» արձանագրությունից հայտնի Արևի աստծու երկրորդ նշանավոր սրբավայր-քաղաքը՝ ^{ՄՐՄ}Այսին-հ: Վերոշարադրյալը մեզ բույլ է տալիս այս տեղանկան մեջ տեսնելու Արևաստծու մեկ ուրիշ մակդիր՝ նոյնպես «զուսնդեն» իմաստով, որը քաղաքը կրել է նրա պաշտամունքի կենտրոնը լինելու պատճառով: Այսին-ի **Uis-ini*-ի արտասահմու-

բյունը քոյլ է տալիս այս անվան հիմքում տեսմելու հ. -ե. նախալեզվի *yes- «լուսավորել, այրել» արմատը և -in(i) վերջածանցը: Վերջինս է առկա նաև ^DSiuinī// *Siu-in(i) դիցանվան և հայերեն բազմաթիվ բառերի մեջ (հնմտ. լուս-ին, կարգ-ին, վեր-ին և այլն): Ընդ որում, հ. -ե. այս արմատից կազմված և լուսեղեն երևույթներ կամ դրանք անձնավորած աստվածություններ նշող հասարակ ու հասով անուններ կան նաև հնդեվրոպական մյուս լեզուներում. հնմտ. հնդկ. vāsara «աստվածույան», «օր», avasran «նրանք լուսավորեցին», հուն. ἥρας//έως «արշալույ, լուսարաց», «օր», «արևելք», Ἡρώς «Արշալույի դիցուիին», լատին. Vesta «օջախի դիցուիին» և այլն:

Հնդեվրոպական նախալեզվի հիշյալ արմատից ծագած և, մեր կարծիքով, նախապես Արևի ասոծու մակդիրը եղած, իսկ հետագայում ավելի լայն իմաստային դաշտի մեջ ընդգրկված բառ է եղել հայերեն վեհ-ը: ՆՀԲ-ում քերպված են այդ բառի հետևյալ նշանակությունները. «Երկնային. վերինք. երկնայինք. երեշտակը. եւ ըստ հերանոսաց՝ դիցազինք. դիք. կիսաստուածք», «Քարծքնեալն աստուած. որ էն» (2,799): Կարծիք է հայտնվել մեր բառի իրանական փոխառություն լինելու վերաբերյալ (Արմ. 4, 327): Նախ՝ իրանական լեզուների նմանահունչ բառերը ծագում են ոչ թե հիշյալ, այլ «լավ» նշանակող հ. -ե. *yes- արմատից (որից կարող են լինել մեր վես «հպարտ, գոռող, ամբարտավան») և վեսով/վեսու «ազատ, ազնրվական, իշխան» հուսախ ստուգարանություն չտնեցող բառերը -Արմ. 4,329,336), ասա՞՝ իրանական բառերը չտնեն այնպիսի լայն իմաստային դաշտ, ինչպիսին ունի մեր վեհ-ը: Ենթադրում ենք, որ վեհ բառը «Քարծքնեալն աստուած» նշանակությամբ կիրառվել է դեռևս այն հեռավոր ժամանակներում, երբ հայոց հնագոյն դիցարանը գիտակրում էր Արևաստվածը: Իսկ որ նա այդպիսի դեր ունեցել է, վկայում է մեր հին սովորի արեգ օրանունը: Այդպիս կոչվում էր յուրաքանչյուր ամսի առաջին օրը, ասել է թե նաև յուրաքանչյուր տարիին սկսող առաջին օրը: Այդ օրը ճոնված է եղել Արեգին Արևաստուն, որը Արեգ անվան հետ միասին կրել է նաև հ. -ե. *yes- (>*yes-in-, վեհ) արմատով կազմված մակդիրներ:

Արևի ասոծու սրբազն քաղաքի Uššini (<*yes-in-) անվան արմատակիցն է լինելու ուրարտական արծանազրությունների սենելաշե բառը: Ուստի Էրիմնեայորդու (մ.թ.ա. VI դարի վերջեր) Գյուղելերի արծանազրության մեջ քերպված և Խալդի ասոծու կողմից ուրարտական այդ արքային «տրված» խորհրդանշիշերը նշանակող բառերի առքիվ ե. Գրեկյանը գրում է, որ դրանք «խորհրդանշում են իշխանություն, երևույթ, որ լայնորեն ներկայացված է նաև հին առաջավորասիական սեպազիր այլ առդրյուրներում: Չմեկնարանվող սենելաշե բառը, մեր կարծիքով, կարող է լինել այդ նույն իշխանությունը արտահայտելով շնորհված խորհրդանշիշերի հավաքական իմաստը» (ՊԲՀ, 2004, թիվ 1, էջ 231): Կարծում ենք, որ այդ բազմիմասս բառի նշանակությունները կարող էին լինել այնպիսիք,

ինչպիսիք էին հնդկութական անխալեզվի միևնույն արմատը պարունակող հայերեն վեհագունութիւն բառի նշանակությունները՝ «զերազանցութիւն, առաւելութիւն, վենութիւն, մեծութիւն, բարձրութիւն, լաւութիւն, ընտրականութիւն» (ՆՀԲ, 2, 800):

Ըստ Ա. Գարազաշյամի՝ Վեհ բառը ունեցել է *Վահ տարրերակը (արմատի ստորին ճայնադարձով), որն է նա տեսնում վահան բառի և Վահեով Վահագն դիցանունների հիմքում (Քնն. պատմ., 1, 269): Կարծում ենք, որ նա մասսամբ իրավացի է, որովհետև վահան բառի մեջ կարելի է առանձնացնել վահ արմատը և -ան վերջածանցը (Խմնտ. կո-ան, ջնջ-ան, վակ-ան և այլն): Քանի որ վահանը՝ սկավառական պաշտպանական գենքը, խորերանշում էր հենց արևը, ուստի *Վահ բառը մինչև «աստված» ընդհանրական նշանակությամբ կիրառվելով, գործածվելու էր միայն «Արևատված» նշանակությամբ: Իմաստային նոյնափի զարգացման ուղի են մատնանշում լրավ *Tiwas* և խեթը. Տիստաշ «Արևատված», «աստված» բառերը: Այս տեսանկյունից ուշադրության է արժանի Հովհաննես Դրայխանակերտցու այն հաղորդումը, ըստ որի՝ Հայոց Վահե նահապետի հայրը կոչվում էր Վահ, այսինքն՝ կրում էր այն նոյն անունը, ինչ և Վահ քաղաքը: Խսկ հայտնի է, որ Վահն Արևատվու (ուրարտ. Տիսու, հետագայում *Սիրի>Սիեր*) պաշտամունքի նշանակալոր կենտրոնն էր: Ի դեպ, Վահեի հայրը Սովորեն Խորենացու երկում (Ա, թա) կոչվում է ոչ թե Վահ, այլ Վահան, իսկ այս անվան հիմքում տեսնում են պաշտպանական սկավառական գենքը նշող համապատասխան բառը:

Մենք սրբավայր-քաղաքի Բերկրի գետի գետարերանի շրջանում գտնվելու օգտին կարող է վկայել նաև Արգիշտի II (մ.թ.ա. 713-685թթ.) Հաղի գյուղի արձանագրությունը: Արձենի շրջանում գտնված այդ արձրանագրության մեջ հիշատակված է նաև ^{ԿՈՐ}Artarapša «երկիրը», որը տեղադրվում է Վահա լճի հյուսիս-արևելյան ավին հարող տարածքում (Տոպ. Սր., 41), այսինքն՝ այնտեղ, որտեղ գտնվել է Արշակունի Ուրարտուի առաջին մայրաքաղաքը, և որտեղ գտնվելու էր Մենք սրբավայր-քաղաքը: Artarapša տեղանունը բարդ բառ է: Մեր կարծիքով, նրանում առկա - արքա-ն նշանակում է «սկավառակ» և նոյնական է հայերեն ափսէ (<*ափսայ. հնմտ. պախրէ//պախրայ, Նամէ<Նանայ) և հունարեն օֆիչ բառերի *aps- արմատի հետ: Հունարեն այս բառը նշանակում է «ամեն կոր կամ բոլորածն բան. ինչպես՝ անիվ, դորգն, կամար, երկնակամար, ծիածան, շրջանակ, արևի սկավառակ, սկավառակ» և համարվում է ինչպես մեր ափսէ: «մետաղյա սկավառակ», այնպես էլ լատիներեն *ab-sis* (*apsis, hapsis*) «սկավառակ», կոր ու խորունկ պնակ» բառերի աղբյուրը (Արմ., 1, 366): Այսուհենքերձ, բացառված չէ հայերեն և հունարեն բառերի մեջ ընդհանուր ակտուն ունենալու համարմանքը:

Տեղանական մեջ առկա Artar // Արք-ար բառը բաղադրյալ է՝ բաղկացած արք- արմատից և -ար վերջածանցից (Խմնտ. արդ-ար, պալ-ար,

կերպ-ար և այլն): Այս դեպքում արք-ը կարելի է համարել հնդեւկրոպական ր-> ար արմատից և նոյնացնել արքուն (<արք-ուն) բառի արք արմատի հետ: Հ. Աճառյանը, հակադրվելով վերջինիս ծագման վերաբերյալ եղած նախակին տեսակետին, գրում է. «Քանի որ ինիս. *r̥eth-* արմատը տալիս է արդեն հարք-նու, հարք-չի բայր, ուստի լավագույն է բաժանել նրանց արք-ուն և դնել ար (յառնեմ, արի) «վեր կենալ» արմատից՝ աճականով» (Արմ., 1, 314): Դրանով հայերեն արք-ը ազգակիցն է դատնում հ.-ե. լեզուի այնպիսի բառերի, ինչպիսիք են ինին հնդկ. նd արտադրության մեջ առաջական առաջականությամբ: Այսպիսով, ուրարտական դարաշրջանի ^{KUR}Artarapša (կարպա)՝ *Արքարափասա տեղանկան հիմքում հնագույն հայերենի *արքար և *ափսա բառերն են, որոնցից առաջինը եղել է արևի (նաև Արևաստծու) մակղիրներից մեկը, իսկ երկրորդը նշանակել է նրա սկավառակը:

ՍԱՐԳԻՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ (ԾՀՀԿ, ԳՊՄԻ)

ՎԱՆՅԱՆ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԶՈՒՅՆԸ

Մենուա արքայի (մ.թ.ա. 810-786թթ.) կողմից Խոտուինի աստծուն ծոնված կորողի արձանագրությամբ Ուրարտուի արքան իրեն և իր Ինուշպուա որդու համար այս աստծուց խնդրում է «վյանք, ուրախություն, մեծություն» (ՄՀԿ, № 94): Խոտուինիի արևի պաշտամունքին առնչվելու մասին է խոտու նրան ծոնված կորողի *Smitqawa*/*Վաճառմ* գտնվելու իրողությունը, որովհետև սա Արևի աստված *Ծիլինիի* պաշտամունքի կենտրոնն էր: «Սիերի քրան» արձանագրության համաձայն՝ Խոտուինին ուներ իր գույզը՝ ^DԱսի//Ասի դիցուին: Ուրեմն, Վանը ոչ միայն *Ծիլինի-Smitqawa* գույզի, այլև Խոտուինի-Ավի գույզի պաշտամունքի կենտրոնն էր: Վան քաղաքի Վանա լճի ափին գտնվելու հանգամանքը հուշում է, որ առաջին աստվածային գույզի նման երկրորդ գույզը ևս պաշտամունքային տեսակետից ուղղակի առնչություն էր ունենալու ոչ միայն արևի, այլև ծովի (Վանա լճի) հետ:

Վանա լճի գծագրությունը հիշեցնում է գլուխը արևելք ուղղած՝ բռիչքի պատրաստվող բռչուն, բնականաբար, ծովային բռչուն: Ըստ այսմ, հակված ենք, Խոտուինի աստծու տոտեմական նախատիս համարելու առասպելաբանված ծովային մի բռչուն և նրա ^DՀպսուն-^DՀպսուն անվան *Հպտ(ս)* - բաղադրիչը գուգակին ձևը համարելու հայերեն խոր բառի, որը նշանակում է «աղկիովն կամ արտուս ծովեցերենայ» (ՆՀԲ, 1, 956): Ընդ որում, ին հոյսերի կողմից ալկուն (ալկրոն, աղկիովն) կոչված բռչունը ավելի շուտ բարեգուշակ առասպեկտական էակ էր բնակալում, քան թե իրական ձկնեղու բռչունը (Բաց. բառ., 1, 18): Իսկ *Հպտուն* դիցանվան *-in(i)* բա-

ղաղղիչը նոյնական է լինելու հայերեն-ին վերջածանցի հետ (հմմտ. լուսին, գետ-ին, դարբ-ին և այլն), որն առկա է նաև ուրարտական արձանագրություններից հայտնի Տարամ (Տարամ) և այլ դիցանուններում:

Սուսապելական այդ բոշունին է վերաբերելու հայկական այն ավանդագրույցը, որի համաձայն՝ ծովից ծագող արևը կարող է այրել ու մոխրացնել երկիրը, եթե նա իր հոկայական թևերով հովանի չանի երկրին և չուղեցի արևին մինչև իր ուղու բարձրակետը: Արևի սաստիկ ջերմությունից իր թևերն այրելով՝ բոշունը կիսակենան ընկնում է ծովը: Այսուել նա զովանում է, բուժում է թևերը և հաջորդ արևածագին նորից դրւու զալիս արևի դեմ և հովանի անուն երկրին (Ավանդապատում, 4): Երկրի հովանին և նրա վրա կյանքի շարունակման գրավականի դերը առասպելական այս բոշունից ժառանգության էր անցնելու Խոտուփնին (հմմտ. ալկեոն բոշնի անվան կապը հունարեն ալկոյ «սպաշտականարյուն, հենարան, օգնություն, փրկություն», ալկոյ «փրկիչ» և այլ բառերի հետ), որը, հավանաբար, ընկալվել է ոչ միայն որպես փրկիչ աստված, այլև բնություն զարդունք-վերածնունդը հովանավորող աստված: Ինչպես Հ. Մարտիրոսյանն է նշում. «Քոչնի կապը արևի հետ ինքնաստիճարյան առնչվում է զարնան, բնության զարդունքի, վերակենանացման հետ»՝ արտացղված դեռևս մ.թ.ա. III հազարամյակի ժայռապատկերներում (Հայաստանի նախնադարյան նշանագրերը, 63): Խոկապեն էլ առասպելական բոշունը՝ խոր// ալկիոնը, կապի մեջ էր բնրոնվում ոչ միայն արևի օրեկան, այլև տարեկան թվացյալ շրջապատոյափ հետ: Ըստ այդմ, խորական ժամանակ // աղկիոնի նրանսա աւուրք անունն էր տրվում ծմեռային արևադարձից յոթ օր առաջ և յոթ օր հետո նորած ժամանակահատվածին, երբ համարվում էր, թե ծովը խսդադ է լինում և խոր//ալկիոնը բույն է շինում ու ճկադրում: Խոկ հայտնի է, որ ծմեռային արևադարձը խորհրդանշում էր արևի (վերա)ծննդի պահը (հիշենք Սիրքա/Սիրիի ծննդյան ստուխիմությունները):

Հունական առասպելաբանության մեջ Ակլիոն (Ալկոն) անունն էր կրում Թեսալիայի Կեփս քագավորի կինը, որը իրեն ծովն էր նետել, երբ ամուսինը չէր վերադարձել նավազմացությունից: Աստվածները նրանց երկուսին էլ ալյիոն էին դարձրել: Սուսապելի մեկ ուրիշ տարրերակում կիմք ալյիոն էր դարձել, ամուսինը՝ ճայ: Նոյնախի անրածան զոյզ էին կազմելու նաև նրանց հայկական զուգահեռները՝ Խոտուփնի և Ավի աստվածային զոյզը: Այս սեսանելյունից ուշադրության է արժանի խորթը խարուն (խորթը-խարուն) կոչված բոշունը և նրա անունը: Թոշունի խոկությունը պարզ չէ, բայց բերված բնութագիրը (Բաց. քառ., 2, 298), կարծես թե, հավալուսնին է վերաբերում, որի մասին կա հունականն հիշեցնող ավանդություն (Ավանդապատում, 140): Ըստ դրա՝ ամուսնու և որդու կորուստը սպացող կինը հավալուսն է դառնում: Խութը խարունի անվան խարուն «տիկին, տիրուիի» բաղադրիչը հուշում է, որ նա խորթը բոշունի էզն է: Այս դեպքում, նրա արական զուգակից խորթը էր լինել

նույն խոք// ալլիխոնք, այսինքն՝ Խոտոսուինի աստծու նախատիա քոչունը: Խոտոսուիսաքուն քոչունի Ավի դիցուհու նախատիազը լինելու մասին կարող է վկայել ոչ միայն Խոտոսուինի-Ավի զույգի գոյությունը, այլև Ավի/^DԱսի դիցանկան «քոչնային» ստուգաբանությունը: Մեր կարծիքով, վերջինն հայերեն համար «քոչուն» բառի նման ծագում է հ. -ե. *աշե- արմատից, որից են նաև հուն. ሰլետօս «արծիվ», լատին. avis, հին հնդկ. vi-, ve-, vayas, ավեստ. viš, vay- «քոչուն» բառերը (Արմ. բառ., 3,66):

Հնդեվրոպական *աշե- նախածնից ծագած համ բառն առկա է նաև հաւալուսն քոչնանկան մեջ: ՆԲՀ-ում այս բառն ստուգաբանված է «փրո համ անձրյա, կամ լուսն ունող յաշա, որպէս ունկ հաւկուր» (2,71): Մեր կարծիքով, հաւալուսն (հաւ-ա-լուս-ն) բառում լուսնը բաղադրիչը մատնանշում է հենց «զույգ» (վերջնաճայն -ն-ի համար հմնու. զառ-ն, ծոկ-ն, եզ-ն և այլն): Որ հավալուսնի պաշտամունքը ժողովրդի մեջ գոյատևել է նաև քրիստոնեական դարերում, վկայում է այդ քոչնի նկատմամբ մեր մատնագիրների դրսորած խիստ բացասական վերաբերմունքը: Սիրնադարյան «Քառզիր հայոցի» տարրեր ձեռագրերում կարդում ենք. «Հաւալուսն. համ է պիդօ», «Հաւալուս. համէ պիդօ», «Հաւալոյս-հաւապիդօ» (ԲՀ, էջ 182 և 395, ծան. 215): Հավալուսնի ջրլոր քոչուն լինելու (իսկ ջուրը ևս կենաստու տարր է) և արևային քոչուն համարվելու հանգամանքները պատճառ են դարձել, որ նրա առասպելաբանական կերպարն օժանի ոչ միայն մեռնել-հատնելու հատկությամբ, այլև հավերժական այդ գործընթացը իրագործողներին բնորոշ գծերով: Վարդան Արևելցին բերում է նրա շուրջ հյուսված առասպելի հետևյալ պատառիկը. «Ասեն զիաւալսան որդեսէր, մինչ չերքալ ի բունյոն բերել որս. եւ ի նեղել ծագուցն՝ սպանանէ կտցով, եւ ապա համել արին ի լանջացն, եւ առնու ջուր ի բերանն, եւ սրսկէ, յետ երեք ատոր, եւ կենդամանան» (ՆՀԲ, 2, 71): Առասպելի՝ մեզ հասած մենք ուրիշ պատառիկի համաճայն, ամուսնուն ու որդուն կորցրած «խելք կինը դասնում է հավալասան քոչունը: Նա քոչուն է շարունակ ու ողբազմ կանչում, և հանջիստ է առնում միայն այն ժամանակ, երբ սրտից երեք կար արյուն է կարում» (Ավանդապատում, էջ 140):

Ինչպես տեսնում ենք, առասպելի բերված պատառիկներում արևի մասին ոչ մի խոսք չկա: Բայց դրանցում առկա է արևի բիկը՝ «երեքք» («յետ երեք ատոր», «երեք կար արյուն»): Հնմուն. արևի «կենդամության» ցուցիչ տարվա երեք եղանակները (զարտուն, ամառ, աշուն), նրա երկնակամարային ուրու երեք հիմնայիշքները (արևածագին, կեսօրին, մայրամուտին), իրարահաջորդ-արյունակից արևային երրուսները «Սասնա ծրուեր» դյուցազնավեպում (Սեծ Սիեր, Դավիթ, Փոքր Սիեր), Սիրքա/Սիեր աստծու պաշտամունքում, «Կահազմի երգուն» և Հայկի առասպել-ավանդագրույցում բացահայտվող «եռակիրության զաղափարի» դրսորումները և այլն:

Ձմռան ծանր նիմիթից հետո սկսվող բառերյան զարքոնքը (վերակենդանացումը) մեր նախնիները բացատրում էին ոչ միայն զարնանային արևի կենսառու զորությամբ, այլև զարնան ավետարեր քոչունների վերադարձով: Այդ իսկ պատճառով, ինչպես Հ. Սարսիրոսյանն է նկատել տալիս, հայկական նշանագրության մեջ կա «իրար վրա զժագրված զոյզ բացված թևերից կազմված զարափարազիր, որի դիմաց դրված է «զարուն» բացահայտիչը» և դա «կասկած չի քողնում, որ հայկական «քոչուն» և «զարուն» զարափարազիրը ծագում են վաղ բրոնզեդարյան կրոնի ու հավատալիքների անդաստանում և անփոփոխ մնում հազարամյակներ» (նշվ. աշխ., էջ 65): «Գարուն» զարափարազի քոչնակերպ պատկերման զործում ոչ երկրորդական դեր էր վերապահված լինելու հին հայոց առասպելաբանության մեջ որպես ջրային-արևային, մեռնող-հառնող, մեռցնող-հարություն տվող առասպեկտական քոչուն հանդես եկող հավալուսնին՝ Վանա լճի կենդանական մարմնավորմանը, վանյան Խորությին և Ավի աստվածային զոյզի նախատիպին, նրանց խորհրդանիշ սրբազն քոչնիմ:

ԱՐՄԵՆ ՊԵՏՏՐՈՍՅԱՆ (ՀԱԻ)

«ԿՈՒՄԱՅԻՆ» ՏԵՂԱՆԿԱՆ ՇՈՒՐ

Խորա-ուրարտական ամառոպի աստծո՝ Թեշուր-Թեյշերայի կենտրոններն էին Կոմե/Կուտես և Կոմառո քաղաքները, առաջինը՝ Հայկական լեռնաշխարհի ծայր հարավում, երկրորդը՝ ծայր հարավ-արևմտաբում՝ Կապադովիայում: Թեշուրին ծնող աստվածն էր Կոմարրին: Նա, նախ և առաջ, հացահատիկի աստված էր, որի մասին է վկայում նրա նոյնացումը շումերական Նիսարայի, միջիննեփրատյան Դազանի և խեթական Խուլկիի հետ (որպես «աստվածների հայր» և մեծ աստված նա նոյնացվել է նաև շումերա-աքաղական Էնլիլի և ուգարիթյան Էլի հետ):

Կոմարրին աստվածների արքան էր, որին զահրմելեց է ամում Թեշուրը: Կոմարրին իր տարրեր որդիների միջոցով մի քանի անգամ փորձում է վրեժ լուծել Թեշուրից, բայց անհաջող: Թեշուրի եղբայր-հակառակորդներից է քարե հրեշ Ռուզիկուսնին, որը ծնվել էր «սառը աղբյուր լճում» գտնվող «մեծ ժայռի»՝ Կոմարրիի կողմից թնդնավորումից:

Թեշուրի ցիկլի առասպեկտների այս երկու առանցքային կերպարների անունները պարունակում են կոտ- տարրը և, այսպես քեզ այնպես, ստուգարանական, կամ գոնե առասպեկտաբանական մտածողությանը բնորոշ համահունչ անունների համապատասխանեցման (անագրանային) մակարդակով, պեսոք է առնչվեն Թեշուրի սրբազն կենտրոնների անվանումների հետ: Կոմարրի ձևը, դատելով նմանատիպ լիցանուններից, ածանցյալ կազմություն է՝ *Kumar (տեղանուն) + bi/we (սեռական հոլովի

ցուցիչ), այսինքն՝ «Կումար քաղաքի աստված» (Է. Ֆոռեր): Այս առքին հիշվում են շումերական, սիրիական, ապաև Նուզիի տեքստերում հիշատակված նմանահունչ անուններով քաղաքներ, կամ Կումարը ենքադրվում է Կումմիի շրջակայքը: Բնչել, այս ենքադրությունները միարժեք ընդունելություն չեն գտել, և *Կումարը մնում է չտեղայնացված:

Խուսիական աստվածների պաշտամունքները պատմական ժամանակներում կենտրոնացած են նրանց տարածման արեալում՝ Հյուսիսային Սիրազետքում և Սիրիայում: Կումարիի հայրենիքն էր համարվում խուսիական հին արքայական քաղաք Ուրկեշը Հյուսիսային Սիրազետքում: Մ. թ. ա. III հազարամյակի վերջին Ուրկեշի գլխավոր աստվածն էր թերևս, Ներզայը: Ըստ այդմ, Կումարը ին հագույն կենտրոնը պետք է փնտրել այլուրեք: Ուլյիկումնին համադրվում է Ulligama / Ulikamta լեռնանվաճը Կիլիկիայում, և կարող է մեկնարանվել որպես վերջինիս մի երկրորդային ծևափոխությունը՝ «ժողովրդական ստուգարանության» հիմնավար (իրքն «Կումմի քաղաքը կործանող»): Ընդ որում, այս տեղայնացումը ևս երկրորդային է, քանի որ Կիլիկիան չէր կարող լինել խուսիական ցեղերի հնագույն բնօրրանք: Վերջինս տեղայնացվում է Հայկական լեռնաշխարհում, և կարծիք կա, որ ժեղուրի առասպեկտները պետք է հնում տեղայնացվեին Թոննդրակ լեռան շրջանում (Ֆ. Հասազ):

Ժեղուրի և Ուլյիկումնիի հակադրությունն իիշեցնում է հնդեվրոպական «Ժիմնական առասպեկտ», ըստ որի, ամսպոայի աստվածը հաղթում է Օձ-վիշապին: Ընդ որում, վերջինիս հնդեվրոպական անունը՝ *wel-, համադրելի է Ուլյիկումնիի առաջին մասին: Այդ քարե երեշի կերպարը իիշեցնում է Հայատանի լեռներում տարածված հնագույն «վիշապ» քարակորողները, որոնք ամենամեծ խոտությամբ հանդիպում են Գեղամա լեռներում և Գեղարքունիքում, Գեղ լեռան վրա և Գեղի ամրոցի մոտ, Գեղամա լճի մերձակայրում (հնմտ. Կումարիի առասպեկտի «սատր լիճը»): Պարզ վերլուծությունն ցույց է տալիս, որ այդ անվանումները կապված են հնդեվրոպական *wel-ի հետ, որը կանոնավոր կերպով հայերենում արտացոլվում է որպես գելու: Իրենք՝ «վիշապները», և նրանց վրայի պատկերներն էլ պարզորոշ մեկնարանվում են օձ-վիշապի կերպարի շրջանակներում: Ուրարտական արքունիքում Գեղարքունիքի նախատիպը համեն է զալիս Ueliku-pi/hī ձևերով (pi-hī և hi-ն ուրարտական ածանցներ են՝ «Ueliku-ական երկիր»): Ըստ այդմ, խուռ. Ullikumti-ն պետք է մեկնարանվի որպես Ueliku-ի գուգահեռը, կազմված խուռ. mmi ածանցով (հնմտ. հնմտ. ուրարտ. pura= խուռ. purame, puramti «ստրոկ»), իսկ Ueliku-ն կապված է հնդեվրոպական *wel-ի հետ, *-k-ստարուվ ածանցով: Այդ քարակորողները շատ հին են՝ նրանց հնագույն օրինակները կարող են բվագրել մ.թ.ա. XVIII-XVI դր.:

Հայկական առասպեկտարանության մեջ հացահատիկային պաշտամունքի մի վիպական հիշողություն կարելի է համարել Խորենացու տեղե-

կուրյունը Հայկյան Շարայի՝ Հայաստանի հացահատիկի շտեմարան Շիրակի էպոնիմի վերաբերյալ: Նրա մասին է հայոց հնագույն առածք՝ «քեզ քո Շարայի որկըրն է, մեր Շիրակայ ամբարք չեն»: Եղած նյութը հնարավորություն չի տալիս միարժեքորեն համադրելու Կումարքի և Շարայի կերպարները, բայց մատնանշում է հացահատիկային աստվածության հետ կապված մի պաշտամունքի կենտրոնացումը Շիրակում, որը միանգամայն բնական է: Արդեն Գ. Ղափանցյանը թեշտորի սրբավայրերի Կոտարմատով անունները համադրել է Շիրակի Կումարի քաղաք անվանը: Բայց Կումարին համադրելի է թվում հենց ենթադրյալ *Komar-ին: Այդ կազմը կարելի է պատկերացնել, օրինակ, այսպիս: Մեղադիր կառ-տարրով տեղանունների իրական հենչողությունը եղել է կոմ-և Կումարքի նախնական կենտրոնի անունը պետք է լիներ *Komar (սեպագրում օ-ն հաղորդվել է ու-ով, իսկ սեպագրի Կոտարու-ն հետազայտմ հայտնի է որպես Կոմանա): Komar-ին ավելացվել է տեղանուններում հաճախ հանդիպող հնդեվրոպական *յօ- ածանցը՝ *Komaryo-, որը հայերենի օրինաշափություններով կտար *Կումայր: Արան էլ հետազայտմ հավելվել է հայոց տեղանուններին բնորոշ -ի ածանցը: Հայկական անվանաբանության համատեքսուում Կումայրին համեմատվել է Քորայրի, Սուրմայրի, Բագնայր, Ավարայր, Հոռոմայր ձևերի հետ, որոնց երկրորդ բաղադրիչները կապում են այր «անձավ» բառին: Նույնիսկ անկախ մեր այս ստուգաբանությունից, Կումայրիի կոմ-բաղադրիչը և Շիրակի հացահատիկային պաշտամունքը հնարավորություն են տալիս ենթադրելու հետմ Կումարքի պաշտամունքի կենտրոնացումն այստեղ:

Կեզծ Պատմաբառուի մի տեղեկության համաձայն՝ Սիրաս աստվածը քենցմանավորում է Ժայռը, որը ծնում է Դիտրիս անունով մի որդի: Վերջինս զոհվում է պատերազմի աստված Արեսի հետ, մենամարտում և վերածվում լեռան՝ Արաքս գետի մոտ: Դիտրիսի լեռը, հավանաբար, Մասիսն է: Այն, ըստ ազգածին ավանդության, կոչվել է Արամայիսի որդի Ամափայի անունով, իսկ ըստ «Վիպասանքի»՝ եղել է վիշապազունների բնակավայր, որը և շոքայիլ է Արտավազորը: Ակնհայտ է, որ այստեղ Սիրասը համապատասխանում է Կումարքին, Դիտրիսն՝ Ուլիկումմիին, իսկ Արեսը՝ Թեշտորին: Ազգածին ավանդության մեջ և «Վիպասանքում» նույնպես մենք գործ ունենք այդ նախնական առասպեկի հետազանցական գործությունների հետ: Ըստ որում, համապատասխանությունները միարժեք չեն: Սիրասը Սիհր-Սիերի արխակի ծնն է, բայց էպոսում Սիերն ինքը այսին վերածնվի ժայռից: Արեսը անվանաբառորեն համահունչ է Արային, որն ինքը Սիերի տիսի մի մեռնող և հառնող կերպար է: Հատկանշական է, որ Սասիսի մերձակա Արաքսի հովիտը հայոց մեջ կոչվել է «Արայի դաշտ». Շարան էլ, Ամասիայի պես, Արամայիսի որդին է: Այսինքն՝ խոտիական առասպեկներին համադրելի այս լեզենդները կապվել են

ազգածին ավանդության որոշակի հերոսների հետ, ընդ որում, տեղայնացած Արարատյան դաշտում և մերձակայքում:

Այսպիսով, հավանական է, որ Ուլիկոսմիի, Թեշուրի և Կոմարրիի առասպելների հճագոյն տեղայնացումներից մեկը եղել է Արևելյան Հայստանում՝ Գեղամա լիճը, Արարատյան դաշտը և Ծիրակն ընդգրկող տարածքում, որտեղ Ծիրակն իր Կումայրի քաղաքով եղել է Կոմարրիի կենտրոնը: Այդ առասպելները թեև հայտնի են խոտիական դիցարանությունից, բայց ծագումով, ամենայն հավանականությամբ, հեղեփողական են: Մեկ այլ համանման կենտրոն ի հայտ է գալիս Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում: Խեթական աղբյուրներում այլուեղ հիշվում է Կոտտահա քաղաքը՝ Եշանավոր իր ամարրույի աստծու պաշտամունքով: Այն համապատասխանեցնում են հայոց Կամախին, որտեղ և Ամի ամրոցն էր, «ամարրոպային» Արամազդի զիսավոր սրբատեղին: Կամախ (*< Камтакаха >*) և Ամի զույգ պաշտամունքային տեղանունները ստուգարանորեն համապատասխանում են Ծիրակի Կումայրիին և Ամիին: Ըստ այդմ, Թեշուրի ցիկլի առասպելները տեղայնացվում են ոչ միայն Հայկական լեռնաշխարհի ծայր հարավում և հարավ-արևմուտքում, այլ նաև հյուսիսում և հյուսիս-արևմուտքում: Հյուսիսային կենտրոնները հավանաբար ավելի հին են, քան հարավայինները:

ФЕЛИКС ТЕР-МАРТИРОСОВ (ИАН)

ПАРАДИЗ – ДАСТАКАЕРТ - ДРАСХАНАКЕРТ

В 1989 г. начались археологические раскопки большого поселения у сел. Бениамин. На огромной территории-более 80 га-были засвидетельствованы следы жизни различных эпох. Экспедиция проводила раскопки архитектурных комплексов поселения, на котором жизнь продолжалась преемственно с периодами разрушений и восстановлений с V в. до н.э. по IV в. н.э., а также некрополь позднеантичного времени - Iв. н.э. - IV в.н.э. Многочисленные и разнообразные материалы раскопок представляют значительный интерес и частично опубликованы в научной литературе. Большой интерес представляет типология памятника этого периода. На основании характера расположения главных комплексов поселения, таких как дворец-святилище на вершине центрального холма, жилые и хозяйствственные комплексы под холмом, памятник в первоначальный период V-IV в. до н.э определен как дастакерт, то есть частное владение земельного аристократа, вероятно, правителя региона Ширак. Найдены в слое IV- III в. до н.э., статуэтки орла и навершия крестов в виде орла позволили предположить, что в это время дворец-святилище перешел в собствен-

ность царей династии Оронтидов Гидарнидов. Находки в слое II в. до н.э., фрагментов стел из белого камня с трехзубчатым оформлением верхней части, характерных для стел царя Арташеса, явились основанием для предположения, что памятник перешел в собственность новой царской династии. Время прекращения бытования дворца-святилища-начало 1 века н.э.-определяется находками монет императора Августа. В определении исторического названия памятника определенную роль сыграло обнаружение в позднеантичном могильнике скелетов с искусственной деформацией черепа, признака характерного, по свидетельству М.Хоренаци, княжескому роду Камсараканов. Все это вместе взятое позволило обратиться к сведению Мовсеса Хоренаци о дарении царем Трдатом III большой виллы царя Арташеса в Шираке, которая именовалась Драсханакерт. Эти факты представляются нам достаточными для обоснования связи исследуемого поселения с названием Драсханакерт.

Մեր ունեցած տվյալներով՝ այս գործընթացն իր նախնական փուլում լիբրանալով համեմատարար դամդադ, որևէ էական ազդեցություն չի ունեցել քաղաքի էթնո-ժողովրդավական և կրոնադավանարանական պատկերի վրա: Ալեքսանդրապոլը պահպանել է իր նախկին հայեցի դեմքը, իսկ բնակչության թիվը շարունակել է ամեն համաշավորեն: Այսպես, եթե 1849 թ. Ֆադենի կողմից Ալեքսանդրապոլի գավառը ուսու աղանդավորներով վերաբնակեցնելու նախազծի մշակման նախօրեին Ալեքսանդրապոլ՝ ունենալով 10260 բնակիչ (Կավказский календарь на 1850 год, Տիֆլис, 1849, ոդ. III), այսպես, Երևանի նահանգում եղլորդն էր Երևանից հետո իր մարդաշատությամբ և առաջինն ամրող Անդրկովկասում իր բնակչության միաստարությամբ (հայեր էին 95,8%-ը, հույներ՝ 1,3%, մահմեդականներ՝ 2,5%-ը), ապա 1850-1851 թթ.՝ վերտիշյալ ծրագրի արդեն իրազդրման պահին, քաղաքային բնակչության թիվը հասակ 11280 մարդու (Документы и материалы по истории армянского народа. Социально-политическое и экономическое положение Восточной Армении после присоединения к России (1830-1870), Еր., 1993.): Այս շրջանում է, որ իրու ցարական կառավարությամ՝ Արևելյան Հայաստանը ուսուներով վերաբնակեցնելու ծրագրի առաջին թույլ նկրտումները. հայ, հույն և մահմեդական բնակչության կողքին Ալեքսանդրապոլում հայտնվեցին նաև առաջին ուսու վերաբնակները՝ ընդամենը 11 մարդ, որ կազմում էր քաղաքի ընդհանուր բնակչության միայն 0,1%-ը: Իսկ քաղաքային բնակչության մնացած 99,9%-ը բառ ազգությունների ուներ հետևյալ պատկերը. հայերն Ալեքսանդրապոլում 1852թ. ճնշող մեծամասնություն էին և կազմում էին բնակչության 94,9%-ը (10696 մարդ), մահմեդականներ էին 3,6%-ը (410 մարդ), հույներ՝ 1,4%-ը (163 մարդ):

ԿԱՐԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ (ՊԻ)

1919-21թ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ԳԱՎԱՐԻ ԿԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾԵՐԻ ԵՎ ԲԱԿԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

XX դարի սկզբին Ալեքսանդրապոլի գավառը շարունակում էր մնալ Երևանի նահանգի ամենահոծ հայկական բնակչություն ունեցող գավառ՝ իր չորս ոստիկանական տեղամասերով Մեծ Ղարաբիլսայի, Քավառլուի, Ալեքսանդրապոլի, և Աղինի: 1916թ. տվյալներով՝ գավառն ուներ 176200 բնակչություն, որի բացարձակ մեծամասնությունը (90%) հայեր էին: Նաև սրանով պիտի բացատրել բորբական իշխանությունների կողմից արևելահայության այդ խոշոր հաստվածի բնաջնջման քաղաքականությունը 1918-20թթ., որ հայերի նկատմամբ իրականացվող ցեղասպանության քաղաքականության վերջին ակորդը պիտի լիներ: 1918-1920 թթ. ընթացքում երկու անգամ Առաջին համաշխարհայինում պարտված Խորքիան պատմաքաղաքական տարրեր իրադրություններում դիվանագիտական խարդավանքներով տիրացավ Ալեքսանդրապոլի գավառին: Վտանգի դեմ անօգնական մնացած բնակչության տնտեսական քայլայման և ֆիզիկական բնաջնջման բորբական քաղաքականությունը, որ արևմտահայության բնաջնջման քաղաքականության ուղղակի շարունակությունն էր, Ալեքսանդրապոլի գավառում ունեցավ իր առաճնահատկությունները: Խոսքն առաջին հերթին վերաբերում է իրենց պլանների իրականացման մեջ և իրենց գործողություններին օրինական տեսք տալու համար բուրքերի կողմից տեղական կառույցների հնուա օգտագործմանը:

Խորքերն առաջին անգամ Ալեքսանդրապոլ մտան 1918թ. գարնան՝ մայիսի 15-ին, և մնացին մինչև դեկտեմբեր՝ այդ ընթացքում հնորդեն օգտագործելով տեղական, դեռևս ցարական կառավարությունից ժառանգություն մնացած օրենքներն ու վարչական կառույցները: «Դա երանց հնարավորություն էր տալիս «օրինական» տեսք տալ գավառի խաղաղ բնակչության քաղանին և սպանդին: 1918թ. բորբական օկուպացիայի հետևանքով Ալեքսանդրապոլի գավառի բնակչության թիվը կտրուկ նվազեց, միաժամանակ նկատեի դարձավ զյուղական բնակչության հետք դեպի Ալեքսանդրապոլ, իսկ քաղաքի հաստկացն ունենոր դափներկայացուցիչներից շատերն էլ շտապեցին տեղափոխվել Խոհիս: Ալեքսանդրապոլը, լցվելով քարար գաղրականներով, զգալիորեն կորցրեց իր ընդգծված հայկական բնույթը: Թեև բորքերի հեռանալուց հետո վախստականների որոշ մասը հետ վերադարձավ, այսուանայնիվ Հայաստանի կենտրոնական վիճակագրական բյուրոյի 1919 թ. հունվարի տվյալներով՝ գավառի բնակչությունը կազմեց ընդամենը 152414 բնակիչ (ծխերի թիվը՝ 18220): Գավառում բնականին մեծ թիվ էր կազմում Կարսից փախած և սահմանների բացմանը սպասող գաղրականությունը, որի գերակշիռ մասը, մինչև անգլիացիների կողմից Կարսի շրջան վերադառնալու բույլտվու-

թյան ստացվելը, դատապարտված էր սովոր ու մահվան: Բռնկվում են նաև համաճարակներ, որոնցից տուժում է հատկապես Ալեքսանդրապոլի բնակչությունը:

Դժկամությամբ կատարելով Մուլուսի զինադադարի պահանջները՝ բոլորքը 1918թ. դեկտեմբերի սկզբին բողեցին Ալեքսանդրապոլի գավառը, որը մտավ Հայաստանի Հանրապետության կազմի մեջ՝ իր 25 օյուղական հասարակություն կազմոյ 129 գյուղերով: Նշանակվեցին գավառի և նրա չորս գավառամասերի կոմիսարներ, ավելի ուշ 1919թ. մայիսի 4-ին անցկացվեց տեղական ինքնակառավարման մարմինների վերակազմավորում:

1919 թվականին Հայաստանի կառավարության մի շարք միջոցառումների շնորհիվ (Երևանից որոշ հիմնարկությունների, մասնավորապես համապատասխան, երկարուղային վարչության, փոստ-հեռագրատան տեղափոխումը Ալեքսանդրապոլ) նկատվեց քաղաքի բնակչության թվի աճ: Վերջինին նպատեց նաև կառավարության որոշում՝ Աղրեջանից և Վրաստանից բռնագաղթած հայ բնաւանդներին գավառում և հիմնականում Ալեքսանդրապոլում տեղավորելու մասին:

1920թ. նոյեմբերին Ալեքսանդրապոլի գավառը կրկին գրավվեց բոլորի կողմից, և սկսվեց գավառի բնակչության տնտեսական և ֆիզիկական բնաջնջնամ մի նոր փուլ: Փորձելով փրկել բախտի քմահաճոյիրին թղթական հայ բնակչությամբ բոլորական նոր սարսափմերից, տեղի բոլշևիկները համաձայնում են Ալեքսանդրապոլում խորհրդային իշխանություն իշխակելու բոլորերի առաջարկին, և նոյեմբերի 17-ին, բոլշևիկների և բոլորքերի փոխադարձ համաձայնությամբ, Ալեքսանդրապոլում ու գավառում հոչակվում է խորհրդային իշխանություն: Նորաստեղծ Հեղկոմի իշխանությունը բոլորքերը ճանաչում են այնքանով, որքանով այն պետք էր իրենց մոտադրությունները իրականացնելու համար: Խորհրդային իշխանությունն իրենց ծառայեցնելու նպատակով բոլորքերը քաղաքում և գյուղում ստեղծում են իշխանության մարմինների լայն ցանց: Եշանակում են քաղաքի և քաղաքամասերի, գավառի և գավառամասերի կոմիսարներ, քաղաքային և գավառային միլիցիա: Հայերին քաղանելու և սպանելու համար բոլորքերը չեն խորշում ոչ մի միջոցից: Խորհրդային Հայաստանի պետական հանձնաժողովի տվյալներով՝ մինչև բոլորքերի Ալեքսանդրապոլի գավառից դուրս գալը՝ 1921թ. ապրիլը, գավառում սպանվել է 30000 մարդ, 32000-ը մեռել է սովոր, գերեվարվել է 26000-ը:


Պատկերացում կազմելու համար բոլորական օկուպացիայի ընթացքում գավառի և հատկապես Ալեքսանդրապոլի բնակչության կրած անդամակի կորուստների մասին, բերենք ընդամենը մի փաստ: 1926 թվականի մարդահամարի տվյալներով՝ Լենինական քաղաքն ուներ 42313 բնակչ, մոտ 10000-ով պակաս 1916թ., երբ քաղաքում բնակվում էր 51800 մարդ: Եվ սա այն դեպքում, երբ Սերժափոր Արևելքից, Կոստանդնու-

պղսից և Հունատանից 1924-25թ. Հայատան զադրած հայերի զգալի մասը ևս բնակեցվել էր Ալեքսանդրապոլում: Այնուամենայինվ, նոյնինչու տասը տարի անց քորքերից էապես տուժած քաղաքի բնակչությունը չհասավ 1916թ. մակարդակին:

ԱՎԱԳՅԱՆ ԻՆԳԱ (ԿԱԹ)

ՍՈՍԵ ՄԱՅՐԻԿԻ ԱՐԱՇԱՅՏ ՆԱՍԱԿԻ ԵՎ ԼՈՒԱՆԱԿԱՐԻ ՃՈՒՅ

2002-ի դեկտեմբերին «Կումայրի» արգելոց-քանզարանը նախաձեռնեց Շիրակի մարզում մասնավորապես Գյումրիում, Մեծ եղեռնի ականատեսների բողած գրավոր և իրեղեն աղբյուրների որոնողական զիտարշավ, որը լույս աշխարհ հանեց հանրությանը դեռ անծանոթ արժեքավոր



Այսուհետ:Վերօդինմերիս մեջ հասլկապես ուշագրավ են Սեծ եղեռնի ականատեսների գրառումները՝ հուշագրություններ, նաև եղակի լուսանկարներ, որոնք շուրջ հարյուրամյակի պատմություն ունեն և զայխ են փաստագրելու և լրացնելու ականատեսների հիշողությունները։ Սեծ որոնումների արդյունքում հավաքված շուրջ չորս տասնյակի հասնող նամակների մեջ, որոնց հենքինակները արհավիրքի ականատեսներն են, առանձնանում է հայ ազգային-ազատագրական շարժման ականավոր դեմքերից մեկի՝ Աղբյուր Սերոբի (Սերոբ Վարդանյան) կոնց՝ Սոսէ

Սայրիկի (Սոսէ Վարդանյան) 1949-ին զրած մի նամակը, որի հետ Սոսէ Սայրիկը Լենինական է ուղարկել նաև իր փորքիկ լուսանկարը:

Եզիստոսի ՀՕՄ-ի ներկայացուցիչ Սոնա Բայրամյանի հաղորդմամբ՝ իր կյանքի վերջին տարիները Սոսէ Սայրիկը անցկացրել է երեք հայ ընտանիքների հոգածորյան ներքո, որտեղից մեկը Խանամիրյաններն են: Սյուս ընտանիքի մասին անդամություն կարևոր է բաղկացնել նրա լենինականյան նամակից, որում Սոսէ Սայրիկը մեծագույն ակնածանուվ է խոսում 1949թ. Լենինական տեղափոխված Կարապետ Շնայդելանի և նրա ընտանիքի մասին: Սառու նեկայացնում ենք նամակը՝ թվագրված 1949-ի փետրվարի 21-ով. Արդյոք Սոսէն ի՞նձն է գրել նամակը: Պարզէլու համար դիմեցինք ՀՀ Ազգային արխիվ, որտեղ Հայաստանի առաջին հանրապետության կառավարության անդամ՝ ռազմական ճախարար Ռուբեն Տեր-Մինասյանի փոնդում (ճախանական զորք N 113) պահպան են Սոսէի Ակրասնորիայից Ռուբենին ուղարկված ևս երկու նամակ, առաջինը՝ «19 Յունիս 1939 Աղեքասնորեա», երկրորդը՝ «10 նոյ. 1939 Աղեքասնորեա» թվագրություններով: Այս



24/7/1919
Այօս պարբեր այս
դրույց մեր կը իրավ
եմ դժվարութ
անուշուրբան.
Այօս Այօս Այօս-իրավ
Հ Լ
- 1
- 618 - 748

նամակների և մեր ձեռքի տակ եղածի նախնական համարումը թույլ է տայիս ենթադրելու, որ դրանք ամենայն հավանականությամբ գրված են տարրեր ձեռագրերով, թեև առայժմ դրանց ձեռագրափորձագիտական թմբություն չի արվել: Կարծում ենք, որ գոնե մեր ձեռքի տակ եղած նամակը, որ գրված է նախադարձից տասը տարի անց, երբ Սոսէ Սայրիկը շարք 80 տարեկան էր, կարող է նրա կողմից թեղադրված լինել: Դա ավելի հավանական է թվում, մասնավոր որ նամակի հետ ուղարկված նրա լուսանկարն է՝ մակագրված ունի Սլյաշի, որը Սոսէ Սայրիկի կարծիքով՝ իր բրոց Նվարդ աղջկա տան պիտի լիներ, և թվագրված 1949-ի փետրվարի 24-ով, գրված է մի բարորդվիճ այլ ձեռագրով:

Անկախ այս ամենից՝ բոլոր երեք նամակներն էլ, որ ունեն նույն՝ «Սուշ-Սերոք Աղքակ» ստորագրությունը, աչքի են ընկնում նաև գրեատօնի և բովանդակության ամուր աղերսներով։ Ենթանձնական բնույթի են, արտացոլում են սիյուռնում ընտանիքը կորցրած և միայնակ Մեծ Մայրիկի անսահման կարուտն ու վիշտը, որ ողջ կյանքի բնթացրում ուղեկցել են նրան, մինչև մահ տանջել և կեղեքել նրա հոգին։ Այդ նամակներում ավանդապաշտ հայ կնոջ անկորնչելի ծգտումն է՝ նոյնիսկ մահից առաջ գտնելի իր կենդանի մնացած մերձավորներից կամ բարեկամներից որևէ մեկին՝ քաջ գիտակցելով իր ազգի ճակատագրի յուրահատկությունը։ Խայր կարող է կորցնել ամեն ինչ, սակայն հույսը՝ երբեք։

ԳԱՅԱՆԵ ԾԱԳՈՅՑԱՆ (ՀԱԻ)

ԸՆՅՈՅ ԾԱՐՍԱՆԻՔԻ «ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ՈՐՈՇ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Յուրաքանչյուր ազգագրական ուսումնասիրություն նախնառաջ հենված է որևէ նկարագրության վրա։ Սակայն, երբ գործ ունենք այնպիսի բարդ երևույթի հետ, ինչպիսին է ծեսը, որտեղ միաժամանակ կիրառվում են արտահայտության տարրեր ձևեր (օրինակ՝ խոսք, պար, երգ, խաղ, տարազ, ինաստավորված որոշակի դասավորություն տարածության մեջ ևն), ապա նրանց նկարագրությունը բոլոր դեպքերում հանգեցնելու է նկարագրող լեզվի որույն «քերականության» ձևակրումանը, ինչպես նաև նկարագրվող տեքստի որոշակի ընտրությանը, խճրագրմանն ու «քաղզմանությանը»՝ ոչ խոսքային լեզվից՝ խոսքայինի։ Այսպիսի քերականությունը հաշվի է առնում նաև տեքստը կազմող հեղինակի կողմից նախընտրած այն գրական ժանրի կանոնները, որոնք ազդում են ներկայացվող բովանդակության վրա՝ մտցնելով տարրեր շեշտադրություն, որոշ սահմանափակումներ և հաստոկ տեսանկյուն։

Այս առումով առավել հետաքրքիր է հարսանիքների գրանցումների ու նկարագրությունների դիտարկումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարսանյաց ծեսի գրանցումը ոչ միայն մասնագետ-ազգագրագետների ուշադրության առարկան է, այլ նաև վերածվել է ժողովրդական ստեղծագործության ուրույն գեղարվեստական ժանրի (հնմտ.՝ Ա. Գուռա, 1999, գ. Ծագոյան, 2000)։

Որպեսզի սահմանագատենք հարսանիքների նկարագրությունների ժանրային ազդեցությունը ծեսի իրական բովանդակությունից, առաջարկում ենք համեմատել գրավոր տեքստերի մի քանի հիմնական կետեր։ ինչպես օրինակ՝ նկարագրությունների և բուն նկարագրվող հարսանիքների սկիզբ ու վերջը, հարսանիքի պայմանական բաժանումներն ըստ ներածեսերի և կամ «շարադրության» գոլիսների, նախապատրաստական

(«սևզիր») ծեսերն ու համապատասխանորեն՝ հարսանիքի «շիտակ» կամ որպես իմնական նշվող մասերը: Առանձին ուշադրության է արժանի իրական ծեսի կառուցվածքային որոշ տարրերի համապատասխանեցումը հարսանիքի գրափոր նկարագրությունների կետագրությանը (հնմն. օրինակ՝ հարսանիքի տոնական անկառավարելի մասը և այդ պահերը նկարագրություններում բազմակենտրով ներկայացնելը):

Խոսելով հայոց հարսանիքի «քերականության» մասին՝ մենք առաջրկում ենք ծանրանալ ոչ միայն և ոչ այնքան գրափոր նկարագրությունների՝ վերը նշված իմաստով «քերականության», որքան ինքնին ծիսական գործողությունների ընթացքի՝ որպես սեմանտիկ տեքստի, օրինաչափությունների վրա (հնմն. Բ. Ստեփեն Հայրապետի աշխատանքը՝ Եղիշե Մանուկյան աշխատանքը՝ Հայոց հարսանիքի կազմակերպման այնպիսի սկզբունքներ, ինչպիսին են ծիսական ժամանակը (հնմն.՝ հարսանից անդամությունը՝ կատարելու արգելված ժամանակաշրջանները, հարսանիքի տևաղությունը, պատկանագործության և հարսանելիք այլ ծեսերի ամրագրված շարաթքա օրերը, գիշերն ու ցերեկը հարսանիքում, ժամանակի ծիսական արտահայտչամիջոցը՝ ճայնային ազդանշանները որպես սկզբի և վերջի նշան, հանդիսավոր ճայնանշան և տոնական աղմուկ) ու տարածությունը (տոնական բաց երազարակ և ծիսական սրբազն կենտրոն՝ յորբանի այլընտրանքային տարրերակներ, հարսանից բակորի ճամապարեր, դրախտային այգու թեման հարսանյաց տեսաֆիլմերում, տաճ շեմը, հարսանից տունը որպես առասպելարանական կուսնու, հարսի և կինայի տեղերը ավանդական և ժամանակակից հարսանիքում, հարսանից տարածքի երևակայական կենտրոնները. հարսանից տորք):

Հարսանից «քերականության» մեջ կարելի է նոցնել նաև ծիսական տեքստի կազմակերպման մի քանի մեխանիզմներ, որոնք մեզ հաջողվել է ատանձնացնել՝ տալով հետևյալ պայմանական անվանումները.

- ծիսական մնանատ (ծիսական որոշ գործողությունների սրամարանական կապի միջոցով ծեսի բովանդակության վերականգնում՝ անտեսելով այլ գործողություններով ընդհատումը, օրինակ, դանակ կամ կողպեր փակելն ու բացելը, որոնց արանքում անցնում են հարսանից ծիսական տարրություններով հազեցված ժամեր և նոյնիսկ օրեր),
- ծիսական ազգորիմ (ծիսական գործողությունների և պայմանների այնպիսի կապակցվածություն, որը բերում է որոշակի գործողությունների վերաբարությանը այլ պայմաններից նույնիսկ մեկի առկայության պարագայում, օրինակ, հարսանիքում որևէ դրան կամ շեմի առկայությունը ենթադրում է «գրու բռնելու» ծիսական գործողությունների ամրող շարքը. փակել, պահանջել գումար, սակարկել, գումար ստանալ, բացել (հնմն. հարսի տաճ, եկեղեցու, նաև մեքենայի «գրու բռնելու» ինքնարերարար կրկնվող այս ծեսը),

- ծիսական մեջքերում (անցումային, օրացուցային կամ ժողովրդական այլ ծեսերի և հարսանիքի փոխազդեցությունների այնպիսի շարք, որն արդեն ընկալվում է որպես տվյալ ծեսի բաղկացուցիչ տարր, օրինակ, համաձայն որոշ ընկարագրությունների, հարսի մոմերով պարփ հարմարեցումը գիշերվա ժամը տասներկուսին՝ ընդօրինակում կամ մեջքերում անանորյա ծեսից, ծննդյան տորթի ծիսականացված առկայությունը հարսանիքում և ընդհակարակը, օրինակ, դպրոցականների վերջին զանգի ժամանակ մեքենաների զարդարումը, բավորի աղմկալից շրջազայությունները և հարսանյաց ծեսից մի շարք այլ մեջքերումներ:

Այսպիսով, հարսանիքների մեջքագրությունների վերլուծության վերը բերված մոտեցումը, կարծում ենք, որ հնարավորություն է տալիս հարսանյաց ծեսի որոշ կառուցվածքային և իմաստարանական անփոփոխակների բացահայտմանը:

ԺԵՆՅԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ (ՀԱԻ)

ՕժիՌԻ ՏԻԿՆԻԿՈՎ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

Հայ ազգագրության մեջ ծիսական տարրեր արարողությունների անհրաժեշտ առարկան համարվել է մարդու կրկնակ տիկնիկը, որն իր մեջ ամփոփել է մարդկային բոլոր հատկանիշները:

Գյումրի քաղաքի կենցաղում առանձնահատուկ նշանակություն է ստացել հարսանեկան արարողությունների հետ կապված օժիտի տիկնիկը, որի տարրեր դրսնորումները պահպանվել են մինչև օրս (հարսանեկան երթերի առաջնորդ):

2001թ. աշնանը՝ «Աշխարհի հիշողություն»՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային ծրագրերի շրջանակներում կատարված գրասումների ժամանակ, բազմաթիվ տեղեկություններ ու վկայություններ արվեցին ասացողների կողմից, սակայն ամենաարժեքավոր տեղեկությունները գրանցվեց Գյումրիի քաղաքի բնակիչ, նախկին մանկավարժ Էմնա Մարտիրոսյանից (75 տարեկան), որի տատը քաղաքում հայտնի է եղել որպես օժիտի և խաղալու տիկնիկ պատրաստող:

Հաստ եղած բազմաթիվ տեղեկությունների՝ օժիտի տիկնիկը ունեցել պատրաստելու ավանդութային լայն դաշտ և առանձնահատկություններ.

1. Այն պատրաստվել է հարսանեկան նախապատրաստրաստությունների ժամանակ՝ պահպանվելու մեջ-երկու օր առաջ, զարտնի:

2. Պատրաստող հայտնի էր՝ հարսի հայրական կողմի տատը, որին վերագրվել է հնայական հաստուկ գորություն: Երբեմն տատը փոխարինվել է հասուկ անձով, եթե նրա զորության հնայության համրավը մեծ է եղել:

3. Տրկնիկի հետ շփվելով իրավունքը պատկանել է միայն հարսիմ, որն ամրող կյանքում պետք է նրան պահեր ու պահպաներ։ Վերջնական նպատակը՝ որպես ժառանգություն առաջնել աղջկան փոխանցելն էր։

4. Տրկնիկի շուրջը պահպանելու է արգելք (բաց), այս պատրաստելու միակ պատճառարանությունը փեսայի տաճ աղջկի երեխային նվեր ուղարկելն էր, իսկ իրականում այն երեխայի հետ կապ չուներ։ Ընդհակառակը, պահում կմն իրենց երեխաների աշքերից ու ծեռքից հեռու, սովորաբար անկողնու ծալքի մեջ։

5. Տրկնիկի կորուսոր կամ անհետացումը համարվել է խիստ բացասական երևոյթ և բացատրվել որպես չափ գործունեություն։

6. Նորապսակմերի՝ գերդաստանից բաժանվելու դեպքում նորաստեղծ ընտանիքն իր հետ է տարեկ օժիտի տիկնիկը։

7. Օժիտի տիկնիկը նոր ստեղծված օջախի պահպանողն ու զերմացնողն էր, միջնորդը՝ գերդաստանի կմն հովանավորների առաջ, որը հարսին պետք է պահպանի չար ուժերից, օգնի նրան պատղավորվելու և ծննդարեկու։

ԼԻԼՅԱ ԱՎԱՆԵՍՅԱՆ (ՀՊԹ)

ԵՐԿԵՐԵՍ ԿԱՐՄԵՏԻ ԵԶԱԿԻ ՆՄՈՒԾ

1973թ. Հայաստանի պատմության թանգարանի ազգագրության բաժնի աշխատակիցները Գյումրի կատարած գիտարշավի ժամանակ ձեռք են բերել օժիտի բուսանախչերով մի կարպետ, որը ուսումնասիրողների որոշակի շրջանակներում անվանվել է «Քաղկանյան» կամ «Եվրոպական»։ Այս կարպետը գործվել է Բարձր Հայքում XIX դ. առաջին կեսին, չափը՝ 140x265 սմ, նյութը՝ վաշ և բրուր։

Գործվածքը դասվում է երկերես կարպետների խմբին։ Սակերեսը գործված է կարմիր, մանուշակագույն, սպիտակ գոյներով։ Գործող թելը, կորությամբ խախտելով շարքերը, կարող է իջնել կամ բարձրանալ, ինչը բնորոշ է ասեղնագործության մեջ հայտնի լիցք տեխնիկային։

Զարդաների խիստ երկարավականացված ոճավորումը այս կարպետի մակերեսին չի պահպանվում։ Պատկերները ձեռք են բերում պլաստիկ կոր ուրվագծեր։ Կարպետի նկարի հորինվածքը համահունչ է բիրիխական թեմաներից դրախտի պատկերին։ Ծաղկեճյուղերը, եղենական ծաղիկներն ու պտուղները, բռչուները ընտանիքի, մայրության, պտղաբերության խորիրդանիշներն են։ Այդ պատճառով էլ դրանց պատկերները ավելի հաճախ հանդիպում են աղջկան օժիտ սրվող գործվածքների վրա։

1984թ. «*Hal» ամսագրում (թիվ 3) հրապարակվել են նոյեմբաշխայի կարպետներ, որոնք մինչև XIX դ. կեսերը լայն տարածում ունեին Հյուսիսային Եվրոպայում: Նման կարպետները գործում էին նոյեմբիսկ Ըվելքիայում: Դրանց հիմնարենը, եզրաքելը, գլուխները վուշից են, գործող թելը՝ բրդից, գույները՝ սև, կարմր, սպիտակ են, զարդարութիվները բիլիական այգիների պատկերներ են ինչպես մեր նկարագրած կարպետի վրա: Նոյեմբաշխությունը ասվում է, որ կարպետի այս տեսակը մոտառ է գործել Հյուսիսայի Եվրոպա XVII դարում Սերձավկոր Արևելքից: Ժամանակագրական առումով այն համընկնում է հայ վաճառականների ակտիվ մուտքի հետ դեպի Հյուսիսային Եվրոպայի շուկա: Նշվում է նաև, որ այս կարպետները, ինչպես Հայաստանում, դրեւ են հարսանելան օժիտի մեջ:*

Կարսում գործված ճմանօրինակ կարպետ է հրատարակված U. Դավթյանի «Հայկական կարպետ» գրքում:

Եվրոպական համարվող կարպետների այս տեսակի հետադարձ մոտառք Բարձր Հայք XIX դ. բացառվում է, ինչը հաստատում է, որ գործվածքի այս տեսակը տեղական ծագում ունի:

ՍՎԵՏԼԱՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ (ՀԱԻ, ՀԱՊԹ)

ԲԱՐՁՐ ՇԱՅՔԻ ԶԱՐԴԱՐԱՍԱԼԻՐՈ. ԶԱՐԴ ԵՎ ՆԵԱՆ

Զարդը տարագի համակարգի կարևոր բաղադրիչներից է: Իբրև ավանդական մշակույթի տարր՝ այն արտահայտել է կրողի գեղագիտական նախափորությունները և գեղեցիկի ընկալման առանձնահատկությունները, աշխարհայացքը, կարգավիճակը, կենսական այս կամ այն իրադրությունը (առօրյա, սոն, ծես):

Զարդարանքն ընկած է տարագի ծագման հիմքում: Զարդ բառը հայերենում ստուգարանվում է որպես ծև, կարգավորություն, սարք, և բառի նախնական ծևի արդին է: Ուշագրավ է, որ տարագի հոմանիշներից մեկը ևս ծև, կերպ բառն է:

Գործառության (Փունկցիոնալ) տիպարանությունը ցույց է տալիս ոչ քեզ զարդը որպես ինքնին իր, այլ դրա նշանը, իմաստափորիրդանիշը, դրա նկատմամբ մարդու վերաբերմունքը, զարդի կիրարկմամբ այս կամ այն կենսական իրադրության տարրերակումը:

Զարդն ուներ սոցիալ-դատանելական ցուցիչի դեր: Եթե ամուսնացած շամուսնացած տարրերակումն իրականացվում էր որոշակի զարդատեսակների առկայությամբ կամ դրանց նկատմամբ կիրավող թարուի ծևով (շամուսնացած աղջիկն իրակունք չուներ արծաթն, ուսկե գոտի, աջ ծեռքի

մատնեմատին ուսկյա մատանի կրելու), ապա սոցիալական ցուցիչն առանձնահատուկ զարդարանք է իր ենթադրությունը: Ընդամենը՝ հարուստ խավերու զարդերի տեսակամին բազմազան էր ու քանիշարժեք:

Հայկական միջնադարյան մանրանկարչության էջերում պահպանվել են որոշ պատկերներ, որոնք ակնհայտ գուգահեռներ ունեն Վասպուրականի, Բարձր Հայքի տարազայինքներում գործածված զարդերի հետ: Հայ աղջկա օժիտի մեջ միշտ եղել են զարդարանքի առարկաներ: Կարինում, Շիրակում, Զավախիքում գործածվել են սև սաքե, մարջանե, մարգարայա ուլունքաշաղթեր: Մեծ տարածում են ունեցել ուսկյա, արծարյա, ձվածե, ձկնակերպ, բռչնածե և բրւսանախշ, ակնազարդ կախիկներով վզնոցները: Այս համալիրում առանձնապես առատ կիրառություն ունեին մարզարտակու զարդերը՝ վզնոցներ, բռնքակախիկներ, ճակատազարդեր՝ մարզարտի և ուկու համալրությամբ:

Բարձր Հայքի կանանց զարդերից էին եռաշարք ուկինների շարաններից վզնոցը, ուսկյա կամ արծարյա զարդարտախտակներով մանյակը: Շատ հարգի էին ուսկյա, արծարյա սևադապատ բրւսանախշերով հարդարված (յուրաքանչյուր ծեռքին մելքական) մանրարութ տեխնիկայով կամ ցորենահյուսքով արված ապարանցանները:

Շիրակ-Զավախիքում հարսին նվիրել են հետույալ զարդերը. ուկենդապատճենոց, ականջակալ (զարդ), ճակատազարդ կտոց, ուկենատանիներ, բռնքակախիկներ, ուկեն շրա, կրծքի ուկեն բրուցներ, ուկենաշարք կրծքազարդ, որոնք ուրվել են մետաքսյա ստուկապ-բոխչայում:

Կիրառական, գեղագիտական բնկալումներից զատ՝ զարդերի վրա եղած ակններին վերագրվել է նաև բրւսական նշանակություն: Այսպես, մարգարիտն օգտակար է համարվել հավկուրության, աշքի այլ հիվանդությունների, որոշ դիմահարդար բրւսումների համար: Պատահական չի թվում դրանց կիրառությունը բռնքակախիկների և ճակատակալների ձևով: Հայոց զարդարանքում գործածվել են նաև փիրուզ, մարզան, որոնցից առաջինն օգտակար էր տեստորթյան համար, երկրորդը՝ մոռացկութության, ուղեղի ցնցման, աշքի, սրտի հիվանդությունների դեմ: Զնրուտը գործածվել է տեստորթյունը կարգավորելու և օծի խայրոցների դեպքում: Քաղաքային կենցաղում, մանավանդ հարուստ խավերի շրջանում, շատ հարգի են եղել ալմաստե ակները, որոնք տեղադրվել են մատանիների, բռուցների և ականջօղերի ակնախտողներում: Ենթադրվել է, որ այդ քարերը ապահովում են իշխանություն և հաջողություն, օգտակար են ստամփու բրւսման, հիշողության պահպաննան համար, ունեն հակարույնի գործություն:

Փաստուն գեղեցկացներով մարդուն, ավելի ակնահաճո տեսք տալով նրան, շեշտելով սեռատարիքային կարգավիճակը՝ զարդերը միաժամանակ միտում են ունեցել պահպանել կրողի առողջությունը, հիվանդության դեպքում բրւսել նրան: Սարդու առողջության պահպաննան նազ-

տակով որպես չարխափան միջոցներ գործածվել են հմայիլ-պահպանակներ՝ եռանկյունաձև զարդամասով, մահիկաձև կախիկներով, սև կամ կապույտ-սպիտակ գունային զուգորդումներով աշքուղութեանը, երկաքբենակներ, զգնոցներ, ապարանջաններ, մատաճներ: Հայոց մեջ կայծակի հարվածներից զերծ մնալու նպատակով կրել են դարրնի պատրաստած պողպատե մատաճներ:

Կանայք կրել են ոսկյա, արծարյա, սղոննայ՝ առանց ակի և ակով (քանկարծեր և կիսաքանկարծեր քարերով) մատաճներ:

Ազաշկերտում, ավելի ուշ՝ նաև Արքիկի քրօնանի որոշ զյուղերում երիտասարդ աղջիկները, կանայք կրել են սև ոսկուներով ուռի ապարանջան, բայ որում, քայլելիս դրանք անպատճառ երևացել են, հավանաբար չար ուժերին հարվածերու դիտավորությամբ:

Սունձնապես ուշադրության արժանի է երիտասարդ կանանց, աղջիկների գործածած արծարյա զլիսազարդ-գդակ թասակը՝ թռչնակերպ, շերեփուկանման, զնդաճև կախիկներով: Այն դրվագազարդ է և ասես արևի սկավառակ լինի: Բարձր Հայրում այն դրոշմազարդ և արևի ճառագայթներ իհշեցնող զծանախշերով էր:

Բարձր Հայրում աղջիկները գդակի վրա կրել են կիսալուսինների (նորերի) շարան՝ տերևիկներով, շղթայիկներով և հմայիկներով հանդերձ, իսկ բազմաթիվ ծաներին (մինչև քառասուն) ամրացրել արծարյա զնդիկներով և շղթայիկներով ծամբելը:

Ազգագրական մյուս խմբերի, առանձնապես զանգեզորցինների համեմատությամբ, Ծիրակի և Զավախքի հայերը, ավանդապահ լինելով, խնամքով պահել և այժմ էլ պահպանում են ժառանգություն ստացած զարդեղներ՝ դրա նկատմամբ դրսարենով զմահատամքի ավանդական, ինքնատիպ զծեր: Ներկայումս էլ վերտիշյալ շրջաններում կենսունակ է հազուս - կապուստի, արդուզարդի նկատմամբ ունեցած պաշտամունքը, նկատելի է զարդեղնենի հեղինակավոր դերը: Գյումրիամ, Ախալքալաքում, Աղսալցիսայում այժմ էլ շատ հարզի են ոսկյա և արծարյա ավանդական կամ նույն ոճով պատրաստված զարդերը:

ՍԱՄՎԵԼ ՄԿՐՏՉՅԱՆ (ՀԱԻ)

ՇԻՐԱԿԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏՈՆԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ ՇԱՅ ԻԹԱՆՈՒ ՆԵՐԵԹԽԿ ԽՄԲԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՍԱԼԻՐՈՒՄ

Էրնուոցիոդիական հետազոտությունները * ցոյց տվեցին, որ ներեքնիկ գործոնի ազդեցությունը հայոց կենցաղում տարածված առանձին

* Ծան. Էրնուոցիոդիական հետազոտություններն անցկացվել են 1980-1990-ական թթ. ՀՀ քաղաքային և զյուղական բնակավայրերում, ուր բնդզրկված էր նաև Ծիրակի մարզը:

սովորի կամ տոնական համայինների կենցաղավարման մասշտարների վրա շատ էական է:

Սույն ուսումնասիրության աշխարհազրությունն այնպիսին էր, որ ՀՀ պատմազգագրական նարզերի (Այրարատ, Գեղարքունիք, Լոռի, Տավուշ, Սյունիք և Ծիրակ) դիտարկված բնակավայրերը գրեթե ամրողությամբ ներկայացնում են տոնական համակարգի (ընդհանրապես՝ կենցաղի ու մշակույթի) նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունք ունեցող մեր էքսուսի հիմնական ներկրնիկ խմբերը, որոնք են՝ ՀՀ-ում ներկայում բնակվող արևմտահայերի, պարսկահայերի և տեղաբնիկների սերումները:

Ըստ հետազոտության արդյունքների՝ կրտնականդական տոներն (Քրիստոսի Ծննդա, Տեսանքնառաջ, Վարդանանց, Զատիկի, Համբարձում, Վարդական, Ս. Աստվածածնի Վերափոխումն, Խոչվերաց և այլն) ամենից շատ տարածված էին արևմտահայ և պարսկահայ ներեթնիկ հաճրույթների սերումներով վերաբնակված շրջաններում։ Այդ տոներն առավելապես կենցաղավարում էին Ծիրակի պատմազգագրական մարզի քաղաքային և գյուղական բնակավայրերում։ Էթնոտցիոնիկական ուսումնասիրություններն անցկացվել էին Գյումրի քաղաքում, Այսուրյանի ավանում և Այսուրյանի տարածաշրջանի այն գյուղերում (Լեռնուտ, Կապս, Սարմաշեն, Վահրամաբերդ), որոնք մեծամասամբ բնակեցված էին արևմտահայերի սերումներով։ Այրարատում (Աշուարակ, Բյուրեղավան, Էջմիածին, Արմավիր) և Երևան քաղաքներում, ինչպես նաև Էջմիածինի տարածաշրջանի գյուղերում, որոնք հիմնականում պարսկահայերի [գլխավորապես՝ գաղքած Պարսկաստանի Խոյ և Սալմասոտ նահանգներից] և արևմտահայերի սերումներն են ու Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում (Կամո [ներկայում՝ Գալատ], Հրազդան քաղաքներ և Հրազդանի տարածաշրջանի Արզական, Բցենի ու Քաղսի գյուղերը, որ համամասնարար ներկայացված էին արևմտահայերն ու պարսկահայերը):

Ամենակին էլ պատահական չէ, որ հենց այս պատմազգագրական մարզերում կրտնականդական տոներն ունեին տարածվածության ամենաբարձր վարկանիշը։

Իմ վերաբերում է Լոռի-Տավուշին և Սյունիքին, որոնք հետազոտության ընտրույթում համապատասխանարար ներկայացված էին Իջևան քաղաքով և այդ տարածաշրջանի գյուղական բնակավայրերով և Կիրովական (ներկայում՝ Վանաձոր) ու Կալինինո (ներկայում՝ Տաշիր) քաղաքներով, ինչպես նաև Սիսիանի տարածաշրջանի գյուղական բնակավայրերով և Միսիան ու Կապսն քաղաքներով, ասպա ընտրույթում եղած բնակավայրերում ճնշող մեծամասնությամբ ներկայացված էին տեղաբնիկները, իսկ արևմտահայերի ու պարսկահայերի սերումները շատ փոքր մաս էին կազմում։

Ուշագրավ է, որ կրոնապահնական ստուերճ ամենացածր տարածվածությունն ունեին տեղաբնիկների շրջանում, որոնք առանձնանում էին առավել աշխարհիկ վարքագծով։ Պատահական չեն, որ ներկրնիկ այդ խմբի մոտ էին հասկապես տարածված աշխարհիկ բովանդակությամբ և, մասնավորապես, խորհրդային ստուերճ («Մարտի 8», «Մայիսի 1», «Մայիսի 9», «Նոյեմբերի 7», «Փետրվարի 23» և այլն)։

Հանրապետության բնակչության շրջանում կրոնապահնական և աշխարհիկ բնույթի ստուերճ տարածվածությունը մեծ չափով պայմանավորված է հայ էրնոսի ներկրնիկ խմբերի կրոնական վարքագծով։ Արևմտահայ և պարսկահայ խմբերի կրոնական հավատը (բնականարար՝ կրոնապահնական ստուերճ բավական մեծ տարածվածությունը) իր հերթին կազմած է երկու հիմնական գործոնների հետ։ Այն է՝ այլէրնիկ միջավայրի, հասկապես իշխող այլաղական էրնիկ հանրույթների (թուրք, բուրդ, պարսիկ, և այլն) առկայությունը, որն օրյեկտիվորեն ուժեղացրել է հայոց ներկրնիկ այդ խմբերի կրոնական հավատը և որն ուներ ազգային, էրնոպահապահնի բնութագիր։ Նշված խմբերի կենցաղում էլ հենց կրոնապահնական ստուերճ ունեին տարածվածության ամենաբարձր ցուցանիշը և այդ ավանդույթներն են, որ ժամանակար փոխանցվել են ՀՀ-ում ներկայում բնակվող նրանց սերունդներին։ Ներկրնիկ խմբերի ստուերճ վարքագծի վրա ազդող հաջորդ կարևոր գործոնը, իշխող պետության հետ կրոնական առճակատման բացակայությունն է։ Այստեղ նկատի ունենք, օրինակ, քրիստոնյա Ծուսաստանի հետ արևելահայության կրոնական ընդհանրությունը (չնայած դավանարանական առանձնահատկություններին)։ Հնտևարար, արևելահայ այդ հատվածի ինքնազիտակցության մեջ կամ բնագրում կրոնական ուժացման (որից մինչև էրնիկ ուժացում, որպես օրինաչափություն, ընդամենը մեկ քայլ է) վտանգի բացակայությունը նրանց մոտ աստիճանարար քուացրել է այդ կարևոր էրնոպահապահնի մեխանիզմները։ Ուշագրավ է, որ առաջին հայացքից դրականորեն ընկալվող նույնակրոնության գործոնը բացասարար է անդրադարձել ներկրնիկ այդ խմբերի վրա՝ էրնիկ իմունիտետի աստիճանական կորստի տեսակետից։

Հնտագործված առանձին մարգերի (Լոռի, Տավուշ, Սյունիք) բնակչության աշխարհիկ վարքագծի ծևակլրմանը բավական նպաստել են նաև ինտենսիվ շփումները խոշոր քաղաքների հետ (նկատի ունենք, մասնավորապես, Թիֆլիսը, Ելիզավետպոլն ու Բաքուն), որոնք ընդուած միջն ՀԽթ. սկզբներն ունեին քրիստոնյա էրնիկ հանրույթների (հայեր, ոսուներ, վրացիներ, գերմանացիներ և այլն) բավական մեծ զանգված։ Իսկ քաղաքն ու քաղաքային միջավայրն օրյեկտիվորեն միշտ նպաստել են էրնիկ ավանդույթների, այդ թվում, նաև ազգային ստուերճ անկման և ճնակինման գործոնների, առավել ևս, որ այդ քաղաքները խոշոր էին և բազմաէրնիկ։ Նշված քաղաքների (ուր հայերն էրնիկ նկարագրի անկմանը զուգահետ,

ձեռք էին բերում զուտ քաղաքային ինտերնացիոնալ գծերը հետ վերը նշած շրջանների բնակչության հարյուրամյա ավանդությներ ունեցող սերտ կապերը նպաստել են նրանց կրոնավանդական տոնների աստիճանական անկմանը: Ամեննին էլ պատահական չէ, որ խորհրդային ինտերնացիոնալ զաղափարախտությունն արտացոլող սովորական համակարգն ամենապարարտ հոդը զուավ հենց հայ էքսոսի ներէթնիկ այդ խմբերի շրջանում:

ԿԱՌԼ ՍԵՂԲՈՍՅԱՆ (ՀԱԻ)

ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏԱՐԱԾԵՄԱԿԱՆԵՐԸ ՇԻՐԱԿՅԻՆԵՐԻ ՈՒՏԵՍԻՌ ՇԱՍԱԼԻՐՈՒՄ

ՀՀ Շիրակի մարզի բնակչության ճնշող մեծամասնությունը կազմող հայերի ավանդական և արդի կենցաղի հիմնահենքի վրա է ծևակորպում զյուղերի և քաղաքների բնակչության ներկայիս կենցաղն ու մշակույթը, ընդ որում, վերջիններիս մեջ երեխն գերիշխում են առանձնահատկություններ, որոնք պարունակած են տվյալ ազգագրական շրջանին հասուլ ավանդությանը: Կյանքի բոլոր բնագավառներում փոփոխվելով՝ որոշակիորեն պահպանվում, նոյնիսկ յուրահատուկ զարգացում է ապրում ավանդականը, որը պայմանավորված է ինչպես բնակչության պայմաններով, այնպես էլ սովորությունը ու ժամանակի բնակչությունում:

Հայոց ավանդության կենցաղում պահպանվածության առումով աշքի է ընկածում առանձնապես ուտեսար, որի մեջ ավանդական կերակրատեսակներից ու ճաշատեսակներից մի քանիսը կապված են եղել սովորական արարողությունների հետ, ունեցել դերային կամ հարգիտային նշանակություն, իսկ մի մասն էլ, կապված հայոց դարավոր տնտեսաձևերի արգասիքների հետ, մտել են առունեն օգտագործման կերակրատեսակների շարքը, սակայն ունեցել են սննման նպաստավորության գործնական ուղղվածություն: Կյանքի տարրեր ժամանակահատվածներում նըշված խմբերի որոշ ճաշատեսակներ (նաև կերակրատեսակներ, որոշ ուտեսաներ), անկախ նախկին օգտագործման ոլորտից կամ նշանակությունից, ծեռք են բերում հարգիտային նոր իմաստավորում և անհրաժեշտություն՝ ուրախատիք կամ տիրախատիք որոշ հանդիսավորությունների համար: Հատկանշական է նաև այն իրադրությունը, որ գրեթե մոռացված համարվող շատ կերակրատեսակներ նորից ի հայտ են զայխ հատկապես դրժվարին տարիներին (պատերազմ, բնական աղետներ և այլն):

Ընդհանրապես ուտեսարի, իսկ մասնավորապես ճաշատեսակների հիմնական մթերքներ են բուսական, կենդանական մթերքներն ու կարճամթերքները: Մսամթերքների շարքում զգալի տեղ է զրադեցնում նաև բռչնի միսը: Ի տարրերություն այլ մարզերի՝ Շիրակում մեծ տարածում չունեն

մրգատեսակներից պատրաստվող ճաշատեսակները, ընդհակառակը, տարածում ունի բազմապիսի բանջարեղենից քրոների, նաև նսի («դավուրս») պահածոյավարումը: Ավանդական ճաշատեսակներից այսօր առավել հարգի են «խորովածք», «լյուզ-քյարաքք», «սովորակ», «չանախը», «քրուլաման», «քյալան», «քյուֆրան», ցորտ ամիսներին՝ «խաշը», որոշ առիթներով՝ «խաշլաման», «մատաղը» և այլն: Սակայն պակաս համարում չտնեն առտեսի ճաշատեսակների մեջ երբեմն հանդիպող «ավելուկը», «ափրեխը», «հարիսան», «քոզրաչը», նոյնիսկ «փոխինդն» ու «սպասը» և այլն: Այս ամենին կրոքին թե՛ առտեսի կենցաղում և թե՛ մանավանդ համեյստերում պակաս տեղ չեն գրավում նաև արևելյան ու եվրոպական ճաշատեսակները և նախտեսատները:

Հետաքրքրական է նաև այն երևույթը, որ չնայած ընտանիքներում ճաշատեսակները հիմնականում պատրաստում են կանայք, այնուամենայնիվ, որոշ ճաշատեսակները (խաշը, խորովածք, խաշլաման և այլն) հարգի է պատրաստել տղամարդկանցով: Սակայն շիրակցու համար ամենա կարևոր ուժեստի և խմիչքի որակն է ու դրանց առատությունը:

ԱՐՏԱՇԵՍ ԲՈՅԱԶՅԱՆ (ԾՀՀԿ)

ՁԿՆՈՐՍՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՁԿՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՐԱԿԻ ԱՐԴԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆՑԱՂՈՒՄ

Ձկնորսությունը Շիրակի բնակչության օժանդակ տնտեսական զբաղմունքների մեջ ավանդաբար մեծ կշիռ չի ունեցել, և համաձայն XIX դ. և XX դ. սկզբի աղբյուրների՝ ծկնեղները մշտապես նշվել է Աղեքսանդրապոլի գավառ ներմուծվող սննդամբերքների քվում: Միայն 1970-ական թվականներից սկսած՝ բազմաթիվ վորք ջրամբարների կառուցմամբ քարենաստ պայմաններ ստեղծվեցին ծկնորսության և ծկնաբուծության զարգացման համար: Այդ տեսակետից Շիրակում քարենաստ գոտիներ են Արփի լիճ-ջրամբարը, Սամբաշի, Սառնաղբյուրի, Կատնուտի, Ախուրյանի և այլ ջրամբարները: Ձկնատեսակներից հիմնականում տարածված են կարապը, ծածանը, կարասը և կարմրախայտը: Ախուրյանի ջրամբարում հանդիպում են նաև լոբ, ճամատ ձկնատեսակները: Վեցին տարիներին նկատելիորեն ավելացել են նաև փոքր արմեսառական լճակները որտեղ արհեստական ճանապարհով բուժում են հիմնականում սիզ և իշխան տեսակի ծկները: Այսու կողմից էլ՝ որոշ ծկնատեսակների՝ հատկապես կարմրախայտի քանակը տարրեր պատճառներով (անխնա օգտագործում, գետաջրերի բնապահպանական վիճակի վատացում և այլն) վերջին շրջանում խիստ նվազել է: Եթե սրան ավելացնենք նաև, որ Շիրա-

կի հյուսիսի գյուղական բնակավայրերի (Բավրա, Ղազանի, Թավշուտ և այլն) ձկնորսները ծովկ են որսում նաև Վրաստաճի Նինոծմինդայի շրջանի լճերից՝ Սաղամոն, Սաղարավիա և Խենչալի, ապա միանկամայն պարզ կդառնա, որ Շիրակի բնակչության արդի տնտեսության օժանդակ ճյուղերի մեջ ձկնորսության և ձկնաբուծության դերը անհամենատ մեծացել է։ Դրան անշուշտ նպաստում է նաև հետխորհրդային Հայաստանում սոցիալ-տնտեսական իրավիճակը, հատկապես կյանքի որակի կտրուկ անկման միտումը, գործազուրկների քվի աճը, ինչը շատերին տարավ դեսպի օժանդակ տնտեսության այս բնագավառը։ Եթե Գյումրիից հեռու ընկած գյուղական բնակավայրերում ձկնորսությունը հիմնակամում սիրողական բնույթ ունի և հանդիսանում է ժամանցի ձև, ապա քաղաքներում և մասնավորապես Գյումրիում շատերի համար դարձել է հիմնական գրադարձություն։ Եթե գյուղում որսած ծովկը սպասվում է գերազանցապես ձկնորսի ընտանիքում, երբեմն բաժանվում է նաև մոտիկներին, հարազատներին և ազգակիցներին, ապա քաղաքում այն վաճառքի է հանվում՝ դառնալով քաղաքացի եկամտի միակ աղբյուրը։

Շիրակում ձկնորսությամբ գրաղվում են հիմնակամում 15-50 տարեկան աղամարդիկ։ Ձկնորսությունը մարզում կրում է ինչպես անհատական, այնպես էլ խմբակային բնույթ։

Ներկայումս բազմաթիվ ջրամբարների և արհեստական լճակների առկայությամբ Շիրակում բավականին լավ նախադրյալներ են ստեղծված ձկնաբուծության զարգացման համար։ Կարծում ենք տնտեսաձևի նկատմամբ պետական լուրջ հովանավորության դեպքում կարելի է հասնել մարզում անհատական ձկնաբուծության խթանմանը, ինչի արդյունքում Շիրակի բնակչության համար ոչ միայն կստեղծվեն հարյուրավոր նոր աշխատատեղեր, այլև սպառողի սեղանին կհայտնվեն այդ մատչելի սննդամբերի նոր տեսակներ։

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ, ԿԱՐԼ ՍԵՐԵՐՈՍՅԱՆ (ՀԱԲ)

ԵՐԵՎԱՆԱԲԽԱԿ ԼԵՆԻՆԱԿԱՆՑԻՒՆԵՐԸ (ազագական դիմադիր)

Երևանի բնակչությունը, ինչպես հայտնի է, միատարր չէ ոչ այնքան էրնիկ փոքրամասնությունների, որքան ազգագրական բազմաթիվ խմբերի առկայության առումով։

XIX դ. վերջին և XXդ. առաջին քառորդում Երևանը առավելագույնս ներառված էր միզգացին գործընթացներում։ Պատմաքաղաքական աննպաստ պայմանների բերումով հայությունը մեծ և փոքր խմբերով, գրեթե միշտ հոսել է դեպի Երևան։ Հայաստանի խորհրդայնացումց անմիջա-

պես հետո կազմակերպված հայրենադարձության հոգսերի ծանրությունը հիմնականում ընկած էր Երևանի վրա: 1920-ականներից սկսած՝ հատկապես 1926թ. Լենինականի երկրաշարժից հետո և 1930-ականների բռնի կողեւսիվացման տարիներին, դեպքի Երևան բնակչության հոսք սկսվեց հանրապետության տարրեր բնակավայրերից Շիրակից, Լոռուց, Գեղարքունիքից և այլն, ինչի հետևանքով ՀՀԿ 30-ական թվականների վերջին Երևանը մերկայացնում էր Պատմական Հայաստանի բնակչության խճանկարային պատկերը՝ եթեիլ և ազգագրական խմբերի բազմազանությամբ, որոնցից յուրաքանչյուրն ուներ ուրույն ու ինքնատիկ դիմագիծ: Այս ասումով հետաքրքիր է վեր հանել շիրակցիների, ավելի կոնկրետ՝ Երևան տեղափոխված կամ երևանաբնակ ալեքպոլ-Լենինականցիների ազգագրական դիմագիծը:

Ալեքպոլ-Լենինականից, Շիրակից բնակչության հոսք դեպք Երևան տեսլի ունեցել մշտապես: Եթե միայն հիշատակները այն փորձությունները, որ անցել են Շիրակի, հատկապես Ալեքպոլ-Լենինականի գյուղով ընդամենը մի հայրուրամյակի բնագցում (պատերազմներ, երկրաշարժեր, ջրհեղեղներ, անցագրային սահմանափակումներ և այլն), ապա պատկերը պարզ է դառնում: Այս ամենը ցիրուցան էր անում բնակչությանը, սովորում տեղափոխվել տեղից տեղ: Փոքրաբար մտավորականությունը ստիպված էր լինում, գրեթե պարբերաբար, շարժվել Երևան, իսկ գյուղացիությունը դեպի Ալեքպոլ-Լենինական:

Խորհրդային շրջանում Լենինականից (Աերկայիս Գյումրի) դեպք Երևան բնակչության նկատելի շարժում սկսվեց 1926-ից, որն էլ ավելի մեծ ծավալներ ունեցավ հետպատերազմյան տարիներին՝ շարունակվելով մինչև 1960-ականների սկիզբը: 1960-ականների կեսերից մինչև աղետայի 1988թ., այն տարիներին, եթե Լենինականը ծաղկում ու բարգավաճում էր որպես հանրապետության երկրորդ խոշոր քաղաք, բնակչության արտահոսք ինչ-որ չափով դադարել էր: Սակայն երկրաշարժից հետո այն նորից ակտիվացավ: Լենինականցիների նկատելի շարժումը դեպք Երևան կարելի է բաժանել երեք փուլ՝ մինչպատերազմյան (1926-1941թթ.), հետապատերազմյան (1945-1960թթ.) և հետաղետյան (1988-ից ցայսօր):

Եթե առաջին փուլում լենինականցուն Երևան քերադ պատճառը կիմնականում երևիսաների ուսման և ավելի լավ ապագայի հեռանկարներն էին, ապա երկրորդ փուլում դրանց ավելացան նաև պատերազմի հետևանքով քայլայված տնտեսությունը:

1988-90-ականներին բնակչության տեղաշարժը թելադրված էր հիմնաականում երկրաշարժով ու ստեղծված անբարենպաստ պայմաններով: Ի դեպք, աղետից հետո Երևան հաստատվածներից միայն քչերը վերադասն Լենինական:

Երևանում լենինականցիները հոժ բնակեցմանը տեղակայումներ գրեթե չունեն (ինչպես, օրինակ, հայրենադարձ սիյուռքահայերը, ջավախի-

շիները), բայց մինյանց հետ սերտ շփումների մեջ են՝ հարազատական-ազգակցական կապերից զատ, նաև մասնագիտության ու աշխատանքի բերումն, ինչպես, օրինակ, երաժշտները, շինարարները, տնտեսական, ինժեներատեխնիկական աշխատողները և այն:

Երևանաբնակական լեռնականցիներին բնորոշ է ծագման ինքնազիտակցությունը: Հանգամանքների բերումով Երևան տեղափոխված, և իր քաղաքային ծագմամբ հպարտացող լեռնականցին այսօր էլ իրեն համարում է այդափոխն և սովորաբար հպարտությամբ ու կարութի զգացումով է հիշում հայրենի քաղաքը: Ուշագրավ է, որ այլ ազգագրական շրջաններից, նույնիսկ Շիրակի գյուղերից Լեռնականում հաստատված և հետազոտում Երևան տեղափոխվածների ընտանիքում ծնված սերունդը նույն պես իրեն համարում է լեռնականցի:

Ազգագրական այս խմբին բնորոշող մյուս կարևոր հանգամանքը ինքնամնեարման նկատելի միտումն է, որը 1930-1960-ական թթ. «մենք-դուք» սահմանագատման պատճառ հանդիսացավ Երևան տեղափոխված լեռնականցիների և տեղաբնակեցրի միջև, ինչը բնորոշ է նաև ազգագրական այլ խմբերի, հատկապես հայրենադպրոցների ու տեղացիների փոխրունկալումներին: Երևանաբնակական լեռնականցին իրեն համարում է իրեն շնորհալի, տաղանդապատր, ավանդապաշտ և, իհարկե, հումորով օժտված անձնավորություն:

Այս ինքնազմահատականին հակակշիռ է երևանցու գնահատականը, որը չժխտելով լեռնականցիների հումորի բարձր զգացումը, նրանց բնորոշումը է իրեն մեծախսուի, «մեծարերանի», մեծամտի, սկարծենկուի:

Այս ազգագրական խմբին բնորոշող մեկ այլ կարևոր հատկանիշը բարքան է, որը սովորաբար յի հայրահարվում մեկ սերմող մեջ: Լեռնականցու «մատնում» է նրա յուրահատուկ առողանությունը:

Երևանաբնակական լեռնականցիներին առանձնացնող մյուս հատկանիշը ավանդապաշտությունն է, հատկապես, ընտանեկան կենցաղում: Նրանք սովորաբար շարունակում են կապեր ունենալ հայրենի քաղաքի հետ՝ ոչ միայն ազգակցական-բարեկամական, այլև համաքաղաքային, աշխատանքային, ավանդութային և այլ առումով:

Երևանաբնակական մի խումբ շիրակցիների նախաձեռնությամբ 2000թ.հոկտեմբերի 20-ից սուեդվել և գործում է «Շիրակ միջազգային միություն» հասարակական կազմակերպությունը, որն ունի երևանաբնակ շիրակցիներին և հատկապես լեռնականցիներին միավորելու, համախմբելու, ծննդավայրի հետ մշակութային կապերն ամրապնդելու առաքելություն:

XX դ. 30-60-ական թթ. Երևանաբնակական լեռնականցիներն իրենց զգալի ներդրումն են ունեցել Երևանի մշակութային, քաղաքական, տնտեսական, շինարարական և այլ բնագավառներում:

ՍԻՀՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ (ՀԱԻ)

ԵՐԵՒԱՍԵԵՐԻ ՆԿԱՏՄԱՄ ՎԱՏԱՐՎՈՂ ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ (լատ առցիոն իական հետազոտության արդյունքների)⁴

1.Հայ ժողովրդի արժեքային համակարգում առանձնահատուկ տեղ են գրավում երեխաները, որոնք մեր իրականության մեջ ընկալվում են որպես ազգի և սերնդի շարունակող և անմիջականորեն գոնվում են ծնողների և հարազատների ուշադրության կենտրոնում։ Երեխայի ծնավորման և նորմալ զարգացման համար շատ կարևոր նշանակություն ունեն ընտանիքը, ծնողների և երեխաների միջև ճնակորված հոգական շփումները, որտեղ երեխաները ճեռք են բերում որոշակի վարվելակերպի նորմեր, վարքագծային կերպարներ։ Հասարակության մեջ, բացի երեխայի նկատմամամբ գործող արժեքային համակարգից, նրանց իրավունքները կարգավորված են նաև ՍՍԿ-ի կողմից «Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիայի սկզբունքների և ՀՀ-ում գործող օրենքների հիման վրա։ Դրանով համեմունք՝ առօրյա կյանքում բնակչության գնահատականները հաճախ ոչ միայն չեն համընկնում գործող օրենքներին, այլև, եղելով ավանդական դիրքորոշումներից, ծնողները, որպես «գաստիարակության մեթոդ», երեխաների նկատմամբ կիրառում են մի շարք պատժամիջոցներ։
2.Անցիողիական հետազոտությունները, որոնք անցկացվել են Հայաստանի տարրեր մարզերում, այդ թվում և Ծիրակում, նպատակ էին հետազնում բացահայտելու, թե որո՞նք են համարվում երեխաների նկատմամամբ կատարվող բռնությունների պատճառները, ձևերը, ովքեր՝ են հիմնականում բռնություններ կատարում երեխաների նկատմամբ, ո՞ր միջավայր է երեխաների համար համարվում առավել ապահով, ի՞նչ հետեւանքներ են ունենում կատարվող բռնությունները, ինչպիսի՞ գործողությունները։

⁴ «Հետազոտության կարևոր արդյուր են ծառայել Հայաստանում ընտանեկան բռնությունների վերաբերյալ «Ակտեր» Էթնուցիուրզիական հետազոտությունների կենտրոն հասարակական կազմակերպության կողմից 1626 հարցորդների, 341 փորձագետների շրջանում և 28 խմբային քննարկումների հիման վրա կատարված անցիողիական ուսումնամիջության արդյունքները։ Տե՛ս Հնտանեկան բռնությունները Հայաստանում. անցիողիական հետազոտություն, Եր., 2002։ Հետազոտության համար հիմք է ծառայել նաև ՍՍԿ-ի մասնական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի և Հայ օգնության միություն հասարակական կազմակերպության կողմից 2003թ. միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաների և նրանց ծնողների և խնամակալների (550 երեխա և 550 ծնող/խնամակալ), երկսերունդ (308 ընտանիք և 425 երեխա) ընտանիքներում և ուսուցչների շրջանում անցկացված հետազոտության արդյունքները։ Տե՛ս Երեխաների նկատմամբ կատարվող բռնությունները Հայաստանի Հանրապետությունում, UNICEF, Եր., 2003։

թյունների են դիմում երեխսաները, հասարակությունը ինչպիսի՞ դիրքորոշումներ ունի կատարվող բռնությունների նկատմամբ, ի՞նչ ուղիներ են առաջարկում հարցովողները երեխսաների նկատմամբ բռնությունները կանխարգելելու համար:

3. Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ Ծիրակում երեխսաների նկատմամբ կիրառվող բռնությունները իմանականում պայմանավորված են մարզում առկա սոցիալ-տնտեսական և կենցաղային ծանր պայմանների, գործազրկության բարձր տեմպերով: Այդ գործոնները անմիջականորեն և միջնորդավորված ձևով ազդում են ներընտանեկան հարաբերությունների վրա՝ ընտանիքում առեղծելով լարված մքնուրուս, որի հետևանքով երեխսաները երբեմն առաջինն են դառնում «քավության նոխազ»: Պատճառների մյուս խումբը առնչվում է ծնողների հոգեֆիզիոլոգիական վիճակի, նախասիրությունների և աշխարհայացքի, սերունաների արժեքային հանակարգի տարրերության հետ: Որոշ ծնողների մոտ այն կապված է մանկության և պատանեկության տարիներին իրենց ծնողների կիրառած բռնության հետ, ինչը նրանք համարում են սովորական երևոյթ և նոյնը կիրառում են իրենց երեխսաների նկատմամբ: Հստ հետազոտության արդյունքների՝ երեխսաների նկատմամբ բռնություններ կատարվում են նաև ծնողների կողմից ավկոհոլի շարաշահման հետևանքով, որի պատճառով երեխսաները հաճախ դառնում են հոգեբանական և ֆիզիկական բռնության թիրախ:

4. Ինչպես ողջ հանրապետությունում, այնպես էլ Ծիրակի մարզում երեխսաների նկատմամբ առավել տարածված են անտեսման, հոգեբանական, ֆիզիկական և սեռական բռնության ձևերը:

Հարցումները ցույց են տալիս, որ Ծիրակի մարզում երեխսաների նկատմամբ կիրառվող անտեսման երևոյթը առավել շատ տարածված է սոցիալապես անապահով ընտանիքներում և հատկապես այն երեխսաների համեմ, ովքեր գտնվում են զիշերօթիկ դպրոցներում: Զգացմունքային անտեսման ժամանակ երեխսան լրվում է ծնողի կողմից, ենթարկվում է անտարբերության, սառնության, քնքշանքի բացակայության և չի արժանանում պատշաճ ուղարկության: Անտեսման դրսորնան ձև կարելի է համարել նաև ծնողների կողմից երեխսաների նկատմամբ շփման, մեկուսացման և նախասիրություններով գրաղվելու արգելքների կիրառումը, ինչը մյուս մարզերի համեմատությամբ Ծիրակում կազմել է 39%: Այն հետազայտմ կարող է առաջ բերել երեխսաների առողջության և ֆիզիկական զարգացման հետ կապված խնդիրներ:

Ինչպես հանրապետության մյուս մարզերում, այնպես էլ Ծիրակում, երեխսաների շրջանում առավել բարձր սոլոկու է կազմում հոգեբանական բռնության ձևը (92%): Ծնողների կամ դպրոցի ուսուցչների կողմից այն դրսորվում է նկատողության, վիրավորանքների, քննադատության, ամբողջական, մերժումների, անընդհատ մեղադրանքների, սպառնալիքների,

վախեցնելու և այլ ձևերով, որոնք բացասական ազդեցություն են գործում երեխայի հոգեվիճակի և վարքագծի զարգացման վրա:

Ֆիզիկական բռնությունը երեխայի կամ դեռահասի նկատմամբ իրական կամ հնարավոր ֆիզիկական վնաս հասցնելն է: Ծնողների կողմից կիրառվող ֆիզիկական բռնության ձևերից մարգում տարածված են ապտակը, ծեծը, երեխն նաև մարմնական վնաս հասցնելը, որը հարցման արդյունքներով կազմել է 22,9%: Հետազոտությունը ցույց տվեց, որ բացի ծնողներից, բռնության վերը նշված ձևերը, հատկապես ֆիզիկական, տարածված են նաև դպրոցներում: Երեխաների կարծիքով, ուսուցչին չեն բարկվելու, դասը խանճարելու, դասից փախչելու և այլ արարքների դիմաց ուսուցչիների կողմից առավել տարածված պատժամիջոցներից է համարվում ապտակը, քանոնով հարվածելը, ականջները քաշելը, ծեծը, ինչը հանրապետության մյուս մարզերի համեմատությամբ, բարձր չէ՝ 17.3%: Սոցիորգիական հետազոտության արդյունքներով մարգում գրանցվել են նաև երեխաների նկատմամբ ներքնատանեկան և արտարնտանեկան սեռական բռնության մի քանի դեպքեր: Դրա վերաբերյալ բացակայում են պաշտոնական վիճակագրական տվյալները, քանի որ այդ երևոյթը բնակչությունը դիմում է «ընտանեկան փակ» համակարգի տարր և որոշ ծնողներ «ընտանիքի պատիվը շարասավորելու» համար այն պահում են «տան պատերի» ներառություն: Ընդհանրապես երեխաների նկատմար կիրավող ապտակը և հոգեբանական բռնության մի շարք ձևեր բնակչության որոշ մասի շրջանում դեռևս ընկալվում են որպես «գաստիարակության միջոց», և հասարակական կարծիքը չունի մերժողական վերաբերնունք այդ երևոյթների նկատմամբ:

5.Ուսումնասիրությունից պարզվեց, որ կապված պատժամիջոցների ուժնության, հաճախականության, տարածվածության աստիճանի հետ, բռնությունները երեխաների հետազա զարգացման վրա բողնում են լուրջ սոցիալ-հոգեբանական բացասական հետևանքներ: Դրանք ոչ միայն մարմնական տարրեր աստիճանի վնասվածքներն են, այլև տրամադրության անկումը, ընկճվածությունը, մնշվածությունը, գլխացավը, անքնությունը, փախի, ազրեսիայի դրսուրման երևոյթները, դարոցը բողնելու, դասերից բացակայելու, տմից փախչելու ցանկությունը: Բռնությունների հետևանքով երեխաները դատնում են դեպքեսիվ, և նրանց մեջ ձևավորվում են ընտանիքում և դրանում չփրված և անցանցակի լինելու, ինչպես նաև ճնշված անձի հատկանիշներ, ինչը ազդում է նրանց հետազա բնակչության գծերի ձևավորման վրա:

Կոնֆլիկտային ընտանիքներում բռնությունների հետևանքով խարսխում են երեխաների նորմալ սոցիալականացման գործընթացները, որի հետևանքով նրանք երեխն դրսուրման են շեղված սոցիալական վարքագիծ, ինչն էլ իր հերթին նրանց մղում է մուրացկանությամբ, գողությամբ, մարմնավաճառությամբ գրաղվելուն:

6. Երեխաների նկատմամբ կիրառվող բռնությունների կրծատման և կանխարգելման համար անհրաժեշտ է մարզում իրականացնել կանխարգելման և աջակցության միջոցառումներ: Բայց օրենսդրական դաշտի կատարելագործումից՝ անհրաժեշտ է մշակել երեխաների նկատմամբ կիրառվող բռնությունների դեպքերի գրանցման հատակ մերուդարձանություն, ինչը հնարավորություն կտա դրա մասին ունենալու հավաստի վիճակագրական տվյալներ: Երեխաների նկատմամբ բռնությունների կանխարգելման համար մարզի առողջապահական, տցիալական, դատաիրավական համակարգի, հոգեբանական ծառայությունների, պետական և ոչ պետական մի շարք կառույցների համատեղ գործունեությամբ անհրաժեշտ է ստեղծել միասնական ցանց, որը հնարավորություն կտա իրականացնելու բռնությունների կանխարգելման համալիր միջոցառումներ, ինչպես նաև երեխաներին և ընտանիքներին ցուցաբերել առողջապահական, իրավական, հոգեբանական աջակցություն: Ստեղծված այդ կառույցի և համայնքային աջակցության խմբերի հիմնան վրա մարզում կարելի է զարգացնել տնային այցելությունների մերուր, ինչը հնարավորություն կտա ոխական ընտանիքներում մինչև երեխաների նկատմամբ բռնությունների իրականացումը կատարել որոշակի աշխատանք: Ըստ ուսումնասիրության արդյունքների՝ երիտասարդ ծնողների և մանկավարժների շրջանում անհրաժեշտ է նաև որոշակի միջոցառումների իրականացում, որը հնարավորություն կտա բարձրացնելու նրանց տեղեկացվածությունը և իրավական գիտելիքները երեխաների հիմնախնդիրների վերաբերյալ:

ԿԱՐԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ ՈՒԶԱ ՀՈՎՀԱՄԱՆԻՍՅԱՆ (ԸՀՀԿ)

ՆԵՅՐՈՒԵՉՎԱԲԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՐԱԿԻ ՍԱՐՋԻ ԱԳՎԱԲԱԿՅՈՒԹՅԱՆ ԾՈԳԵԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ ԱՂԵՏԻՑ ՇԵՏՈ

Նեյրուեջվաբանական ծրագրավորումը (ՆԼԾ) միջանձնային մոդելների համակարգ է, որը նյարդաբարձրացների միջոցով արտացոլում է անձներին ծրագրերը:

ՆԼԾ-ն՝ իրրև մոդելային պատկերացումների տեսական համակարգ, ուղղված է մարդու հաղորդակցմանը և զարգացմանը, ինչպես նաև անձնային հիմնահարցերի հավասարաշղումանն ու իմաստավորմանը: Ունենալով ընդգրկում հնարավորություններ՝ այս համակարգի գործնական կիրարկմամբ կարելի է հասնել հոգեբանական աջակցության:

Այսպիսով՝ ՆԼԾ-ի հիմնական սկզբունքներն են.

- Անձի ենթագիտակցական փորձի գիտակցականի վերածելու սկզբունքը, որն արդյունավետորեն օգտագործում ենք հոգեկարգավորման գործնականությունը: Հոգեկարգավորման գործնաբացում լայն կիրառություն ունի նաև հոգեկան ճկունության սկզբունքը: Քանի որ իրականում գոյություն չունեն զգայական փակուղիներ, հետևաբար միշտ հնարավոր է գտնել այլ ելույթներ:
- Գերակշռող բազմակերպության սկզբունքը. Քանի որ օգտագործված մոդելները կառուցվում են սուրմողական հատկություններով, հետևաբար տեսողական, լուղական և շարժագոյայական պատկերները հանդես են գալիս գերակշռող բազմակերպության մեջ, որոշակի անցումներով, որով հեշտանում են պատկերների կառավարումը և նոր՝ ցանկալի պատկերների կառուցումը:
Այս փաստերը վկայում են, որ սոցիոլոգիայում ուսումնասիրված մասնագիտական կողմնորոշումների ձևավորման գործընթացների վրա ազդող գործոնների կառուցվածքը ունիվերսալ և ամբողջական չէ: Վերլուծության այս փուլում կարելի է ենթադրել, որ մասնագիտությունների հեղինակությունը ձևավորվում է ոչ միայն անհատական բնույթի գործոնների, այլև խմբային, այդ թվում նաև «համաքաղաքային» մասշտարի սոցիալ-հոգեբանական մթնոլորտիք բարդ մեխանիզմների ազդեցությամբ, որն իր հերթին, կարող է պայմանավորված լինել պատմական, ավանդութային բազմաթիվ գործոններով, որոնք սոցիոլոգիայում լուրջ ուշադրության չեն արժանացել:

Մասնագիտական կողմնորոշման ձևավորման գործընթացները, անգամ համեմատաբար միասին բնակավայրերում, կարող են ունենալ էական առանձնահատկություններ, ուստի որևէ բնակավայրի հետազոտությունների հիման վրա կազմված սխեման չի կարելի օգտագործել մեկ այլ բնակավայրի իրավիճակի գնահատման համար: Բնակավայրերի սո-

ցիալ-տնտեսական զարգացման ռազմավարությունը մշակելիս հարկ է հասուն հետազոտություններ իրականացնել կոնկրետ բնակավայրերում:

ԱՆԻ ՍԱՐԳԱՅԱՆ (ԵՊՀ)

ԸԿՈՐ ԾԱԿՈԲՅԱՆԻ «ԼԵՆԻՆԱԿԱՆՅԱՆ ԲՆԱՆԿԱՐՆԵՐԸ»

Ժամանակակից հայ նկարիչ Հակոբ Հակոբյանի ստեղծագործական կյանքը հայրենիքում սկսվել է 1962 թվականից, երբ նա 40-ին մատ և արդեն ձևավորված նկարիչ էր: Խորհրդային Հայաստանում ստեղծված առաջին աշխատանքները, որ հայտնի են հայ դիտողին, Լենինականյան բնանկարների շարքն է: Հարկ է նշել, որ մինչև հայրենիք վերապառնայլ նկարչի գործերում գերակշռություն է դրա միաժամկետ կոմպոզիցիաները և նաւուրուրտի ժանրը: Հայաստանում արդեն նկարչի ստեղծագործություններում սկսում են մեծ տեղ գրադեցնել բնանկարները (թեև այժմ նա առավել հայտնի է որպես բնանկարիչ):

Սույն հաղորդման խնդիրն է ներկայացնել Հ. Հակոբյանի ռեալիստական բնանկարը և նրա «Լենինականյան շարքի» միջոցով պարզաբնել այդ ժանրին նրա անդրադասնալու դրդապատճառները:

Հարցը հետաքրքիր է քննարկել 60-ական թթ. Խորհրդահայ գեղանկարչության համատեքսություն: Զննալի տարիներին խորհրդային գաղափարախոտության վերանայումը նպաստեց արվեստում սոցռեալիստական մերուի բոլուգմանը և թեմաների փոփոխությանը: Նկարիչները դիմում էին մետաֆորիկ և այլարանական մտածողությանը, որի շնորհիվ հնարավոր էր անդրադասնալ մարդկային հարարերությունների և իրականության մեջ առկա առավել նորոր հարցերին: Այս շրջանին հասուն էր անդրադարձը դեպի ազգային մտածողությանը, որը գեղարվեստական յուրակերպությունը վերագրունելու ձգուում էր, նաև՝ քողարկված հակագլեցություն սոցռեալիզմի մերուին:

Հետսարյանական դպրոցի ներկայացուցիչների ստեղծագործություններում առկա են բնանկարի էմոցիոնալ-գունային բնկալումը, ձգուումը լիրիկականացնելու, նաև մոնումենտալացնելու Հայաստանի բնանկարը. իրականությունը պատկերվում էր զգացողությունները ընդհանրացնելու կերպով: Սակայն արտասահմանում ապրած և բոլորովին այլ գեղարվեստական միջավայրում ձևավորված նկարիչը նախընտրեց բնանկարը մեկնարանել իրատեսական տեսանկյունից ստեղծելով իր ինքնատիպ վերլուծական մերուդը:

Արվեստագետի համար արդեն հասուն տարիքում նոր քաղաքական և մշակութային համակարգին իմաստեղորվելու պրոցեսը բարդ էր: Տարիներ շարունակ օտար երկրում ապրելու պատճառով Հայաստանի մասին պատկերացումները հեռու էին իրականից և վերածել էին միֆի: Այդ պարագա-

յում նկարչի համար բավականին դժվար էր իր պատկերացրածը մի կողմ դնել և հարազատ երկիրը տեսնել այնպիսին, իմշալիսին որ կա, առանց վեհացմելով՝ իրականությունը ընկալելով ճանաչելով, վերդուժելով:

Հայտնի է, որ Հ. Հակոբյանը դեռ Փարիզում ստվերելու տարիներին հակված էր ունախտական նկարչությանը: Սակայն բնանկարի ժանրում ունախզմին դիմելով հայկական լանջափոք նոր տեսանկյունից դիտելու ցանկություն էր, որը սկզբունքորեն տարրերվում էր մինչ այդ բազմաթիվ հայ նկարիչների գործերում Հայաստանի՝ արդեն ստերեոտիպային դարձած ընկալումներին: Խորհրդանշայ արվեստագետները խոսափում էին իրատեսական մենարանություններից, քանի որ ացոլավազմը գաղափարախոսության ազդեցության տակ հեռացել էր ունախզմի իրական բնույթից: Հ. Հակոբյանի ունախզմը միջոց էր նոր իրականությանը գիտակցարար հարմարվելու և իմաստավորելու հայրենիքը իրատեսարեն ընկալելու իր կերպը:

ԱՐԱՋԸ ՄԱՐԳԱՐՅԱՆ (ԳԱԳՄ)

ՄԱՐԻԱՄ ԵՎ ԵՐԱՆՈՒԺԻ ԱՍԱՍԱՉՅԱՆՆԵՐԻ ԺԱՌԱՎՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒԽՐԻԴՈՒՄ

Աերջերս Գյումրիում վերաբացվեց Սարիան և Երանուժի Ասլամազյանների բանգարանը՝ իիմնադրված 1987թ., քույրերի՝ հայրենի քաղաքին նվիրաբերած շորջ 600 ստեղծագործությունների հիման վրա:

Ծնննդով շիրակցի (ծննդավայրը՝ Բայ-Շիրակ) Ասլամազյանները ծևավորվել են հայ և ոսու մշակույթների լավագույն ավանդույթներով: Նրանց ուսուցիչները (Ս. Աղաջանյան, Ս. Առաքելյան, Պետրով-Վլորկին, Խարոսին, Օամյորկին) քույրերի մեջ սերմանել են սեր և կատարյալ նվիրում դեպի արվեստը:

Թանգարանում ներկայացված քույրերի ստեղծագործությունները տարրունակ են թե՛ ժանրային և թե՛ թեմատիկ բնդգրկմամբ: Դա 1940-80-ական թթ. կատարված դիմանկարներ, բնանկարներ, թեմատիկ աշխատանքներն են, կերպարկա:

Ապրելով և ստեղծագործելով տուտալիտար համակարգի պայմաններում քույրերը կանա թե ակամա դարձել են այդ համակարգի ջատագովները: Այդպիսի գործերի թիվը կազմում է մի քանի տասնյակ: Սակայն Ասլամազյանների ստեղծագործության մեջ ավելի մեծ տեղ են գրադեցնում մշտնջնական արժեքներին՝ հայրենի հողին, նրա մարդկանց, պրտուղներին նվիրված աշխատանքները: Գույների խելապտույտ շաղախից են ծննդում Սարիան Ասլամազյանի կտավները: Նա կանացի սիրով և բերկրանքով է օժտում պատկերած յուրաքանչյուր իրը: Թանգարանի ցուցադրության մեջ մեծարանակ են մրգերով նատյուրմորտները: Ցուցա-

դրույթան կազմակերպիչների մտահղացմամբ՝ դրանք միացված են մեկ պատի տարածության մեջ և դիտվում են կարծես մեկ մեծ կտավ, որ պայմանականորեն կարելի է «վիորյոն» անվանել:

Երանուի Ապամազյանի ստեղծագործությունը, որ գրադացնում է քանակարանի Ի հարկը, ավելի քնարական է, հոգեթով։ Նկարչուու սևեռուն հայացքից չեն վրխում ոչ բնության հարապիվոյն վիճակները, ոչ էլ մարդկային բնափորության յուրահասուկությունները։

Քոյքերի հավաքածուում առանձնահատուկ տեղ է գրադացնում նրանց ծերուվ պատրաստված կերամիկան՝ սափորներ, ափսեներ, սպասք։ Արժեքավորելով Մարիամ և Երանուի Ապամազյանների ստեղծագործությունը մեր օրերի հայացքով՝ պետք է նշել, որ սոցուայիզմի պարտադրած նորմերով և զաղափարական շեշտադրումներով հանդերձ, քոյքերը կարողացել են պահպանել ազգային դպրոցի յուրահասուկությունը, պատշաճ ներկայացնել այն համախորհնանական մակարդակով։ Մարիամ և Երանուի Ապամազյանի քանակարանն այսօր հավակնում է դառնալ Գյումրու կարևոր մշակութային օջախներից մեկը։

ԼԱՌԻՐԱ ԱԹԱՆԵՍՅԱՆ (Գ.ՊՄԻ)

ԸԿԿՈՐ ԱՆԱՏԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՄՐՎԱ ՇԱՐՋԸ

Արվեստագետի խոսքը ծնվում է իր ասպած ժամանակում և իրականության մեջ, շնչում իր ժամանակի գոյյներով ու խոսքով։ Անկասկած, իր ժամանակի ու ավանդապահ քաղաքի ծնունդն էր նկարիչ Հակոբ Անանիկյանը, որի ստեղծագործությունը դառնալու էր իր հարազատ քաղաքի՝ մարդանու ու բարի, քախծու ու կատակող, արիեսոսավորական Գյումրու կենսափիլիստիկայության և ուրույն մտածելակերպի արտահայտչը։ Զարմանալին այն էր, որ Հ. Անանիկյանը, երկար տարիներ ապրելով Գյումրիում, նրան նվիրված ոչ մի կտավ չէր նկարել։ Այդ տարիներին նա գրադած էր միայն նկարիչներ «պատրաստեղով» (Ս. Սերկուրովի անվան նկարչական դպրոցում)։ Թվում էր, թե կյանքն աննկատ անցնում էր նրա կողքով։ Սակայն դա քվացյալ անտարերորդյուն էր։ Հավանաբար այդ տարիներին նա ամքարում էր տեսածն ու զգացածը, որ ավելի ուշ՝ 1966 թվականին Երևան տեղափոխվերուց հետո, ջրվեժի պես դուրս հորդեր նրա կարտուքարադ հոգուց։ Նկարիչը հազիվ էր հասցնում կտավին հանձնել իր զգացմունքներն ու արթնացող հուշերը, տարիներ շարունակ իր ներսում կուտակածն ու քաքցրածը։ Արդյոք նկարչի հասունացած վարպետությունն էր, թե անմարելի կարուտը, որ այդպես միանգամից պոռքաց և իրեն, նկարչին ստիպեց վրձնել մի իրաշալի նկարաշար, իրեն շատ սիրելի իին Գյումրու քեմաներով։ Հ. Անանիկյանի «Գյումրվա շարքը» մի ամբողջ

պատում է՝ նվիրված հայրենի քաղաքին ու մանկուց իրեն ծանոթ նրա մարդկանց:

Հ. Անանիլյանի կտավներում արժեքավորը նրա անդրադարձն է հարազատ քաղաքի ոչ հեռավոր անցյալի այն ամենին, ինչը զգացել, լսել ու ապրել է անձամբ: Հ. Անանիլյանի կտավներով մեզ են ներկայանում Գյումրին ու նրա «գարդիման», բայց կատակասեր, խոսքաշեն, հումորասեր գյումրեցին: Ուվե՞ր էին նրա հերոսները. Պոլոզ Սուկուչը, Համալ Արշակը, Կախեթի Օնիկը, քամրազործ Գևորք, Շերմակ Համոն, հիվանդ Ծրուրոն են: Մրանք պարզապես մարդիկ չեն, այլ բնավորություններ, հոգեվիճակներ, որոնք դիտողի մեջ արթնացնում են հույզեր ու խորհրդածություններ, մաքրամաքուր իշխողություններ: Դեռ ոչ շատ վաղ անցյալում էր, երբ Գյումրու փողոցներում անցնում էր Վիսոյի Վարդանի ֆայտոնը («Տրանսպորտը հին Գյումրիում» կտավը)՝ ուրախություն պարզեցնով մեծին ու վոքրին: Այդ ժամանակի Գյումրին դեռ ուներ իր դեմքն ու գույնը, իր ազգային նկարագիրը, որն արդեն աննկատ լրում էր նրան: Հարազատ քաղաքի ինքնատիպ, բոլորից տարրեր նկարագրի կորուստն էլ մարզարեարար կանխագուշակեց նկարիչը և իսկական արվեստագետին հասուլ իր մնանական գործադրանունը կարողացավ զգալ և գնահատել պահը:

Անանիլյանի նկարներից մեկում Սկրտիչ Սելյոնյանն է՝ Պոլոզ Սուկուչը: Նա նստած է մենակ, արենատավորի զգեստով, քաժակը ձևորին: Թվում է՝ նա իրաժշտի ու պատվասկրության խոսք է եղում իր ընկերներին ու դեպի հավերժություն ճանապարհում Գյումրին ու նրա ապարաները:

Հ. Անանիլյանի ստեղծագործությունների կառուցվածքի, կերպարների մասուցման ձևի, ոճի միջն եղած կապը փոխադարձ է, իրար լրացնող. նա աչքի է ընկատու ընտրության բացառիկ ճաշակով, քեմայի մեկնարանության ու կողրիտի զարմանալի ներդաշնակությամբ: Նկարչի յուրաքանչյուր կտավը նրա հոգու շարժումն է՝ անհասանելի ու անձանոթ տարածություններ տանող ու այնուղղի արձագանքներ բերող:

Հ. Անանիլյանի տաղանդը նկատել և ծշմարտացիորեն գնահատել է մեկ այլ մեծ գյումրեցի՝ բանաստեղծ Հովհաննես Շիրազը. «Սիրելի Հակոբ Անանիկ. Դու քեզ և ցավախորեն անհետացող իրաշը Գյումրին ես բերեցիր՝ խոտացնելով մի զողաքիկ ցուցահանդեսում իրաշալի վրձնի մայրենի գույներով: Սեծ ձեռք անմահացրուց երկու աշխարհին՝ քեզ և Գյումրիս, Գյումրիս և քեզ... Իմ վշտերն սփոփկում են՝ նայելով վրձնումներիդ, վասնզի իրավորեն ահա ես է եկել պաշտելի Գյումրիս»:

ԿԱՐԻՆԵ ԲԱԶԵՅԱՆ (ԾՀՀԿ)

ՇԻՐԱԿԻ ԱՐԴԻ ԽԵԶԵԳՈՐԾՈՒԹՈՒՆԸ

Ժամանակակից քաղաքական և սոցիալ-տնտեսական գործընթացները ուղղակիորեն անդադարձան հայ ժողովրդի արդի կենցաղամշակութային համալիրի վրա: Վեզիկին տասնամյակում կատարված հետազոտությունները ցույց տվեցին, որ Հայաստանի գյուղական և փոքր քաղաքների բնակչության տնտեսական գրադմոնքների և տնտեսավարման ծևերի մեջ կատարվել են խոր փոփոխություններ: Այդ գործընթացներն ընդգրկել են նաև Շիրակը:

Շիրակի բնակչության օժանդակ տնտեսական գրադմոնքների մեջ մինչև օրս իր ուրույն տեղն ունի խեցեգործությունը: Այս արհեստով գրադպում են մարզի Սառնաղբյուր, Չաջու, Հողմիկ (Բյի) գյուղերում: Մրանց մեջ իր ավանդույթներով առավել հայտնին և ճշանակոր Սառնաղբյուրն է: Շիրակի խեցեգործական դպրոցի մասին առանձին հետազոտություն չկա, սակայն Ե. Սարգսյանի «Հայաստանի խեցեգործական արվեստը» մեջ Հայաստանի մյուս կենտրոնների շարքում հիշատակվում են անական առանձնահատկությունները:

Խեցեգործության զարգացումը Շիրակի բնակչության ավանդական կենցաղում պայմանավորված էր կավել իրերի լայն գործածությամբ և տեղական հուսքի առկայությամբ: Խեցեգործության ավանդույթները հիշյալ գյուղերում պահպանվեցին նաև խորհրդային տարիներին և շարունակվում են մինչև մեր օրերը: Մեր նպատակն է դիտարկել հիշյալ բնագավառում կատարված փոփոխությունները և ավանդականից-ժամանակակից անցնան առանձնահատկությունները:

Կավի մշակման մերորյա տեխնիկան գրեթե փոփոխությունների չի ենթարկվել, քանի որ միակ աշխատելու եղանակը մնում է ծնորով կավի ծեփումը: Դուրսի բացակայության պայմաններում կավել իրերի պատրաստման ժամանակ գործածվող հիմնական գործիքները պլաստմասային (ի տարրերություն նախկին փայտին) ծվածներն են, որոնք կոչվում են քերոց: Դրանք ամենարություններն ուղղելու և պատերը հարթեցնելու ու կոլեկտու համար են օգտագործվում: Ինչպես նախկինում, այնպես էլ այժմ աշխատանքն սկսելուց առաջ նախ թելով գծում են հիմքը, հետո սկսում են պատերի շարելը: Առավել աշխատատար է քոնրի պատրաստումը, որը տևում է մի քանի օր, քանի որ օրենքան բարձրացնում են 4-5 շարք: Պատրաստելուց և ավարտելուց հետո բոլում են մեկ ամիս, որ չորանա, այնուհետև հանում են վաճառքի: Թոնիքների բրծումը կատարվում է պատվիրաստուի կողմից՝ նախկին քոնրի տեղում, ներսում աքար վառելով, իսկ մանր իրերը բրծվում են քոնիքների մեջ:

Կավե իրերի կիրառման ոլորտը արդի կենցաղում խիստ նեղացել է: Այսօր մեծ պահանջարկ են վայելում միայն քոնրի մերժումը, որի արտադրու-

Քյամբ էլ զրադշում են վարպետները: Պատրաստված բռնիմներն ըստ պահանջի տարբեր չափեր ունեն՝ ամենամեծը 120 սմ լայնությամբ և 150 սմ բարձրությամբ, իսկ ամենափոքը՝ 70–75 սմ տրամագծով ու 120 սմ. բարձրությամբ: Հետաքրքիր է, որ բացի զյուղերից պատվերներ են ստացվում նաև քաղաքներից: Հստ Սառնադրյուրի վարպետների տվյալների՝ նրանք տարեկան 100 բռնիմներ են պատրաստում, որոնք սպառվել են ոչ միայն Շիրակի մարզում, այլև ուղարկվել են նաև Երևան, Արմավիր և հանրապետությունից գուրու՝ Սոսկվա, Սոչի և այլն: Թոնիրների նման լայն պահանջարկը բացատրվում է տարբեր քաղաքներում հացի փոերի բացումով: Կենցաղային իրենից պատրաստում են կծուճ, չանախ, կարաս, պուտուկ և ծաղկաման: Արանցից առավել մեծ պահանջարկ են վայելում կճուճները, որոնք օգտագործվում են ճմեռվա պանիրը պահելու նախակով: Ընդհանուր առմամբ տարեկան պատրաստում են 20–25 իր:

Ժամանակակից խեցեգործության մեջ արծանագրված մյուս փոփոխությունը կապված է վարպետների սեռա-տարիքային կազմի հետ: Զքաղաքները համարվում է ֆիզիկական մեծ ուժ պահանջող և ծանր աշխատանք, ուստի կանանց ճախսկինում լայնորեն տարածված մասնակցությունը այսօր գրեթե բացակայում է: Միաժամանակ տեղի է ունեցել տարիքային փոփոխություն, քանի որ բուն աշխատանքը կատարում են երիտասարդները, իսկ մեծահասակ վարպետները միայն վերահսկում են գործընթացը, կավե իրերը բրծելու վատարանը:

Արդի խեցեգործության մեջ մեր կողմից գրանցվել է կավե իրերի սոնածիսական գործառություն իսպառ բացակայություն: Ժամանակակից տեխնոլոգիան հասարակությունը, իր խիստ պրագմատիկ օրենքներով ներքափանցելով զյուղ, դուրս է մողել կենցաղից ավանդությային մարդությունը կապը: Եթե ճախսկինում խեցեգործության ողջ ընթացքում արհեստավորը կատարում էր որոշակի ծիսական գործողություններ, որոնք նաև խոսքային-բանաձևային բնույթը էին կրում և ապահովում բնույթան ուժերի և իրենց փոխադարձ երկխոսությունը, ապա այսօր նման երևույթները համարվում են անհմաստ:

ՍԱՐԻՆԵ ՀԱՐՈՅԱՆ (ԳԱԹ)

ԳՅՈՒՄՐԻՆ ԿԱՐԱՊԵՏ ԿՈՍՏԱՆԵՅԱՆԻ ԾՈՒՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հայագետ, մանկավարժ Կարապետ Կոստանյանը բողել է հարուստ ժառանգություն: Կ. Կոստանյանը մանկավարժական գործունեությանը զուգընթաց գրավել է նաև գրականությամբ և բանագիտությամբ, իեղինակ է ավելի քան հարյուր բանասիրական աշխատությունների: Նա ուսումնասիրել է հրատարակել է միջնադարյան հայ տաղերգուների ժո-

դուշածուներ, գրական մի շարք անհայտ գործեր, զրի է առել ժողովրդական բանահյուսության և աշուղական երգերի բազմաթիվ նմուշներ, որոնց ձեռագիրները գտնվում են Գրականության և արվեստի բանգարանում պահպառ նրա մեծածավալ արխիվում (2290 միավոր վավերագիր): Պահպանվել են նրա ոչ միայն տպագրած, այլև մի շարք արժեքավոր անտիկ գործերի ձեռագրեր:

Կ. Կոստանյանը ծնվել է 1849թ. Ալեքսանդրապոլում: Ալգրենական կրթությունը ստացել է տեղի U. Աստվածածին եկեղեցու հոգևոր դպրոցում, 1865-1870թթ. ստորեկ է Թիֆլիսի գիմնազիայում, այնուհետև ընդունվել և 1878-ին ավարտել է U. Պետերբուրգի համալսարանի Արևելյան լեզուների ֆակուլտետոր: Պատաճի հասակից դրւու զարով Ալեքսանդրապոլից՝ երբեք յի կտրել կապը ծննդավայրի հետ: Այդ են վկայում դեռևս նրա կենդանության օրոք Ալեքսանդրապոլում երատարակված «Ներսն Ե Աշտարակեցի» (1909թ.) աշխատությունը և «Գրիգոր Սագհատրոսի բղթերը» (1910թ.):

1. «Գյումրին և յուր բարբերը» ազգագրական ակնարկում կարևոր փաստեր, ազգագրական մանրամասն նկարագրություններ կան բաղադրի բնակչության կազմի, սովորույթների և բարբերի առանձնահատկությունների մասին:

«Ի՞նչ երգեր էինք լսում մեր մանկության օրերում» հիշողության մեջ կամ Գյումրիում տարածված ժողովրդական, աշուղական, հոգևոր երգերի տեքստերի և կատարումների նկարագրություններ: Ուշագրավ տեղեկություններ կան աշուղական ավանդությունների, դպրոցներում կատարվող երգերի, տեղացի երգահանների և ընդհանրապես քաղաքի երաժշտական կյանքի վերաբերյալ, որոնք այլ աղբյուրներում չեն համարվում:

«Մանկութեանս Գյումրին» հիշողությունը կազմված է չորս գլուխներից՝

ա) U. Աստվածածին եկեղեցու,

բ) U. Աստվածածին եկեղեցու տիրացուները,

գ) Ուխտագնացություն,

դ) Գյումրվա հոգևոր դպրոցը:

Իր ինքնակենսագրությունը և հոր՝ Հովսեփ քահանա Կոստանյանի կենսագրությունը ներկայացնող ծավալում հուշագրություններում հետաքրքիր մանրամասներ կան հատկապես ընտանեկան կենցաղի, տոնների, ծեսների, քաղաքի դպրոցների, ինչպես նաև XIX դարի վերջերին ծևազորվող մտավորական խավի, նրա դերի և այլ խավերի հետ փոխհարաբերությունների մասին:

ՀԱՍՏԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ (ԾՀՀԿ)

ԳՅՈՒՄՐՈՒ ՀԻԽ Դ. ԱՎԱՆՈՎԿԱՆ ՆՎԱԳԱՐԱՍԱՅԻՆ
ԵՐԱԺԵՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՇՈՒՐՅ

Քաղաքային երաժշտական մշակույթը հաստկանչվում է իր բազմա-
բնույթ դրսարությաներով: Երանք պայմանավորված են մի կողմից ազգա-
յին ավանդական արժեքների պահպանումը և զարգացման ընթացքով,
մյուս կողմից արտազգային ամենատարրեր շփումներից եկող նորամու-
ծություններով:

Գյումրին իրեւ հարուստ երաժշտական ավանդույթներ ունեցող քա-
ղաք, ունուս XIX դ. երկրորդ կեսին ներկայանում է բավական ճախ բնու-
թագույք. ազգային աշուղական դպրոցի հիմնադրում, երաժիշտ - կատա-
րողների արհեստավորական համբարության ստեղծում, սազանդարային
արվեստի ծաղկում, կովկասյան, եկրոպական և ոռոսական երաժշտական
մշակութային երևույթների հպանցիկ ազրեցություն: Եթե աշուղական ար-
վեստում իրեւ կարևորագույն բնորոշչ է դիտվում ազգային հիմքերի ամ-
րապնդումը, ապա քաղաքային նվազարանային երաժշտության մեջ տե-
ղի է ունենում այնպիսի յորօհինակ մի երևույթ, ինչպիսին արտազգային
երաժշտական իրակությունների հիմքնորինակ «յորացումն»: Ընդ որում,
փոխլրացման և փոխհարստացման ընթացքում համալրվում է ոչ միայն
ավանդական սազանդարական անսամբլի երկացանկը, այլև, որոշ դեպ-
քերում նաև ինքը՝ անսամբլը: Օրինակ՝ ավանդական երկու դրույկ և դիո-
լին միանում են նաև կարճետքը, կիբառը, մանրոլինան և այլն:

ՈՒշագրավ է այն փաստը, որ բազմաթիվ նոր երևույթներ սահմանա-
փակվել են միայն նվազարանային արվեստի շրջանակներում: Իրեւ փայ-
լուն օրինակ նշենք, որ այստեղ արևելյան մասնագիտացված դասական
արվեստի՝ մոլամի միայն նվազարանային տիպն է զարգացել, կամ էլ այլ
ժողովուրդների բազմաթիվ երգեր (օրինակ՝ ոռոսական հայտնի «Սոլովե-
յը») հիմնականում կատարվել են նվազարանային մեկնարանություննե-
րով: Պեսոք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ քաղաքային հե-
շող միջավայրում ընդունված է եղել հանրածանոթ և առավել սիրված եր-
գերի նվազարանային տարրերակների ունկնդրությունը: Այսպիսով, Գյումրու
սազանդարական արվեստում, բացի ավանդական երգերից, պարերից և
այլ եղանակներից, մշտապես համալրվել է այլազգային տարրը՝ համա-
պատասխան արտահայտչամիջոցներով: Այս դեպքում մենք առավել կա-
րևորում ենք ազգային մանողիկ և այլազգային ոչ մոնողիկ երաժշտա-
մտածողության ինքնորինակ «սինթեզը»: ՈՒ թեև ազգային երաժշտա-
մտածողության տիպական գծերը (օրինակ՝ դամբ կամ տարրեր նվազա-
րանների ունիտն ինչողությունը) հիմնականում պահպանվել են, սակայն
ինչպես ցոյց են տվել երաժշտագիտական հետազոտությունները,

այստեղ տեղի է ունեցել նորամուս տարրերի (հատկապես՝ օկտոպավային ծայնակարգերի, որոշ տիպական զարդելսէջների և այլն) արդյունավետ «ինտեղրացունք»:

Այսպիսով՝ արդեն XX դարակզբում Գյումրու ավանդական նվազարանային երաժշտությունը մի ինքնատիպ որրու է, որտեղ ավանդական նվազացանը մի կողմից հարստանում է նոր արժեքներով, մյուս կողմից՝ ազգային իհմքերի վրա փորձարկվում են նոր երաժշտարարահայտչածներ, որոնք առավել գնահատելի են դառնում վարպետ երաժիշտների կողմից: Այս երևոյթը կարևոր դեր խաղաց XX դարակզբին եվրոպական մասնագիտացված երաժշտարվեստի նորահունչ արժեքների վերահմաստավորման (հայցման) գործընթացում:

ԱՆԱՀԻՏ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ (ԱԻ)

ԸԱՅ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԾԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՐԳԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՒՄ

1. Ներկա հաղորդման առարկան Ալեքսանդրապոլում XIX դ. և XX դարասկզբին տարածված հայ աշուղական հայրենասիրական երգերն են, որոնցից շուրջ 81 նմուշ (47-ը՝ ծայնագրյա) դիտարկել ենք «Հայրենասիրության թեման հայ երաժշտության մեջ» մեր ուսումնասիրության շրջանակներում: Առաջնարդվել ենք Ա. Բրուտյանի «Օամնկական մրմուճներ» «կորողային» (Ա. Բրուտյան) ծայնագրյալ ժողովածուի երկրորդ հասորով (Եր., 2002): Հիմք են ծառայել նաև «Ծիրակի հայ աշուղները» արժեքավոր ժողովածուն (Եր., 1986) և աշուղական երաժշտության այլ հրապարակումներ:

2. Ինչպես հայտնի է, հայրենասիրության զարափարք քննորոշ է հայ աշուղական երգարվեստին, որ հասունական սրվեց XIX դ. և XX դ. սկզբին տարրեր պատերազմներով, զարթերով, կոտորածներով, նաև ազատագրական շարժմամբ առեցուն ազգային կյանքի պայմաններում: Այս իմաստով Ալեքսանդրապոլը «Հայաստանի աշուղական երկրորդ՝ Նոր դպրոցի կենտրոնը» (Գ. Լևոնյան) առանձնահատուկ նշանակություն ունեցավ: Այստեղ լիարոք հնչեց հայ աշուղների հայրենաշունչ քնարը, լայնորեն տարածվեցին «Խիստ շեշտված հայրենասիրական» երգերը (Ա. Բրուտյան):

3. Հեղինակներն էին իհմնականում քաղաքում քնակվող և ստեղծագործող աշուղները (շուրջ 16 անուն):

4. Երգերի լեզուն գրական աշխարհաբարն է, մեծ մասսամբ (երգերի ընդհանուր թվի մոտ 75%), համեմակած հայոց լեզվի «Կ» մյուսի Կարմր բարբառին հասուլ խոսքերով, արտահայտություններով, նաև բառերի հնչյունափոխության, հոլովիման և խոնարհման այլայլ ձևերով:

5. Կիտարկվող երգերում հայրենասիրության գաղափարը ներկայացված է իմաստային երկու նշանակությամբ. ա) առկա են հայրենասիրական երգին հաստուկ ավանդական քենաները՝ սեր, կարոտ հայրենի երկրի, ժողովրդի նկատմամբ, գովք լեզվին և այլն, բ) երգերի գերակշռող մասը (56 նմուշ) նվիրված է ժամանակաշրջանի ազգային կարևորագույն խնդրին՝ Արևմտյան Հայաստանի և արևմտահայոց ողբայի վիճակին և օսմանյան լծից ազգատագրման անհրաժեշտությանը: Վերջիններս փորձել ենք դասակարգել և դիտարկել խմբերով. երրոսական երգեր, պատմական երգեր, այլարանական երգեր: Դրանցից մասնավորապես այլարանական երգերը առանձնանում են բազմաքանակությամբ (29 նմուշ) և այլարանական կերպարների (զարուն, առավոտ, լուսին, արեգակ, ծով, այգի, կոռունկ, սիրուի, սգազգայց կին) բազմազանությամբ: (Հիմնադրույթների հաջորդ 6, 7, 8, 9, 10 կետերը կազմել ենք դիտարկվող երգերի վերոհիշյալ 47 ճայնագրյալ նմուշների վերլուծության հիմքով):
6. Երգերի ոտանակորները բաղկացած են բառասող (այս կատույցները ակնհայտորեն գերիշխում են՝ 22 նմուշ), նաև 5, 6, 7, 8-տողանի տներից, որոնք հաճախ երգի ընթացքում ի հաշիվ միջին կամ վերջին տողերի կրկնության, ծավալով մեծանում են: Բազմազան է տողերի վանկային կառուցվածքը՝ 6-վանկանուց մինչև 16-վանկանի, որոնց մեջ սակայն մեծ տեղ ունեն 11-վանկանի, և ապա 8-վանկանի տողերը, հատկապես ոտանավորների սկզբում:
7. Երգերի ընթացքը (տեսաը) հիմնականում «Չափավոր»-ն է կամ «Սիջակը» (26 նմուշ):
8. Երգերին հատուկ է մեղեղիական խառը ոճը (41 նմուշ): Վերջինիս գոյացման մեջ տվյալ դեպքում մեծ տեղ ունի վանկային մեղեղիական ոճը, որը զուգորդվում է մերը ներվանկային ոճի, մերը՝ և ներվանկային, և զարդողորուն ոճերի հետ միաժամանակ: Վերջինս՝ վանկային-ներվանկային-զարդողորուն խառը ոճը հատկապես բնորոշ է Զիվանու հայրենասիրական երգերին, որտեղ երգի իմաստային բովանդակությունը մարմնավորող ջիվանիական անկրկնելի՝ կամ, պարուսով յի ասերզը փոխակերպվում է հոգումնալից բացականշությունների («ախ», «ավաղ» և այլն)՝ լայնաշունչ եղանակավորմամբ:
9. Երգերի բացարձակ մեծամասնությունը (մոտ 90%) հորինված է հայ մոնղիկ երաժշտության ձայնակարգային համակարգում: Առկա են լայն ձայնածավալի՝ յորնյակ, ոքյակ, իմնյակ, տասնյակ ձայնամիջոցով, երկ կամ եռողակ, բազմահնչյուն՝ յոթալար, ութալար, իմնալար, տասնալար ձայնակարգային կառույցները: Գերակշռում է դորիական-էուսական միջնորդը: Հանդիպում են նաև փոյտգիական, լոկրիական և հարմոնիկ ձայնակարգերը: Երգերից չորսը ծավալում են եւլորպական տիկափ օկտավակային մաժոր (կրկնակի հարմոնիկ) և մինար (հարմոնիկ) ձայնակարգերում:

10. Երգերի տաղաչափական հենքը մեծ մասամբ կազմում էն շեշտված կամ երկար ավարտով բազմապիսի ուորեր: Դրանք են՝ եռամաճակ մեծավերը, քառամաճակ համբաւը, վերջատանջը, երմանաճակ չորրորդ պետնը, վեցամաճակ առաջին իռնիկը, յորամաճակ առաջին էպիտրիսը և այլն, որոնք «համապատասխանում են հայերենի առողանությանը և բանաստեղծության տաղաչափական օրենքներին. անդամի և տողի շեշտով ավարտվող վանկը համբանում է երկար (երկամաճակ, եռամաճակ) երգվող վանկի հետ» (Վ.Խուզաբաշյան):

Ալեքսանդրապոլսի տարածված աշուղական հայրենափրական երգերի երաժշտառեսական քննության ընթացքում նշնալվեցին որոշակի ընդիհանուր եզրեր՝ Հայոց ցեղասպանությանը նվիրված ժողովրդական երգերի կառուցվածքային մի շարք հատկանիշների հետ: Այս հաճամաճքը մտադիր էնք հետազայտում դիտարկել և, ընդգրկելով երգային այլ նմուշներ, մանրամասնորեն հետազոտել, որ, կարծում ենք, նպաստավոր կլինի XIX-XX դր. հայ հայրենափրական երգի ամբողջական դիմագծի բացահայտման համար:

ՆԻՆԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ (ԵՊԿԳՄ)

ԿՈՄՊՈՋԻՇՈՐ ԱՀԱՍ ՇԻՇԱՎԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏՍՈՒԹՅԱՆ ՄՆԱՅԻՆ ԱՐԺԵՔ

Կոմպոջիշոր, երաժիշտ-տեսաբան, մանկավարժ, հասարակական գործիչ Ազատ Շիշյանի անոնք թեև հայտնի չէր հայ երաժշտասեր լայն հասարակայնությանը, սակայն մասնագետ երաժիշտներից շատերի համար այդ անոնքը քանի էր ու նվիրական: Նա սերնդակիցն էր այն հայ կոմպոջիտորների, ում ստեղծագործական կյանքը վերելք էր ապրել XX դարի 60-80րդ.:

Երևանի Կոմիտասի անվան կոմսերվատորիայի կոմպոջիշյայի դասարանն ավարտերուց անմիջապես հետո նրա ստեղծագործական ուղին ծավալվեց Լենինականում, որտեղ նա ստեղծագործեց մինչև կյանքի վերջին օրը: Խորապես կապվերդ քաղաքի մշակութային արժեքներին, նա միևնույն ժամանակ անհաղորդ չմնաց հայ կոմպոջիտորական արվեստի արդիական պահանջներին, մշտապես մասնակցելով Հայաստանի կոմպոջիտորների Միության ստեղծագործական հավաքներին, պիեսումներին՝ ներկայացնելով իր մեծաքանակ ստեղծագործությունները: Դրանցից առավել նշանակալի են. չորս սիմֆոնիաները, սիմֆոնիկ սղումներն ու պատկերները, նախերզամքները, վոկալ-սիմֆոնիկ, կամերային, երգախմբային ստեղծագործությունները, ինչպես նաև երգերն ու ռոմանսները, երաժշտությունը դրամատիկ ներկայացումների համար: Իր որույն ոճա-

կան բնութագրի մեջ Ա. Շիշյանի ստեղծագործությունն աչքի է ընկնում դասական (հատկապես՝ նեռլասիցիզմին հատուկ) և ազգային երաժշտական արժեքների խնդասիս միահյուսման կարողությամբ։ Դա վերաբերում է ոչ միայն սույն երաժշտատեխնիկական հնարանքների համալրին, այլև երաժշտական կերպարների էմոցիոնալ-բովանդակային աշխարհին։ Կոմպոզիտորի գեղագիտական սկզբունքները հիմնականում հեճական են նրա գեղարվետական աշխարհայցքի վրա։ Նրա գեղագիտական իդեալը հոգևոր գեղեցկությամբ լեցուն էրիկական նորմերի մի համալիր է։

Երաժշտական համեստ մթնոլորտի մեջ անգամ Ա. Շիշյանը նախընտրում էր արծարծել դարի մեծագույն զաղափարներն ու ժամանակի հուզող խնդիրները։ Խայրենիք, հերոսություն և անձնազոհության մղում, քաղաքացիական բարձր արժեքներ, սիրո քնար և այլն։ Սրանք են կոմպոզիտորի արվեստի բովանդակային ոլորտները։

Ոչ պակաս կարևոր էր նաև Ա. Շիշյանի երաժշտահասարակական գործունեության դերն ու նշանակությունը Լենինականի մշակութային կյանքում։ Նա ոչ միայն միակ «կենդանի» կապն էր քաղաքի և հայ կոմսպոզիտորական դպրոցի միջն, այլև հմուտ մանկավարժ էր, որը երկար տարիներ իրեն նվիրեց նաև մասնագետ երաժիշտներ կրթելու նվիրական գործին։ Լենինականի Կարա-Մուրզայի անվան երաժշտական ուսումնարանու։ Ենթադրական չէ, որ նրա դասարանում են ստեղծագործական մկրտություն ստացել կոմպոզիտորներ՝ Տ. Մանսուրյանը, Ե. Երկանյանը, Մ. Խարայելյանը, Ա. Ներսիսյանը և այլոր։

Զաղաքի երաժշտական մշակույթի կյանքում կարևորվում էր նաև Հայաստանի երգչախմբային ընկերության մասնաճյուղում կոմպոզիտորի սկզբունքային և ստեղծագործ աշխատանքը, որն իր բարենպաստ ազդեցությունն էր բողնում քաղաքի երգչախմբային արվեստի զարգացման վրա։ 1988թ. աղետայի երկրաշարժի ժամանակ իր ողբերգական մահկանացուն կնքած կոմպոզիտորի ստեղծագործական ժառանգության հիմնական մասը անհետ կորավել է։ Այս պատճառով երախտահատուց մի գործ պետք է համարել կոմպոզիտոր Ազատ Շիշյանի անձնական արկսիմի համարման և նրա ստեղծագործական ժառանգության պահպանված նմուշների անդառնալի կորսարից պահպանանն ուղղված աշխատանքները։

ՀԱՍՏԻԿ ԱՓԻՆՅԱՆ (ԾՀՀԿ, ԵՊԿԳՄ)

ԼԵՂԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԻ ԱՐԴԻ ԵՐԱԺՏՏԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

Պատմազգագրական տեղեկությունները Լեռնակերտը (մինչև 1948-ը՝ Շիրվանջուղ) Շիրակի մարզի բարձր լեռնային գյուղերից է՝ տեղակայված

է Արագածի ստորոտում և զոնվում է նախլին շրջկենտրոնից՝ Արքիլ քաղաքից դեպի հարավ 6 կմ հետավորության վրա: Գյուղը հիմնադրել են 1830թ. Ազաշկերտից և Մուշից եկածները, հետազայտ այստեղ բնակություն են հաստատել Սահազկերտից և Իգդիրից գաղքած ևս մի քանի ընտանիք (ՀԽՍՀ հանրագիտարան, հ. 4, Եր., 1978, էջ 572: Լ. Վարդանյան, Հ. Պետրոսյան, Շիրակի 1926-27թթ. գաղքականության հարցեր (ըստ Ստ. Լիսիցյանի արխիվային նյութերի), ԳԱԱ ԸՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 2, Գյումրի, 1999, էջ 210): Լեռնակերտում և նրա շրջակայրում պահպանվել են պատմաճարտարապետական հոլշարձաններ: Հատկապես հիշատակության են արժանի գյուղական գոնվող միանալ եկեղեցին (IV-V դդ.) Պողոս-Պետրոս Սահարձանը՝ խաչքարերով (XII-XIII դդ.), կիկլոպյան երկու ամրոցները, որոնք հնագույն բնակավայրի ամենավաղ վկայություններն են: Գյուղը հարուստ է բուժական հատկանիշներով օծուկած առյուղներով, կան մատուռներ, սրբավայրեր: Լեռնակերտն այժմ ունի 310 տնտեսություն, գործում են միջնակարգ դպրոցը, մանկապարտեզը, մշակույթի տունը, գրադարանը, բուժկետը: Բնակչության հիմնական գրադանքը՝ հողագործությունը, հացահատիկի և կերային կուտուրաների մշակությունն է, նաև անասնապահությունը: 1988թ. երկրաշարժը ծանր վնասներ է հասցրել գյուղին: Գերմանական կազմակերպությունների աջակցությամբ աղետից հետո այստեղ կառուցվել են 50-ից ավելի տներ, վերականգնվել է դպրոցը: Հարցումներից պարզել ենք, որ գոյատևման հիմնական միջոցը գյուղի տղամարդկանց արտագնա աշխատանքն է, իսկ տանը մնացած կանայք հիմնականում գրադաժ են ընտանիքի, տնտեսության կառավարման խնդիրներով: Լեռնակերտցիների առօրյա խոսակցական լեզվում պարզուց նկատելի են խոսվածքի երկու ենթատեսակներ. մեկը գյուղի մեջ և ընտանեկան կենցաղում գործածվող Մշո և Ալաշկերտի բարքարների խառնուրդն է, որը հարազատուն պահելի և փոխանցվել է սերունդներին, մյուսը՝ Գյումրու արդի խոսվածքը, որն իրու հաղորդակցման և փոխընկալման միջոց հիմնականում կիրառվում է գյուղից դուրս, արտաքին շփումների ժամանակ:

Մեր դիտարկումները կատարել ենք 2003, ապա նաև 2004 թթ. բանակավարչական գիտարշավմերի բնբացքում կատարած ձայնագրությունների հիմնան վրա: Գրառված ծողովդագրական հարուստ նյութը կարելի է դասակարգել հիմնականում երկու խմբի. ա. ազգագրական, բանահյուսական, թ. երածշտական:

ա. Այս խմբի մեջ ընդգրկված նյութերը ներկայացնում են լեռնակերտցիների արդի կենցաղը, կայուն պահպանված ու նաև փոփոխված սովորությունները, ծեսերը, հավատալիքները, կրոնածիսական պատկերացումները, ինչպես նաև կենցաղակարող բանահյուսական ժանրերի նմուշներ: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գյուղի տղամարդիսական համալիրը որոշակի փոփոխություններ է կրել: Հնում պարտադիր համարվող առան-

ծին սպորտություններ, արարողակարգեր, ժամանակի պահանջով դուրս են մղվել առօրյայից և կորսվել: Թերևս դրանով է բացատրվում ծիսական միշտը երգերի՝ մոռացության ենթարկվելու փաստը: Առանձին արարողակարգերի, ինչպես օրինակ՝ հարսանելեան ծիսակատարությունն է, հասուկ ուշադրություն է հատկացվում: *Տարատեսակ նորանուժությունների հետ մեկտեղ պարտադիր պահպանվում են ավանդականորեն փոխանցված սպորտություններ, որոնք իրենց ծագմամբ վաղաճական ժամանակներին են առնչվում: Ուշագրավ է, որ վերջերս զյուղի նորոգված եկեղեցու գործունեությունը լուրջ խրան է դարձել ժողովրդական սուսների, ընտանելեան, կրթածիսական արարողությունների (ծնններ, մկրտություն, պասկադրություն, հիշատակի օրեր և այլն) վերածնության համար:* Գրառված բանահյուսական նյութերում ավանդական ժանրերի կողքին (հեքիաթ, սիրավեպ, ավանդագրույց) լայնորեն կենցաղակարս են նոր ժամանակների կնիքը կրող եղբանումներ (անեկդոտ, զվարծավառություն և այլն): Դժվար չէ նաև նկատել գրական գեղարվեստական սյուժեների, որոց թեմաների, սիրված կերպարների ներքափանցումը բանահյուսություն, որոնք մշակվելով՝ ժողովրդի կողմից ինքնուրույն կյանք են ստացել: թ. Լեռնակերտից երաժշտարանահյուսական նյութերի ավելի վաղ գրառումներ մեզ հայտնի չեն: 1976թ. երգային նմուշների մի հարուստ փունջ այստեղ ճայնագրել է պրոֆեսոր Մարգարիտ Բրուտյանը (տե՛ս Երևանի Կոմիտասի անվան պետական գրադարանը): Կոմիտասուրիայի հայ ֆոլկորագիտության ամրիոնի ժողովրդական երաժշտական ստեղծագործության ամբողջ ճայնագրությունների ֆոնդում, «Արքիկ-1976» գիտարշավ): Այդ շարքից երեք երգ՝ «Փորձություն է պատերազմը», «Երգ բանանցիների մասին», «Կերք քաղաքի զիսի լալեն» տպագրվել է Հայրենական պատերազմին նվիրված երգերի ժողովածուում (Հայրենական Սեծ պատերազմը հայ ժողովրդական և գուսանական երգերում, կազմողներ և խմբագիրներ Մ. Բրուտյան և Ա. Փակելամյան, Եր., 1995):

Լեռնակերտ կատարած մեր երկու այցելությունների ընթացքում (2003թ. Խոկտեմբեր, 2004թ. մարտ) գրի են առնվել երաժշտական բանահյուսության շուրջ 100 նմուշներ: Կենդանի շփումը երգասացների հետ, ապա և գրառված նյութի դիտարկումը ցույց է տալիս ժողովրդական երգի պահանջը կրողի, ավանդույթը փոխանցողի և ժառանգործի փոխարարերությունը: Զայնագրել ենք տարիքային տարբեր խմբերի կատարողների: Նյուրը բազմաշերտ է, բազմաժանք. ողբերգ, հարսանելեան երգաշարի նմուշներ, պարերգեր, բարոյախրատական, հայրենասիրական, քնարական, աշուղական, սոցիալական մոտիվներով, ժամանակի իրադարձություններն արտացոլող երգեր, օրորներ, մանկախսաղաց երգեր, աշուղական պիրավենակերպ դրվագներ և այլն: Առանձին վերաբերնունունք և գնահատական կա «Ասիլ- Քյարամ», «Սմբատ և Սովյա», «Աշուղ Ղարիբ» սիրավեպերի հանդեա: Դրանք պահպանված են հատվածարար, մեծամասամբ

առանձին երգիր կտորներով։ Որոշ դեպքերում նկատվող երածշտական կերպարների միօրինակությունը, հետդիպող մեղեդային կաղապարների կրկնությունները, հնագույն ժամանակներից ավանդականորեն փոխանցված ժողովրդական բանաձևային երածշտամտածողության արգասիք են։ Ու թեն կատարումներում զգացվում են ժամանակի թելադրած ինչ-ինչ փոխանցմաններ, այդուհաներձ դրանք արժեքավորվում են իրեն բանավոր ավանդույթի նմուշներ և ժողովրդական կատարողական արվեստի՝ «երգով ասելու» օրինակներ։

1970-ական թթ. զյուղն ունեցել է նվազածուների խումբ (դրույկ, զուռնա, կլարինետ, դաֆ և դիու կազմով), որը մասնակցել է զյուղական բոլոր արարողություններին և ստուներին։ Այսօր դրանց փոխարինում են նոր էլեկտրոնային գործիքները՝ սինթեզասուրը, էլեկտրոնային դաշնամուրը, իսկ ավանդական նվազարանները տեսերում պահպում են որպես ընտանեկան մաստենքներ։ Լեռնակերտում գործել ենաև ժողովրդական (ազգագրական) պարերի խումբը։ Երգացանկ-պարացանկը հուշում է հնագույն շերտ՝ ծիսական հարուստ երգաշարով։ Սաքմայի, շորորի, քոչարու, դուզ պարի, թարս պարի տարբերակներում ժառանգորդ ավանդակիրը շեշտում է տեղային բնորոշչիների առանձնահատկությունը։ Լեռնակերտում գրառված խառն ամբարված նյութի մեջ ընդգծված է ավանդական արժեքի գիտակցումը։

Ամենատարբեր տեսանկյուններից մերօրյա երգային ժառանգության գրառումը հետազոտական կարևոր դաշտ է՝ որպես ժողովրդական ինքնաստիք մտածողության դրսւորում, աշխարհը սեփական ոսպնյակով դիտարկելու և ապա վերարտադրելու պարագա։ Գրառված նյութի մեջ չենք բացառում նաև ավանդականի, մասնագիտացված երածշտորթյան, այսօրվա կենցաղավարող երգի «Չուկայի» անբարենպաստ փոխազդեցությունը։ Իրարից տարբեր, արժեքային իմաստով ոչ համազոր մրցակցության պայմաններում իր կենսունակությունը պահող ժողովրդական երգն, այնուամենայիկ շարունակում է իր գոյակերպը։

Ն. ՄԱԿՈՅԱՆ (ՀՊՁ)

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԾ 1880-90-ական թթ. ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ
(ըստ լուսանկարների հավաքածուի)**

Ալեքսանդրապոլի մասին բազմանյութ՝ պատմական անցյալի, ազգագրական, ճարտարապետական, կենցաղային հետաքրքիր տեղեկություններ կարելի է քաղել՝ ձեռքի տակ ունենալով 1880-1890-ական թվականների լուսանկարները, որի համառոտ խմբավորումը ստորև նշում ենք։

1. Ալեքսանդրապոլի ընդհանուր տեսարանները պատկերացում են տայիս քաղաքի ճարտարապետական կառույցների մասին, որտեղ ընդգծված է տանձնահատուկ ազգային դիմագիծը:
 2. Ալեքսանդրապոլի ընտանեկան լուսանկարների միջոցով ժանուարնում ենք քաղաքաբնակների կենցաղին, սոցիալական դիրքին և վիճակին: Առանձին ուսումնասիրության նյութ է ալեքսանդրապոլի տարազը, կիրառական արվեստի առարկաները (ժառայող կահույք, գործվածքներ և այլն):
 3. Ազգագրագնների համար առանձնակի հետաքրքիր են արհեստավորների և արհեստանոցների լուսանկարները: Նաև առանձին խումբ են կազմում կենցաղային արարողակարգին վերաբերող լուսանկարները (օր՝ հացրուխի լուսանկարը):
- Եկեղեցական նշումների լուսանկարները համապարփակ պատկերացում են տալիս Ալեքսանդրապոլի գործող եկեղեցիների ծխական, արարողական իրերի մասին:

ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ (ԳԸՀ)

ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՍԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՅ ԺԻՐԱԿԻ ՄԱՐԴՈՒՄ 1988-2003ԹԹ.

1. 1988թ. դեկտեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետության տարածքում տեղի ունեցած ավելիչ երկրաշարժը պատճառեց հսկայական նյութական և բարոյական վնասներ: Զգայիրեն տուժեց մեծությամբ և նշանակությամբ հանրապետության երկրորդ քաղաքը՝ Գյումրին, որտեղ ավելիվեցին բնակելի, հասարակական և արտադրական շենքերի 80%-ը: Չորս տասնյակ վայրկյաններում Լենինականում ավելվեց կամ կիսափուլ դարձալ 774 շինուրյուն: Ըստրից դրան եկալ շինուարական ինքուսորիայի զգալի մասը: Աղետից վրարվեցին կամ քանդվեցին նաև առևտիք, հանրային սննդի, կապի, տրանսպորտի, կոմունալ տնտեսության մեծաքանակ օրինեկուներ, ինչպես նաև պատմական հուշարձաններ, հանրակրթական դպրոցներ, նախադպրոցական հիմնարկներ, առողջապահական հաստատություններ: Երկրաշարժի հետևանքով տարրեր աստիճանի վնասվածություն ստացած բնակարանային ֆոնդը կազմել է 8.9 մլն մ² ընդհանուր մակերեսով բնակելի տներ, որից 3.6 մլն մ² Շիրակի մարզում:

2. Շինարարական, կազմակերպչական աշխատանքները կոորդինացնելու նպատակով դեկտեմբերի 7-ին Սուվորայում ստեղծվեց երկրաշարժի հետևանքները վերացնելու հանձնաժողով՝ ԽՍՀԿ ԿԿ Քաղյուրյուի անդամ, ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահ Ն.Ի.Ռիմկովի ղեկավարությամբ, որը դեկտեմբերի 8-ին ժամանեց Երևան, մեկնեց

աղետի գոտի և սկսեց իր անմիջական աշխատանքը աղետի հետևանք-ները հաղթահարելու ուղղությամբ:

Վերականգնման աշխատանքները կորողինացնելու նպատակով ԽՍՀԿ Կենտկոմի քաղյուրոն 1988թ. դեկտեմբերի 28-ին ընդունեց հա-տուկ որոշում:

Երկրաշարժի արհավիրքների վերացման և սուժածներին օգնություն ցոյց տալու գործիմ իրենց մասնակցությունը բերեցին Խորհրդային Արտ- բյան տարրեր շրջաններից և արտասահմանյան գրեթե բոլոր երկրներից եկած մասնագետները և զինծառայողները:

3. ԽՍՀՄ վիլուրումից հետո իրականացվող աշխատանքների ամրուց ծանրությունն ընկալվ հանրապետության շինարարական համալիրի ուսե- րին: Վերականգնման աշխատանքները ավելի արդյունավետ կլիմերին, երեւ չիներ 1989թ. սեպտեմբերից Աղբեջանի կողմից իրականացված շրջափակումը, ինչպես նաև պատերազմը Լեռնային Ղարաբաղում և Հա-յաստանում տիրող սոցիալ-տնտեսական և էներգետիկ ճգնաժամերը:

Ստեղծված իրավիճակից դուրս գալու, վերականգնողական աշխա- տանքներին նոր լիցք հաղորդելու համար ՀՀ կառավարությունը 1994թ. հունվարի 7-ի թիվ 17 որոշումով հաստատեց աղետի գոտու վերականգ- նման նոր ծրագիր, որով ճշտվեցին երկրաշարժի հետևանքով սուժած բնակավայրերի առանձին ոլորտների վերականգնման ենթակա ծավալ- ները, պահպանով նախորդ ծրագրի հիմնական մուտքումները և աղետի գոտու վերականգնման ժամկետը երկարաձգվեց մինչև 2000թ.:

4. Աղետի գոտու վերականգնման գործընթացի վերաբերյան ար- դյունքները կանխորշեցին աղետի գոտու բնակավայրերի վերականգ- նման քաղաքականության ճշգրտման անհրաժեշտություն: Արդյունքում ՀՀ կառավարությունը 1998թ. նոյեմբերի 11-ի թիվ 701 որոշումով հաստա- տեց աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրի, որով առաջ- նային դարձան երկրաշարժից սուժած բնակավայրերի բնակարանային և սոցիալական ոլորտի խնդիրների լուծումը:

2001թ. ընդունվեց «Աղետի գոտու վերականգնման համալիր» ծրագիր, որով ճնապորվում էին աղետի գոտու վերականգնման պետական քաղա- քականության հիմնական սկզբունքները՝ դրամը գուգակցելով սուժած բնակավայրերում բնակության համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, տնակային տնտեսություններից տարածքների հիմնա- վորված ու հաջորդական մաքրմանը, այդ տարածքներում առկա խնդիր- ների լուծմանը:

2000 թվականից Աղետի գոտու վերականգնման աշխատանքներն առավել ակտիվացան հաստկապես Լինսի հիմնադրամի շրջանակներում, որի ներքուած միջոցները հիմնականում նպատակատղվեցին բնակարա- նաշինության իրականացմանը:

5. ԱՍՆ-ի Միջազգային զարգացման գործակալության և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2001թ-ից աղետի գոտում կիրառվում է «Քննակարանի զննան վկայագրեր» ծրագիրը, որի նպատակն էր անօրեան մնացած բնակչությանը ապահովել մշտական բնակարաններով, միաժամանակ շարունակելով վերականգնողական աշխատանքները տուժած բնակավայրերում:

Մարզի սոցիալ-տնտեսական հետազա առաջնորդացը և առևտ խնդիրների լուծումը պայմանավորված է արտադրատնտեսական ողորսի զարգացմով, որը նախ և առաջ պետք է հիմնվի հանրապետության ներքին հնարավորությունների վրա:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

- | | |
|-----------|---|
| ԳԱԱ | - ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա |
| ԱԻ | - ԳԱԱ Արվեստի ինստիտուտ |
| ԳԱԹ | - Գրականության և արվեստի թանգարան |
| ԳՊՄԻ | - Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ |
| ԳԸՀ | - Գյումրու «Խնամասատեր Ա. Շիրակացի» համալսարան |
| ԵՃԸԻ | - Երևանի ճարտարապետա - շինարարական ինստիտուտ |
| ԵԳԱԳՄ | - Երևանի Գեղարվեստի ակադեմիայի Գյումրու նախաճյուղ |
| ԵՊԿԳՄ | - Երևանի պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղ |
| ԵՊՀ (ԵԳԿ) | - Երևանի պետական համալսարան |
| ԹՀ | - Թրակիայի համալսարան, Հունաստան |
| ԼԻ | - ԳԱԱ Լեզվի ինստիտուտ |
| ԿԱԹ | - Գյումրու «Կոմայիր» պատմաճարտարապետական արգելոց-թանգարան |
| ՀԱԻ (ԻԱԷ) | - ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ |
| ՀԱՊԹ | - Հայաստանի ազգագրության պետական թանգարան |
| ՀՊԹ | - Հայաստանի պատմության թանգարան |
| ՀՊՄՀ | - Հայկական պետական մանկավարժական համալսարան |
| ԾԱԹԻ | - Ծարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ |
| ՍՄ | - Մաշտոցի անվան Մատենադարան |
| ՊԻ | - ԳԱԱ Պատմության ինստիտուտ |
| ԾԵԹ | - Ծիրակի երկրագիտական թանգարան |
| ԸՀՀԿ | - ԳԱԱ Ծիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն |

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Երկու խոսք	3
Արտակ ԳՆՈՒՄՆԻ (ՀԱԲ)	
Վաղ բրոնզի դարում Շիրակի, Զավախիրի և Տայքի բնակարանաշինական ավանդույթների գարգացման որոշ հարցերի շուրջ.....	6
Լարիսա ԵԳԱՄՅԱՅՆ (ԸՀՀԿ, ԾԵԹ)	
Սեպասարի վաղբրոնզիդարյան հուշարձանի պեղումները.....	8
Աշոտ ՓԻԼԵՊՈՍՅԱՆ (ՀԱԲ)	
Շիրակավանի աղեղները ու նրանց մ.ք.ա. I-II հազարամյակների զուգահեռները	9
Լևոն ԱՐԵՎԱԿՄՅԱՅՆ (ՀԱԲ)	
«Տապարացուլ» լարիբինիքոսում. բրոնզիդարյան մի հորինվածքի պարզաբանման շուրջ	12
Սարգիս ՊԵՏՏՐՈՂՅԱՅՆ (ԸՀՀԿ, ԳՊՄԻ)	
Արևատծու ՈՒՇԻՆ քաղաքը և նրա մակդիրները	15
Սարգիս ՊԵՏՏՐՈՂՅԱՅՆ (ԸՀՀԿ, ԳՊՄԻ)	
Վաճառ աստվածույթների երկրորդ գույզը	18
Արմեն ՊԵՏՏՐՈՂՅԱՅՆ (ՀԱԲ)	
«Կումայրի» տեղանվան շուրջ.....	21
Փելիքս ՏԵՐ-ՄԱՐՏԻՐՕՍՈՎ (ԻԱԷ)	
Պարաձ - Ճատակերտ - Ճրաշանակերտ	24
Լարիսա ԵԳԱՄՅԱՅՆ, Համազապ ԽԱԶԱՏՐՅԱՆ	
Անտիկ Շիրակի խոփերի հարցի շուրջ	27
Անայտ ԽՎԱՃԱԵՐՃՅԱՆ (ԻԱԷ)	
Рентгенопатологические наблюдения над костными материалами из некрополя Вардах <td>29</td>	29
Արծրումի ՍԱՀԱԿՅԱՅՆ (ՍՍ)	
Երվանդյան մայրաքաղաքի իիմնարկերի պաշտամունքային հայեցակարգը (Երվանդակերտ, Դրասխանակերտ)	31
Լուսին ՊԵՏՏՐՈՂՅԱՅՆ (ԸՀՀԿ, ԳՊՄԻ)	
Արշակ քազավորի օրոք տեղի ունեցած «Քովլարական» գաղրի մասին	33
Ֆրինա ԲԱԲԵԱՅՅԱՆ (ՀԱԲ)	
Անիի ջնարակած քասերի վրա պատկերված կերպարների նոր մենաբանույթուն	35
Աղավենի ԺԱՄԿՈՂՅԱՅՆ (ՀԱԲ)	
Միջնադարյան Հայաստանի ոսկեթել զործվածքնենի պատմությունից (Հաս Տիգրան Հոնենցի եկեղեցու որմնանկարի պատառիկ)	36
Արեգ ՀԱՍՐԱԹՅԱՆ (ԱԲ)	
Շիրակավանի Ա. Ամենափրկիչ և Արումի Ս. Գրիգոր տաճարների ճարտարապետության ժառանգործական կապը	37
Սուրան ՀԱՍՐԱԹՅԱՆ (ԱԲ)	
Ծփնդի կենտրոնագմբեր եկեղեցին	38
Լիլիթ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ (ԵՊՀ)	

Հայաստանի վաղքրիստոնեական եկեղեցիների բաց սյունարահների ֆունկցիոնալ և էպիստիկական նշանակության հարցի շուրջ.....	39
Աշուն ԳՐԻԳՈՐՅԱՆ (ԾԱԹԻ)	
Հատիճի վանքային համալիրի հորինվածքային առանձնահատկությունները խորհրդանշանային մտածողության տեսանկյունից	41
Նատալյա ԹԱՇԽՎԱԼՈՅԱՆ (ԵՃՉՊՀ)	
Հոռոմոսի վանական համալիրի եկեղեցիները	43
Արամ ՔԱԼԱՄԹԱՐՅԱՆ, Գաղիկ ՄԱՐԳԱՅԱՆ (ՀԱԲ)	
Հոռոմոսի վանքի նվիրատվական արձանագրությունները	45
Արմեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ (ՀՀՀԿ, ԳՊՄԲ)	
Գյումրի-Ալեքսանդրապոլի երես-ժողովրազրական և կրոնադավանաբանական պատկերը XIX դարի առաջին կեսին.....	46
Կարին ԱԼԵՔՍԱՆԴՐՅԱՆ (ՊԲ)	
1919-21 թթ. Ալեքսանդրապոլի գավառի կարչատարածքային կառուցվածքի և բնակչության հարցի շուրջ	48
Ինգա ԱՎԱԳՅԱՆ (ԿԱԹ)	
Սոսե Մայրիկի նորահայտ նամակի և լուսանկարի շուրջ.....	50
Գայանե ԾԱԳՈՅՑԱՆ (ՀԱԲ)	
Հայոց հարսանիքի «քերականության» որոշ դրույթներ.....	53
Ժենյա ԽԱԶԱՏՐՅԱՆ (ՀԱԲ)	
Օժիտի տիկնիկը Գյումրիում.....	55
Լիյա ԱՎԱՆԵՍՅԱՆ (ՀՊԹ)	
Երկերս կարպեսի եզակի մնուշ	56
Սվետլանա ՊՈՂՈՍՅԱՆ (ՀԱԲ, ՀՊԹ)	
Բարձր Հայրի զարդահամալիրը. զարդ և նշան	57
Սանվել ՄԿՐՏՉՅԱՆ (ՀԱԲ)	
Շիրակի բնակչության տոնական վարքագիծը հայ էքնովի ներեքնիկ խմբերի ընդհանուր համալիրում	59
Կարլ ՄԵՂՋՈՅԱՆ (ՀԱԲ)	
Ավանդական ճաշատեսակները շիրակցիների ուտեստի համալիրում	61
Արտաշեա ԲՈՅԱԶՅԱՆ (ԾՀՀԿ, ԾԵԹ)	
Ձկնորսությունն ու ձկնաբուծությունը Շիրակի արդի տնտեսական կենցաղում	63
Արմենուհի ՍՏԵՓԱՆՅԱՆ, Կարլ ՄԵՂՋՈՅԱՆ (ՀԱԲ)	
Երևանաբնակ լեմինականցիները (ազգագրական դիմագիծ)	64
Միհրան ԳԱԼԱՑՅԱՆ (ՀԱԲ)	
Երեսաների նկատմամբ կատարվող բռնությունները Շիրակի մարզում (բառ տղիղոգիսկան հետազոտության արդյունքների).....	66
Կարին ՍԱՀԱԿՅԱՆ, Ռոզա ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ (ԾՀՀԿ)	
Նեյրոլեզվարանական ծրագրավորման արդյունավետությունը Շիրակի մարզի ազգաբնակչության հոգեկարգավորման գործընթացում աղետից հետո	70
Հայկանուշ ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ (ԼԻ)	
Շիրակի բարբառը Շապոն Բագրատոսու «Պատմութիւն» գործում (X դար)....	72
Զեննա ԲԱՌՆԱՍՅԱՆ (ԼԻ)	
Տարվա եղանակների արտահայտությունը հայրենի բարբառներում.....	74
Խաչիկ ԲԱԴԻԿՅԱՆ (ԵՊՀ)	

Դարձվածային միավորները Շիրակի խոսվածքում.....	76
Հայկանուշ ՄԵՍՐՈՊՅԱՆ (ԼԻ)	
Արմատական ածականների հոմանշորյունը Կարն բարբառում	78
Իրմա ԲԱԲԱՅԱՆ (ԻԻ)	
Կ վօրոս օ իրավունքում լինելու առաջնային մասերում	80
Էլեֆերի ԽԱՐԱՑԻԴԻՍ (ՓԻ, Հրեցիա)	
Օսունություն էթնոկուլտուրայի ազգային առաջնային մասերում	81
Փեօփան ՄԱԼԿԻԴԻՍ (ՓԻ, Հրեցիա)	
Հայութական առաջնային մասերում	84
Արտակ ՍԱՐԿՈՎՈՅ (ՀԱԲ)	
Հայաստանի Հանրապետության բնակչության աճի միտումներն անկախությունից հետո	86
Համես ՄԱՐԳԱՅՅԱՆ (ՀԱԲ)	
Շիրակի մարզի բնակչությունն ըստ 2001թ. մարդահամարի արդյունքների	87
Ռուբեն ՕՀԱՆՉԱՆՅԱՆ (ՀԱԲ)	
Սահմանադրության ընտրությունների պայմանավորող գործոնների մասին	90
Անի ՄԱՐԳԱՅՅԱՆ (ԵՊՀ)	
Հակոբ Հակոբյանի «Լենինականյան բնանկարները».....	92
Արարու ՄԱՐԳԱՐՅԱՆ (ԵՊԱԳՍ)	
Մարդաբանական և երանուի սպամազյանների ժառանգությունը Գյումրիում	93
Լաուրա ԱԹԱՆԵՍՅԱՆ	
Հ. Անանիկյանի «Լենինականյան շարքը»	95
Կարինե ԲԱԶԵԹՅԱՆ	
Շիրակի արդի խեցեգործությունը	96
Մարինե ՀԱՐՈՅԱՆ (ԳԱԹ)	
Գյումրին Կարապետ Կոստանդնուպոլիսի հուշագրություններում	97
Հասմիկ ՍՏԵՓԱՆՅԱՆ (ԸՀՀԿ, ԵՊԿԳՍ)	
Գյումրու XIX դ. ավանդական նվազարանային երածտության բնորոշիչների շուրջ	99
Անահին ԲԱԴԴԱՄԱՐՅԱՆ (ԱԲ)	
Հայ աշուղական հայրենափրական երգը Ակեսանդրապոլում	100
Նինա ՀԱՅՐՄՊԵՏՅԱՆ (ԵՊԿԳՍ)	
Կոմպոզիտոր Ազատ Շիշյանի ստեղծագործությունը որպես Լենինականի մշակույթի պատմության մնայուն արժեք	102
Հասմիկ ԱՓԻՆԵՑՅԱՆ (ԸՀՀԿ, ԵՊԿԳՍ)	
Լեռնակերտ Գյուղի արդի երածտության բանահյուսությունը	104
Ն. ՍԱՎՈՅՅԱՆ (ՀՊԹ)	
Ալեքսանդրապոլ 1880-90-ական թթ. լուսանկարներում (ըստ լուսանկարների հավաքածուի).....	107
ԱՐԹՈՒՐ ՄԵԽԹԱՐՅԱՆ (ԳԸՀ)	
Աղետի գոտու վերականգնման գործընթացը Շիրակի մարզում 1988-2003թթ....	107